



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





Ի ԱՅԵՆԱԴՐԱՆԵ

ՄՇՀՀ ՎԱՐԱՆԻ ԳՐԱԿԱՂՄԱՐԵՐԻ

ՓԱՆԵԱՆՑ.

БИБЛИОТЕКИ


Мелькона Каспаровича

ПАНIEВА.

№ 1067

1999





ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՆՈՐ ԳՐԱԿԱՐ  
ԼԵԶՈՒԻ ՀԱՅՈՑ



Ա ՊԱԼԱՍԱՆԴՐԱ

Թ Ա Վ Լ Ի Վ

Հ. ԷՆԳԻՆԱԶԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՑՊԱՐԱՆ.

1870




Дозволено Цензурою. Тифлисъ, 20-го Июля, 1870-го года.



28. 1644 41641-60

0184



Կար ժամանակ — և այդ ժամանակը շատ հեռու չէ .  
 մեզանից — երբ մեր հրապարակական թերթերում երկու  
 կուսակցութիւն , իրարու հակառակ դրօշակների տակ մըտ-  
 նելով , զարմանալի յամառութեամբ պատերազմում էին մի-  
 մանց դէմ : Այս դրօշակներից մինի վրայ խոշոր տառերով  
 դրոշմուած էր հետեւեալ վերտառութիւնը . ո՞նջնօիՄն ԱՇ-  
 ԽԱՐՃԱԲԱՐԻ՞՞ միւսի վրայ — ո՞նջնօիՄն ԳՐԱԲԱՐԻ՞՞ : Աշխար-  
 հաբարը , ասում էին առաջինները , ազաւաղութիւն է , օտա-  
 րութիւն է , ռամկական մաքի ծնունդ է . գրաբարն է մեր բուն  
 լեզուն , աշխարհաբարի գոյութիւնը գրաբարի վերաճնութեան  
 արգելք է . — թող ջնջուի աշխարհաբարը : Գրաբարը պըն-  
 դում էին երկրորդները , հին կեանքի թարգման լինելով՝ իր  
 պարագը վաղուց կատարեց , նոր ժողովուրդը չէ կարող հին  
 ու մեռած լեզուով վարուիլ . այլ ինչպէս որ լատիններէնին  
 յաջորդեցին ռոմանական լեզուները կամ հին յունարէնին  
 նորը , այսպէս և հին հայերէնին պէտք է յաջորդէ նորը , եթէ  
 չենք կամենում ժամանակի բնական ընթացքին հակառակ  
 ուղղութիւնով գնալ . — թող ջնջուի գրաբարը : Այսօր,  
 բարեբաղդաբար մեզ համար , այս կարեւոր խնդիրը վճռուած ,  
 աւարտած է համարվում ; երկու լեզուի իրաւունքների սահման-  
 ները որոշու եցան , և եթէ մի քանի մութ անկիւններում վէճը

տակաւին շարունակվումէ, գոնեա ամէն քիչ շատ բանիմաց հայ համոզուած է, որ հին լեզուի զիտութիւնը անհրաժեշտ կարեռ է մեզ ոչ միայն մեր անցեալ կեանքը, մեր կը ըստ հասկանալու, այլ միտ դնելով մեր նոր զրաւոր լեզուի հին հետ ունեցած յարաբերութիւններին, նոյն խի այժմեան լեզուի գիտութեան համար կարեռ է։ Միւս կողմից, նոր լեզուն ձանաչուելով իբրև միակ միջոց ձշմարիա լուսաւորութիւն և գիտութիւն տարածելու, բարձրացաւ իր անպատճութիւնից։ Առաջիկան, Գուեհիկան և ուրիշ սոցա նման անփայել ածականները վերացան նորա վրայից ու առանձին ուշադրութեան և ուսումնասիրութեան առարկայ գարձաւ։

Աակայն այս նոր լեզուն գեու իր օրօրոցի մէջն է և զարդարականալու ու մշակուելու կարօա։ Ահա այս փափուկ խնդիրն է պարապեցնում այսօր մեր բանասէրներին, թէ մեզանու մեւթէ Տաճկաստանում, բայց մինչև այժմ մի որոշ հետեւանքի չեն հասել։ Ոմանց կարծիքը այն է, թէ լեզուն բնութեան արդիւնք լինելով՝ հարկ է թողնել որ ինքն իրանից առաջանայ, աստիճանաբար և բնական ձանապարհով զարգանայ այնուև՝ ինչպէս որ մինչև այժմ ինքն իրանից ձեւակերպուած է, մինչև որ լեզուն ինքն իրան կատարելագործէ։ Այս անորոշ և տարատամ ուղղութիւնը, աւելի ճիշդ անուղղութիւնը, որ բազմաթիւ կուսակիցներ ունի, գուցէ նորանովէ արդարանում, որ այս տեսութեան հետեւողները իրանց երկիւղաձութեան մէջ վախենումէն լեզուն բռնազբօսելուց և արուեստական կերպարանից տալուց նորան։ Ուրիշները, ընդհակառակն, փորձեցին լեզուի բնական ընթացքը բռնելով՝ յետ տանել նորան և որքան կարել է հին լեզուին մօտեցնել ու նմանացնել։ Այս փորձը փորձողները իրանց չափազանցութեան մէջ այնպիսի ծիծաղելի հետեւանքի հասան, որ այժմ հետեւողներ չունին։ Կան վերջապէս մի կարգի մարդիկ, որոնք իրանց անձնական ձաշակին

և շաճոյքին չետեւելով՝ ինքնակամ փոփոխութիւններ են առնում լեզուի հիմնական օրէնքների ու ձեւերի մէջ, մշակելով նորան ըստ մասին հին հայերէնի և ըստ մասին եւրոպական լեզուների ազգեցութեան տակ:

Երկար և մեր նպատակից դուրս բան կը լինէր քննել մանրամանարար թէ որը այս երկու տեսութիւններից, այսինքն առաջինից և վերջինից, ճշարտութեան աւելի մօտ է. այս միայն յայտնի է, որ վերջին ու զղութիւնը ազատ և անձնական հեղինակութեան վրայ հիմնուելով, ինչպէս ուրիշները արգէն նկատեցին, շատ վատնգաւոր է լեզուի անկանութեան համար: Որովհետեւ եթէ ընդունումնը նոր հայերէնի դոյութիւնը, չենք կարող ժխտել նորա հիմնական օրէնքների դոյութիւնը, որոնք առանձին բնաւորութիւն ու կերպարանք են տալիս նուրան, հետեւաբար և ոչ ոք իրաւունք ունի ձեռնամերձ լինել այդ օրէնքներին: Ուրիշ բան է բառական փոխառութիւնը, որ աչքի առաջեւ ունենալով լեզուի աղքատութիւնը, անհրաժեշտ կարիք է համարուել. մանաւանդ որ այս տեսակ փոխառութիւնները, եթէ չափով ու խոհեմութեամբ լինին, չեն կարող մի վնաս հացնել լեզուի անկախութեանը: Աեզուի հողին հիմնական օրէնքների ու ձեւերի մէջ է պարունակվում, որոնք անհատի իշխանութիւնից բարձր են: Ուշադրութեան արժանի բան է, առումէ Մաքս Միւլլեր գերմանացի ուսումնականը, որ լեզուն թէ անընդհատ փոփոխութիւնների է ենաթարկվում, բայց և այնպէս մարդս իշխանութիւն չունի ոչ մի փոփոխութիւն անել լեզուի մէջ և ոչ պատահած փոփոխութիւնների առաջն առնել: Ինչպէս որ անհնարին է փոխել այն օրէնքները, որով կատարվում է արևան շրջանառութիւնը, կամ մի մաս աւելացնել մեր հասակին, այսպէս անհարելի է փոփոխել լեզուի օրէնքները կամ մեր ազատ կամքով նոր բարեկարգել: Ամրգութիւնումէ բնութեան փայտ այն

ժամանակի, երբ նորա օրէնքները իմանումէ և հպատակումէ այն օրէնքներին . այսպէս և բանաստեղծն ու փիլսոփան լեզուի տէր են դառնում, երբ իմանումին նորա օրէնքները և հպատակումին այդ օրէնքներին<sup>Ա</sup>: Փոքր ինչ յետոյ այս էլ է ասում . ոթէև առանձին անհատը ըստ երեսութին առաջին ներդործոցն է համելիսանում նոր բառերի և նոր քերականական ձևերի կաղմութեան մէջ, այնու ամենայնիւ նորա գործունէութիւնը միայն այն ժամանակ է սկսվում, երբ նորա անհատականութիւնը (individualit) խառնվումէ այն գերդաստանի, ցեղի կամ ազգի գործունէութեան մէջ, որին պատկանումէ ինչն անհատը<sup>Ա</sup>:

Այս շշմարտութիւնը մի ուրիշ խնդիր է հանում մեր առաջ, որին մինչև այժմ պէտք եղած ուշադրութիւնը չեն դարձել մեզանում: Սեր խօսքը ժողովլզական կամ դաւառական բարբառները վրայ է: Այն կարծիքը թէ ժողովլզական բարբառները գրականական լեզուի աղաւաղութիւնն են, բոլորովին սիսալ է համարում նոր ժամանակների զիտութիւնը: Ընդհակառակն, անաչառ քննութիւնները ցոյց տուին, թէ գառառական բարբառները ունին շատ ձևեր, որ գրականական լեզուի ձևերից շատ հին են, իսկ բառերի հարստութեան կողմից այս վերջինը շատ բանում տեղի է տալի առաջններին: Եւ եթէ բաղդի բերմամբ այդ գաւառական բարբառներից մէկն յաջողումէ զրաւոր լեզուի աստիճաննին ամբառնալ, այդ պատճառու չէ որ նա բաժանուի իր նման բարբառներից և իբրև մի ովասին մնայ ամայի անապատում: Գրականական լեզուն միայն այն ժամանակ պահպանումէ իր հինդանութիւնը, երբ իր և միւս բարբառների մէջ եղած կապը չէ խպվում: Մի լեզու որ իր բնական հողեց բաժանվում, հեռացվումէ իրան մնունդ տուող բարբառներից, այդպիսի լեզուի բնական զարդացումը անմիջապէս ընդհատվումէ: Այս բաղդին պատահեցաւ մեր

Հին կամ զբարար լեզուն, ինչպէս որ բաւական պարզ ցոյց տուին նորագոյն քննութիւնները : Խսկ ուր որ զբականական լեզուն գաւառական բարբառների հետ պինդ կապուած զարդանում է, այն տեղ զբար որ լեզուի գոյութիւնն ու կենդաւնութիւնը երկար ժամանակների համար ապահոված է: Գրականական լեզուն ընդունում, հաստատում է մի որեւիցէ ձեւ կամ ասացուած, գաւառականները ներկայացնում են յիսունը և իւրաքանչիւրը իր առանձին բարակութեամբ : Եթէ կեանքի մէջ հանդէս են դալի նոր մոքեր (ընկերական անշուշտ և ոչ ուսումնական), բարբառները ներկայացնում են նոր անուններ իրանց գանձարանից և յայտնի է որ նպա շատ հարուստ են այդ կողմից : Հասարակ մարդկանց լեզուն, որոնց կեանքը ըլունութեան հետ մօտիկ կապակցութիւն ունի, ինչպէս են օրինակի համար հողագործները, հօվիւնները, որսորդները, ձկնորսները և այլն, սոցա լեզուն, առում ենք, աւելի կենդանի ու պատիերացուցիչ, որովհետև այս կարգի մարդիկը ազատ օդի մէջ, բայց երկնքի տակ ապրելով՝ նոցա աչքը աւ ելի հեռուէ կարում, նոցա ականջը աւ ելի լսումէ: Այս պատճառով նոքա զարմանալի ճշգութեամբ նկատում են բնութեան մէջ պատահած, ամենատիոքը փոխուսութիւնները և յարմար անուններ են տալիս նոցա. այսպէս հովուի լեզուն հարուստ է կենդանական կեանքի մէջ պատահած երեսյթների անուններով, հողագործների բոյսների, ընդեղնենների վերաբերեալ բառերով, և այլն: Այս բառերից շատը ժամանակ անցնելով մոռացվում են, երբ ժողովուրդը բաժանվումէ այն կեանքից, որի մէջ գանուած ժամանակը ստեղծեց բոլոր այդ բառերը իր ամենօրեայ կեանքի բացասրութեան համար :

Թռէ ինչ մեծ օգուտ կունենար մասնաւորապէս մեր լեզուի համար դիսաւոր գաւառական բարբառների ծանօթութիւնը իւրաքանչիւրը իր առանձին քերականութեամբ և բառ-

զրբով, այդ կարծումները ամէն բանիմաց անձի պարզ հասկանալի է: Այ լեզու որ իր կենսատու աղքիւրից հեռու է պահպատմ, որ իր զարգացման համար միայն զպրոցական միջների է դիմում, միայն զբքերից է ուսանվում, այդպիսի լեզուն, համարձակումները ասել: կազմուելուց առաջ մեռնելու վասնղի մէջ է ընկնում: Այս վասնղը կարող է ապառնալ մեր նոր լեզուին, որ իր կազմութեան առաջն ասախճանում արդէն ոմանց զըշե տակ այնքան հեռացել է կենդանի ու բնական խօսքից, որքան հեռու է արուեստական ծաղեկը բնական ծաղկից: Ժամանակ է այս խնդրին աւելի ուշադրութիւն գարձնել, եթէ չենք կամենում ապագայ սերունդների համար նորանոր գժուարութիւններ պատրաստել լեզուի մշակութեան գործի մէջ. գժուարութիւններ, որ նորանով աւելի ցաւալի կրթնին, որ մեր յաջորդները կը ստիպուին անշուշտ յետ դառնալ մեր բարձրացրած շինութիւնը կործանել ու լեզուի շենքը նորից սկսել. . . .

Մենք հայերս ներկայում ունինք երկու զբաւոր լեզուն մինը համարվում է ներկայացուցիչ արեմտեան բարբառների և այս գարու սկզբից մշակվում է Տաճկաստանում (զիստ որապէս Կ. Պոլս և Զմիւնիա), միւսը իբրեւ ներկայացուցիչ արեելեան բարբառների գործածութեան մէջ է Ոռուստանի Հայոց մէջ զրիթէ այս գարու կեսից: Թէ ո՞րը այս լեզուներից ժամանակով առաջնութեան իրաւունքը կը ստանայ, կամ թէ միտ զնելով երկու լեզուների միմեանց վրայ ունեցած ազդեցութեանը, կը յաջողի<sup>Ց</sup> արգեօք երկուսի ընտիր մասերի բաղադրութիւնից մէկ ընդհանրական լեզու առաջնել, — այդ կախուած է մեր կեանքի ապագայ պայմաններից: առայժմ ոչ մինը այդ բարբառներից այն աստիճանի կատարելութեան չէ հասել, ինչպէս որ շատ ուղիղ նկատում է մի բանսակը, որ կարելի լինէր ներկայում այդ մասին մի որեւիցէ եղանակացութիւն անել: ո Մինչեւ այժմ՝

ասում է պ., Ք. Պատկանեան, այս զրաւոր բարբառներից ոչ  
մինը չառաջացրեց ոչ հանձարեղ ազգային բանասակղծ և ոչ  
տաղանտաւոր մատենազիր, որ լեզուին տային այն ներքին կապը  
և կատարելութիւնը, առանց որի զրականական լեզուները կաշ  
տարելապէս չեն հաստատվում։ Մանաւորապէս Ռուսաստանի  
Հայոց զրաւոր լեզուն, արեւելեան բարբառների, ներկայացուցիւց,  
շատ պակասաւոր է այդ կողմից։ Ամէն մարդ զրում է իր ու  
զածին պէս, յարմարուելով միայն մի քանի ընդհանուր զը-  
րականական պայմանների։ Քերականական ձեւերը զեռևս հաս-  
տառութիւն չեն առած, որոշուած չեն, թէ ի՞նչ կարելի է և  
ինչ չե կարելի փոխ առնել հին լեզուից, որ մի անսպառելի  
աղքիւր եղած է, որից հեղինակները համարձակ նիւթ են առ-  
նում նոր զրաւոր լեզուի համար։

Այս խօսքերից ըստ մասին զուշակիում է մեր ներկայ  
աշխատութեան բնաւորութիւնը։ Մեր միտքը չէ ամենեին քե-  
րականութիւն զրել. այդ յանդգնութիւնը հեռու է մեզանից,  
միտ զնելով այն զրութեան, որի մեջ դանվում է մեր մանուկ  
լեզուն։ Մեր զիտաւորութիւնը եղել է միայն լեզուի զիտաւոր  
ու ամենասովորական ձեւերը մէկտեղ հշաւաքել. զուցէ այս  
փոքրիկ աշխատութիւնը յորդոր լնի աւելի մանրամասն զի-  
տալութիւններ զրելու նոցա՝ որոնց քաղցր ու սիրելի է մայրենի  
լեզուի յառաջաղինութիւնը\*։

\* Մենք մեր կողմից խոստովանում ենք, որ քիչ օգուտ չքաղե-  
ցինք Հ. Արտէն Արտընեան վարդապետի Քերականութիւնից, որ շատ  
հետաքրքրական տեղիկութիւններ է պարունակում ընդհանրապէս հին  
և նոր հայելինների վրայ։ Այս պատուական աշխատութիւնը հարա-  
բակուեցաւ Վեննայում 1866-ին այս վենագրով „Քննական քերա-  
կանութիւն աշխարհաբար կամ արդի հայելին լեզուի, հանդերձ ներա-  
ծութեամբ և յաւելուածով”։

## Ա. ՀՆՉԻՒՆՆԵՐԻ ԵԽ ԲԱՌԵՐ

§ 1. ՀՆՉԻՒՆՆԵՐԻ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Իւրաքանչիւր բառի մէջ երկու բան ենք նկատում, միաք և հնչիւն, կամ հոգի և մարմին: Առաջինը ներկայացնում է մեղ բառի մէջ պարունակուած հասկացողութիւնը, երկրորդը՝ հնչիւններ, ուրոնք արտաքերվումեն և առանձին, և միմանց հետ կապակցուելով: Հնչիւնների կողմից բառերը բաղկանում են երկու արրից — ձայնաւոր և բաղաձայն հնչիւններից, որոնց արտաքերութեան համար գործ են զրվում հետեւալ երեք գործառանները. կոկորդը, բերանը և շրմունքը: Շատ հին լեզուներում, որոնք վաղ ժամանակներում են զարդացել, ինչպէս է օրինակի համար սանսքրիտը\*, միայն երեք ձանաւոր հընչեւն կայ. ա, ա, և ա, որոնք համարվում են արմատական հընչեւններ և արտաքերվումեն վերել յիշուած գործարաններով: Բայց ժամանակ անցնելով երկու նոր միջին ձայնաւորներ կազմուեցան. է և օ: Առաջինը և է է ձայնաւորների միջին տեղն է բռնում, ինչպէս լատինացոց օք, որ կազմուեցաւ հին այ

\* Սանսկրիտը Հնդկաց հին ու սրբազն լեզուն է, որով գրուած են նոցա Վեգա ասած կրօնական պրերը և այժմ միայն բրամաներին և զիանականներին ծանօթ է: Այս վերջինները սանսկրիտ լեզուն համարում են մայր բոլոր հնդկա-և երուպական ասած լեզուներին. բայց պէտք չէ կարծել թէ սոքա նորանից առաջ եկած լինին, այլ միայն սանսկրիտը զարմանալի հարսաւութիւն ու կատարելութիւն ունենալով բոլոր միենայն ցեղի պատկանող լեզուների տարրերը իր մէջ քիչ թէ շատ բովանդակում է: Սանսկրիտի այլուրենի թիւը յիսուն է և մինչեւ քսան վանկից բաղկացած բառեր շատ ունի: Այս տառերը նոյն լեզուի մէջ բէվառագործ են կոչվում, այսինքն բէվառագործ, որ ձախից դէպի աջ են դրվում: Գրականութիւնն էլ շատ հարուստ ու հին է. Քրիստոնական կրօնի սկզբներումը դեռ պայծառութեան մէջ էր:

Հնչիւններից և ֆրանսիացոց այ = է, որ համապատասխանում  
է մեր արևելքան բարբառների այ = է սղմանը : օ ձայնաւորը  
ու և այնաւորների միջն անդն է բռնում, ինչպէս է օրիւ-  
նակի համար ֆրանսիացոց ալ = օ, որ համապատասխանում է  
մեր առ երկրաբառի սղմանը — առը = օր :

Այս ձայնական փոփոխութիւնները, որ ձայնաւորներից  
բաղաձայնների վայ էլ ևն տարածվում, մեծ նշանակութիւն  
ունին լեզուների պատմութեան մէջ : Քիչ լեզու կայ, որի բա-  
ռերը ժամանակ անցնելով կերպարանափոխ չլինին ձայնաւոր-  
ների և բաղաձայնների փոփոխմամբ, սղմամբ, աւելացրութեամբ,  
զեղմամբ և յետ ու առաջ դասուելով . սորանով է որ շատ  
նոր լեզուներ իրանց առանձին կերպարանքը ստացած են, սո-  
րանում երեսումէ նոյնպէս մէկ կողմից հին ու նոր հայերէն-  
ների և միւս կողմից այժմեան հայ բարբառների մէջ եղած  
էական զանազանութիւնը : Տարակոյս չկայ որ այս ձայնական  
փոփոխութիւնները պատահական չեն, այլ որոշ օրէնքների են  
ևնթարկվում : Այս օրէնքները մարդկային մոքի հնարք չեն.  
ընդհակառակին մարդս պէտք է հպատակէր այդ օրէնքներին,  
առանց նոցա դոյութիւնն անդամ իմանալու :

Հայերէն հին և նոր լեզուների համեմատութիւնից պարզ  
երեսումէ, որ

1) այ երկրաբառը արեւմտեան բարբառներում սղվում  
է միշտ և, իսկ արեւեաններում է . ինչպէս. հայր-հար, հեր-  
մայր-մար, մէր . ծայր - ծար, ծէր . այլ - ալ, էլ և այլն : Բայց  
այս հիմնական օրէնքը աղաւաղութիւն համարուելով՝ եր-  
կու կողմի դրագէանները սկսեցին խառն դործ գնել երբեմն  
նոր, երբեմն հին ձեւ (այս և աս, էս. այնպէս և անպէս, էնպէս),  
որ աւելի մեծ աղաւաղութիւն է : Միայն կան բառեր, որոնք  
միայն նոր ձեռովեն վարդում . այսպէս են՝ էլ և էդուց (և ոչ  
այլ, այգուց): Դարձնալ բայերի խոնարհման մէջ երկու կողմն էլ

միաբան պահում են նոր ձեւը. ինչպէս եկեղէք, տարեցք, մի՛ դաք, խոստացաք, փոխանակ եկացք, մի գայք : — Գրոց լեզուի կերպաք և կերեցք, կալացք և կալէցք կրկնակի ձեւերից պարզ երևում է, որ այ երկրարբառի աղման սկիզբը խոր հնութեան մէջ պէտք է որոնել:

2) այ սովորաբար սղվում է առ. բայն-բռնն, կրցո-կռտոտ, կառ պրցտ-կապուտ, դարձայց-դարձրուց : Բայց զրաւոր լեզուի մէջ այժմ խորթ են համարվում քռոր, լուս, թռուլ. թէպէտ առ ծանցական և բարդ բառերում այս կանոնը ամէն բառերի վրայ է տարածվում. լուսաւոր, յռասակտուր, թռուլասիրտ : Այս հիման վրայ զրաբար այ և այ հոլովական վերջաւորութիւնը փոխուել է առ. ձիոյ-ձիու, տեսանելոյ-տեսանելու, ողորմելոյ-ողորմելու :

Երեւանի բարբառի մէկ առանձին յատկութեամբ այ երաբեմն կրծատուելով փոխվում է և. քայր-քիր, լոյս-լիս : Արեւելեան զրաւոր լեզուի մէջ այս յատկութիւնը իբրև հոլովական վերջաւորութիւն երեւումէ միայն բայերի անորոշ եղանակում. տեսանելիս, գնայիս, փոխանակ տեսանելուս, գնալուս, գալուս, որ արեւմտեան զրաւորին սեպհական է :

3) ետ ամփոփուելով՝ դառնումէ և. ինչպէս սեաւ-սեւ, ցորեան-ցորեն, լեարդ-լերդ . (միայն ուզզակի զրաբարից առանուած բառերում ետ անփոփոխ է պահվում. սենեակ, մատեան, վայրկեան) : Բայերի մէջ՝ գնացել, տեսել, մեռել, ազատեց, սիրեց, փոխանակ գնացեալ, սիրեաց, ևայլն: Հոլովսերի մէջ՝ բարեւ, առաջեւ, փոխանակ բարեաւ, առաջեաւ : — Այս պատճառով է որ Աետն, Աետմէ հոլովական վերջաւորութիւնները ժողովրդեան մէջ դառել են Աետի, Աետով — սովորու Աետի, սովորու Աետով, թէև զրաւոր լեզուի մէջ կրկին հաստատուեցաւ հին ձեւը : Նոյնպէս զաւառական են համարվում այժմ Յակորեանց, Տէր Մարտիրոսէնք, փոխանակ Յակորեանց, Տէր Մարտիրոսէնք :

4) Էւ արեւելեան բարբառների մէջ սղվումէ և և ի. այսապէս թիֆլիսում ասումեն ձռան, ալուր, հարուր. Երեւանում — ձին, ալիր, հարեր : Գրաւոր լեզուն այստեղ էլ նորոգեց հին ձեւը. ձին, ալիր, հարեր :

5) Առանձին կերպարանք տուած են նոր բառերին ա, և և և և ձայնաւորների կորուստը . ինչպէս մտնել, համել, գտ' նել. — վ'րայ, խ'զել, աւ'լել. — կոտ'րել, կ'րանալ, ս'րա, դ' բանից, ն'րանով : — Հոլովներում ա ձայնաւորի կորուսման կանոնը աղատ է պաշել և չպահել, ինչպէս . բեր'նի, բեր'նում, բեր'նով և բերանի, բերանում, բերանով . տ'նից և տանից: Բայց սղելով գրում են միշտ ձկնում, ձկնից, մկնից :

6) Բաղաձայններից պատահումեն գուրս ընկած է, ժեւ տառերից առաջ . քա'շել, խա'շել, ա՛ժան. Կ բաղաձայնով կէս վանկ կազմող բառերի վերջը . ինչպէս. հոտս, լոտս, չոտի, եղ, աֆ, իտի, փոխանակ հարսն, թռուն ևայն : Ընտանեկան լեզուի մէջ այս կարդի բառերը իրանց վերջը առնումեն չ. մէկ բուռչ հող, դառչ օրեր, սառչ խօսք, որոնցից ոմանք գրաւուրի մէջ էլ ը-ով են վարվում: Միայն ոտ և չեւ բառերը միշտ տուանց չ-ի են գրվում կամ ժ-ով — ոտք և ձեռք: — Այստեղ պէտք է նկատել, որ աշխարհաբար լեզուն անեղական բառեր չունի. և այս պաաձառով հին անեղական բառերը արդի լեզուում հոլովվում են եղակի և յօդնակի. փառք-փառքէր, աչք աչքէր, տանջանք-տանջանքնէր: Փիչ անգամ պատահումէ տեսնել այդ ժ տառը ո-ի փոխուած. ծախս, հոդս, պաս, ուատիս, որոնցից պատասց, ուատիսուց, դարձուածները:

7) Սորա հակառակ պատահում են երբեմն Կ և Կ տառաերի աւելադրութիւն, Կ բառերի մէջ, իսկ հ բառերի սկիզբը. մենք, սրանք, տեսանք, կանանչ, լինզը, արտասունք. — հորթ, հագնիլ, հանդ (անդ) հունդ (ունդ) (Հին լեզուն ունի ամաբառնալ և համբառնալ, ամբար և համբար, ապա և հապա,

մինչեւ նաև տես Թիֆլիսկցոց աւագութ) : Այս կարգի բառ-ուերից ոմանք գրաւոր լեզուի մէջ մռւտք չեն գտել, այսպէս են. Հայոց, Քիոյ : Մաքրասէրները (puriste) մինչեւ բայերի վեր-ջաւորութեան մէջ, ուր հին և տառը Կի փոխուած է, զը-բում են. Եթէ գիտե՞ք, գնա՞ք ևայլն :

8. Վերջապէս կան բաղաձայն տառեր, որոնք յետու ա-ռաջ են դասվում. ինչպէս՝ դարսակ, սիտուակ, անկաջ, կար-մունջ. կարպետ, գձել ևայլն : Այս տեսակ բառերը առհա-սարակ գրաւոր լեզուի մէջ չեն գործ զրվում:

§ 2. ԲԱՌԵՐԻ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Զայնաւոր և բա-ղաձայն հնչելների կրած փոփոխութիւնները, ինչպէս նաև նոր զբաւոր լեզուի հնի հետ ունեցած յարաքերութիւնները մեծ ազդեցութիւն ունեցան բառերի կազմութեան և նշա-նակութեան վրայ : Այս խնդիրը աւելի պարզ հասկանալի լի-նելու համար պահանջումէ մի քանի բացատրութիւններ :

1. Յայտնի է որ մարդս, մէկ որելիցէ երեսյթի կամ ա-ռարկայի անուն տալու համար հնչելները անմտարար չէ միաւորում բառերի մէջ, այլ իւրաքանչեւոր բառ կազմումէ նայելով թէ ինչ տպաւորութիւն է անում երեսյթը կամ առարկան իր զգացմունքների վրայ : Այսպէս օրինակի համար Տարդ բառը այլ և այլ ծանօթէ լեզուներում պարունակումէ իր մէջ զանազան հասկացողութիւններ, որոնցից իւրաքան-չեւը յատուկ ու սեպհական են մարդուն : Լատինացոց հոմո բառը, Ֆրանսիացոց լ' homme ածանցուած են այն արմասից, որ երեսումէ համս (հող) humilis (ստոր, խոնարհ) բառե-րում. հետեւաբար հոմո նշանակումէ հողից սպեսչուած : Հայոց Տարդ բառը իր նշանակութիւնը գտնումէ սանսքրիտ maria բառի մէջ, որից յուն. brotos, լատ. mortalis, ֆրանս. mortel—մահականացու : Ուրեմն Տարդ նշանակումէ հանչուացու և հա-բառի նոյնանշան է : Սանսքրիտ ոճ արմասը նշանակումէ չա-

փել, որից կազմուած է տաս բառը նախ ճառծող և յետոյ ժարդ  
նշանակութեամբ։ Այս վերջինից ժամանակ անցնելով կազ-  
մուեցան մանավ և manusha — մարդ, որոնցից իրանց սկիզբն  
առած են գոթացի տառ և մանիկ բառերը նոյն նշանակու-  
թեամբ, գերմ. man և mensch, հայ. Տառուկ և Տառչ։ Հայե-  
րէնում կայ և մի չորրորդ անուն մարդու համար — այս, ո-  
րից կազմուած է արք ածանցը արիական արմատից, որ նը-  
շանակում է աղնիւ և տաջ։ Այս մի քանի օրինակներից պարզ  
երևումէ, որ լեզուի իւրաքանչիւր բառը պարունակումէ մէկ  
միաք, իթրե յայտաբար մէկ որեւից ապաւորութեան, և եթէ  
այսօր գժուարէ շատ բառերի մէջ պարունակուած միաքը  
գտնել, պատճառը այն ընդհանրական օրէնքի մէջ պէտք է  
որոնել, որին ենթարկվում են լեզուների մեծ մասը, այն է  
ձայնաւոր և բազաձայն հնչենների կրած փոփոխութիւնները,  
որ զիտութիւնը անուանումէ չայտական աղաւանութեան։ Այս  
կարծէր օրինակի համար թէ Տառը և Տառ բառերը միենոյն  
արմատից առաջ եկած են, թէ անուն բառը ազգակից է սանսք.  
նաման և գերմ. nahmen բառերին, թէ հայ. Հառը և լատ. pater  
բառերը ցեղակից են կազմութեամբ և նշանակութեամբ։ Բայց  
զիտութիւնը չէ գժուարանում նմանեցնել հայք և pater, père  
բառերը, այն հիման վրայ, որ սկզբնական ք հայերէնում  
յաձախ փոխվումէ և. հիմք - յուն. pente, հուք - յուն րյու,  
հռա - լատ. putor հերու - սանսք. parut \* :

2. Վերեր առաջ բերուած օրինակներից երեսումէ գար-  
ձեալ, որ միենոյն առարկան, այլ և այլ տպաւորութիւններ  
զործելով մարդուս վրայ, կարող է երկու և աւելի անուն  
ստանալ. այս և Տառը, արքայ և Այսուոր և այլն, որոնք միշտ

\* Այս փոփոխութիւնները պատահում են և միենոյն լեզուի բար-  
րառներում։ Այսպէս նոյն և տառը մեր բարբառներում փոփոխում  
է և ի, հոստ-փոստ, հոգ-փող, հայ-խայ, հաղար-խաղար։

միմեանց տեղ չեն կարող գործ զրուիլ: Բարի և շար, շատ է  
վտա ածականներից վերջինները գործ են ածվում ամէն տեսակ  
առարկաների համար, իսկ առաջինները միայն շնչաւորների  
վրայ խօսելով. բարի և շար ներքին յատկութիւններ են, շա-  
տ է վտա արտաքին: Այս պատճառով մենք ասում ենք անխափի.  
բարի կամ շտա նար, շար կամ վտա երեխայ. բայց չենք կարող ա-  
սել բարի գերի կամ շտա գրեւ, այլ միայն շտ գերէ, վտա գրեւ:  
Այս նոյնաշան կամ հոմանան բառերը շատ առատ են լինում  
մանաւանդ լեզուի զարգացման սկզբնական ժամանակներում:  
Բնութեան և կեանքի երեսյթները մեծ տպաւորութիւն են  
գործում մատաղահաս ժողովրդի վաս երեակայութեան վրայ.  
բաւական է որ մէկ առարկայ իր օրեկիցէ նոր յատկութեամբը  
զրաւէր մարդուս ուշադրութիւնը և նոր անունը սաեղծուած  
էր: Հին ձնդկաց լեզուի մէջ, օրինակի համար, 11 անուն կայ  
լոյսի համար, 15 ամպի համար, 20 լումնի համար, 26 օձի  
համար, 33 մարդասպանի համար, 35 կրակի համար 37 առ-  
բեգակի համար: Այսպիսի առատութեան պատճառով՝ նոյ-  
նանշան բառերի մէջ յառաջանում է կուտ գոյութեան համար,  
ինչպէս կենդանական ցեղերի մէջ, որի հետեւանքը այն է լի-  
նում, որ անյարմար համարուած բառերը կամաց կամաց ու-  
շընչանում, անյայտանումն և վերջապէս իւրաքանչիւր առար-  
կայի համար մնում է մի բառ: Այսպէս մեզանում որդոյ և  
լուգաւոր, նար և պատելուզ, լմպէլ և խմէլ բառերից գործածու-  
թեան մէջ մնացել են վերջինները:

Մեր նոր հայերէնը մասնաւորապէս շատ հարուստ է  
նոյնանշան բառերով և սորա զիխաւոր պատճառն այն է նախ,  
որ ժողովրդական լեզուի բառերը որոշ նշանակութիւն սաւա-  
նալուց յետոյ, զրագէտները սկսեցին զրաբարից նոր նոր փո-  
խաւութիւններ անել: Այս պէս երեան եկան ծառաւյ և սպա-  
սուառը, պատել և որոնել, բառը ոճ և յոգիսոծ նոյնանշանները, ու-

բոնցից վերջինները հին լեզուից փոխ առաջ են: Այտքնեան  
վարդապետը արևմտեան լեզուի լշութել (աւարտել) բայի 12  
նոյնանշանները յիշումէ, որոնցից կէոր գրաբար են,

Միւս կողմից բառերի ամփոփմունքը նոյնպէս շատ նոյն  
անշանների առաջ գալու պատճառ են գառել: Այսպէս օրիւ  
նակի համար էտառ բառից կազմուեցան էտառել, էտառել, էտառել  
բայերը, որոնց նշանակութեանը մէջ մեծ բարակութիւններ  
կան. մենք ասումենք զբան էտառել, ամոն էտառել, ևուղիւն էտառել և  
ոչ ընդհակառակն զբան էտառել, ևուղիւն էտառել ևայն, որովհետեւ  
էտառել կը լինի սրով, էտառել մղրատով կամ ուրիշ փոքր գործ  
ծիքով, էտառել մէկ որեկիցէ կարծը առարկայ: Զենք յիշում  
էտառել բայի ուրիշ նոյնանշանները — էտառել, էտառել, էտառել,  
որոնց վրայ փոքր ինչ ներքեւ առիթ կունենանք խօսելու:

3. Ինչպէս որ մի առարկայ կամ երեսյթ կարող է մեր  
ուշը գրաւել իր մի քանի յասկութիւններովը, հետեաբար  
և մի քանի անուն ստանալ, այսպէս և որպա հակառակ մի  
քանի առարկայ կամ երեսյթ կարող են միենոն ապաւորու-  
թիւնը անել, ուրեմն և միենոյն անունը կրել: Սորանից դուրս  
են գալի լեզուի մէջ նոյնահնէլան բառեր զանազան նշանակու-  
թեամբ, ինչպէս լեզու մարդու, լեզու զանդակի, լեզու թղթի,  
լեզու վարդի ևայն: Առհասարակ ամէն ազգի մեջ աւելի հաս-  
կացողութիւն կայ քան բառ, և այս պատճառով դժուարու-  
թիւն է զգացիւմ ամէն հասկացողութեան համար սեպհա-  
կան բառեր գանել: Այս պակասութեան առաջն առնելու հա-  
մար ժողովուրդը զգալի կամ նիւթական առարկաների անուն-  
ները, ֆուռամ տալիս է վերացական առարկաներին. բառը թողւ-  
նումէ իր սեպհական նշանակութիւնը և ուրիշ նշանակու-  
թիւն ստանում, որ և կոչվումէ ֆուռամներական: Այսպէս՝ ուսու-  
թեամբ, վաստ, ծառի ևայն սկզբումը անշուշտ դառնալի է, ոչի ծառի

Համար էին առվում, յետոյ Տպէի, Ելեատէայութեան, էետէսի հառ  
մար: Նոյնպէս ցած և ոքոր գործ էն ածվում թէ նիւթական  
և թէ բարոյական նշանակութեամբ: ցած ուղան, լըտոն սորոսու,  
և ցած Տորո, սորո Ընտառութիւն: Փոխաբերութիւնների մէջ կան  
այնպիսիները, որոնք շատ լեզուների համար հասարակաց են,  
բայց կան և յասուկ փոխաբերութիւններ, որոնց չէ կարելի  
բառ առ բառ թարգմանել. ինչ որ մէկ լեզուի համար գեղեցիկ է,  
միւսի համար կարող է շատ տգեղ լինել: Զորօրինակ՝  
այս խօսքերը հայերէնի սեպհական են ու չեն կարող թարգ-  
մանութել. արեւ խոստրեցաւ, արեւիդ մեռնիմ, ճոկտի գիր և այլն:

Հայերէն լեզուի վերաբերութեամբ պէտք է նկատել, որ  
նոյնաշնչիւն բառերը միշտ փոխաբերական նշանակութիւն  
չունին, այլ կամ հին բառը նոր լեզուի մէջ նշանակութիւնը  
բոլորովին փոխած և յետոյ գրականութեան մէջ կրկին հին  
առմամբ գործ զրուած է, կամ նոյն բառը ձայնաւոր և բա-  
ղաձայն տառերի կորուսմամբ և յետ ու առաջ դասուելով՝  
այլեայլ նշանակութիւն ստացած է: Այսպէս դատել և դատում  
ժողովրդեան լեզուով նշանակումն շահիւ և շահ, օգուտ, իսկ  
գրաւոր լեզուով դատել նշանակումէ խորհու և դատուստան էլլու-  
րել: Դարձեալ գործ և գործել բառերը հին առմամբ նշանա-  
կումէին բառա, բառատե, երաւանել, իսկ գործել յատուկ մաքով վար-  
վումն բառ և բառել, իսկ գործել յատուկ մաքով վարվումէ  
միայն — իտուա, գուլպայ գործել, կամ փոխաբերական մաքով՝  
եղչ գործել: Նոյն բառից կազմուած է բառատոր (գործաւոր),  
որ ոչինչ յարաբերութիւն չունի իր նոյնաշնչիւն բառատոր (մը-  
տաւոր) բառի հետ: Դարձեալ աբժան նշանակումէ վայել, վա-  
յեշտած և դադարել — կանգնիւ, կանգնիւստալ, բայց և տառի կո-  
րուսմամբ աժտոն նշանակումէ պիտիագնիւ և դադել « ձայնաւորի  
կորուսմամբ» յագնիւ: Այս բառական չէ: Տառերի հետզհետէ  
կրած փոփոխութիւնները շատ բառերի 'ի սպառ մուացուելու

պատճառ եղան։ Վեր առնենք օրինակի համար հին կետը բայց։  
Եթ երկբարբառի ամփոփուելով էտուից է կազմուէր էտու  
բայց որովհետեւ այս վերջին բայց գտնվումէր արդէն լեզուի  
մէջ իր որոշ նշանակութեամբը (մնալ), այս պատճառով էտու  
անհետացաւ և նորա տեղ փոխ առնուեցաւ առբել (ազատուիլ),  
որ այնուհետեւ իր նշանակութիւնը փոխեց ու էտու բառի մըտ-  
քով գործ գրուեցաւ։ առբանիք բայսնունն էլ վաճառակ և առբանիք  
բառերի նշանակութիւնը ստացաւ։

4. Պարզ հասկացողութիւններից անցնինք բաղադրեալ-  
ներին, կամ քերականական լեզուով՝ խօսելով՝ բարդ և ածան-  
ցեալ բառերին։ Ճիշդ խօսելով՝ այս վերջիններն էլ, այսինքն  
ածանցական բառերը, սկզբնական ժամանակներումը բարդ  
բառերից չեին զանազանվում, այսինքն նոցա պէս երկու կամ  
աւելի արմատական բառերից էին կազմվում։ յետոյ ձայնական  
աղաւաղութեան ենթարկուելով՝ վերջին արմատը իր նշանա-  
կութիւնը կորցրել և անշան հտակէ է դառել։ Ասածիս ա-  
պացոյց կարող են լինել ածանցական մասնիկներից մի քանիսը,  
որոնք իրանց սկզբնական կերպարանքը պահել են։ Այսպէս,  
սովորան բառի մէջ, առ ունիմ բայի արմատն է, ուրեմն և հաս-  
կանալի է թէ ինչի համար սովորան նշանակումէ սովալու ըն-  
դունակութիւն ունեցող։ Զօրեղ բառի եղ վերջաւորութիւնը  
եշտիմ բայի արմատն է, բայց ինչի՞ համար նոյն զօր արմատի  
վրայ աւելացնելով՝ առ մասնիկը (զօրաւոր) զօրեղ բառի հա-  
ւասարազօր նշանակութիւնն է ստանում։ կամ ի՞նչ զանազա-  
նութիւն կայ երէնոյին, երէնոտոր։ ոժորիսային, ոժորիսային բառերի  
մէջ, — այդ գժուար է այսօր մեկնել և պատճառը վերեր յի-  
շեցինք։

Որքան մէր հին լեզուն հարուստ է ածանցական և բարդ  
բառերով, այնքան նորը աղքատ է, և մէր զբաղէտները այդ  
պակասութեան առաջն առնելու համար զբարար լեզուին դի-  
3

մել են, թէ և կան ածանցներ և բարդութեան ձեւեր, որ նոր լեզուին սեպհական են : Սորանից հասկանալի է, որ բարդ և ածանցեալ բառերի մէջ մտնող շատ բառ եր իրեւ պարզ չեն բանում, կամ գէթ խորթ ու անսովոր են : Անք միշտ գործ ինը դնում հափեստգէր, արծովասէր, վաճառաշնչ, սիրտհար (գաւառական են՝ ահանոր, վախոնոր) . բայց օտար են հնչում հափեն, արծով, (զրամի մոքով) վաճառ, վաճառել, հարկանել, որոնց տեղ հասարակօրէն վարվում են . գիրտ, փող, տղանոտ, ծախել, զարկել կամ մանաւանդ լիփել :

**Ա.** Ելորդ ենք համարում ածանցական մասնիկները և բարդութեան ձեւերը այսուեղ մէկմէկ շարել .<sup>\*</sup> յիշենք միայն այն ինչ որ նոր լեզուին յատուկ ու սեպհական է :

Կոր հայերէնին յատուկ է, միենոյն բառը կրկնելով, բարդ բառ կազմել յօդակապով կամ առանց յօդակապի միացած . պէսովէն, աեշնուաբէցը, գէմուրէմ և կամ մանաւանդ բաժանուած . Հաս հաս, սուր սուր, ծուռած ծուռ, շուռ շուռ, կամուցուց կամ մանաւանդ բայերին, և ցոյց է տալի գործողութեան մանր կրկնութիւնը կամ անընդհատ անողութիւնը, ինչպէս չգչգել, լափիկէլ, վաղչպէլ, շափչպէլ կամ ընական ձայների նմանողութեամբ՝ ճաշճէլ, ճաճառաւ, պրափառպէլ, իշխան հայն : Եթէ սոցա վրայ աւելացնենք սո, ոս, ո (երեքն էլ հատանեմ բայի հաս արմաաիցն են) մասնիկներով կազմուած բայերը, ինչպէս են՝ կրծատակել, հոտափել, մորթ սփել, կոտրփել, կը ստանանք բայերի այն ձեր, որ Ռուսաց քերականութիւնները անուանում են многократный видъ : Կոպէլ և կտարփել մէզանում այն զանազանութիւնը ունին, ինչ որ ուռւներէնի մէջ ունին բազի և բազի բարդութիւնը անուանում է այսպէս և կտարփել — связать, կտարփել — связывать и այլն :

\* Տես իմ Գործնական քերականութեան Ա. հասորը :

Կայ մի ուրիշ բարդութեան ձեւ էլ, որով երկրորդ բառը  
Տ տասի աւելագրութեամբ առաջնինի նմանն է յայտնում.  
Ճռուունուու կամ ծուանուու, որից և ծռնել բայլ. սոււու-  
նուու խօսքեր. խառնմառը լուրեր; Նոյնպէս երկրորդ բառը փոքր  
ինչ փոփոխելով. մանրճունը, ափեղցիեղ, ձախուչու իս, ծակու-  
ծուկ: Այս ձեւերը, որ չին լեզուումն ել են երեսում (խառ-  
նաճառն, աղխաճախը սպառապուռ, բարձրաբերձ), այժմ ընտա-  
նեկան լեզուի մէջ շատ գործածական են, բայց զրաւոր լեզուի  
մէջ մուարը չեն գտել:

Առեւելեան Հայոց լեզուին առանձին զարդ ու կենդանու-  
թիւն են աալիս գոյականով կամ բայի արմատով ու բայով  
կազմուած բաղադրեալ բայերը և ոճերը, որոնցից ոմանիք միայն  
բաղադրական ձեւով կարող են վարուիլ, ուրիշները մէկ բառով  
էլ: Այսպէս են առաջններից պահ տալ, հուփ տալ, շաղ տալ  
(ուրիշէ շաղղել, իբր շաղասիել), մտիկ տալ և մտիկ անել, գէմ  
անել, պաչ անել, իմաց անել, պար գալ, փուլ գալ, ծոր գալ,  
ման գալ. ման ածել, աչք ածել, և այն; Երկրորդներից — անց  
կենալ (անցնիլ), անց կացնել (անցընել), շուռ տալ (շըջել?  
գարձնել), ցրիւ տալ (ցրուել) և այլն: Կան վերջապէս և այնու-  
պիսիները, որ մէկ ձեւով մէկ բան են նշանակում և միւսով  
ուրիշ. այսպէս են՝ քաշ անել և քաշել, թափ տալ և թափել:

5. Մնաց մի քանի խօսք ասել օտար բառերի վրայ: —  
Չին և նոր լեզուների քննութիւնից և համեմատութիւնից ե-  
րեսումէ թէ չկայ լեզու, որ իր մէջ օտար բառեր ընդունած  
չլինի, որովհետեւ չկայ ազդ, որ ուրիշ ազգերի հետ հաղոր-  
դակցութիւն ունեցած չլինի: Բայց չայ ազդը այս գէպքում  
չափազանցութեան զարհութելի օրինակ տուածէ: Հայ ազդը  
հնութեան դարերից սկսած մինչև այսօրուան օրը զանազան  
ազգերի աղլեցութեան տակ ընկնելով, քաղաքականապէս և  
գրականապէս, բնական է, որ լեզուն էլ ողողուէր օտար բա-

ռերով ու ձևերով։ Այս ազգեցութիւնները, ինչպէս նկատեցինք, երկու տեսակ են։ առաջինը ժողովրդական, արևելյան ազգերի մեզ հետ ունեցած սերտ հաղորդակցութիւններից առաջ եկած և երկրորդը՝ զրականական, արևմտեան ազգերից վոխ առած լուսաւորութեան պատճառով մուտք դատած։ Առաջինը շատ աւելի զօրաւոր էր ու ընդհանրական։ Պարսիկը, Արաբացին, Թաթարը, Թուբքը հետպհետէ այնքան անհամար բառեր ու ձևեր մեզ ժառանգութիւն թողած են, որ մեր հին դրականութիւնը անկարող եղաւ այդ զեղծմունքների առաջն առնել, և այսօր Հայր Հայի հետ խօսելիս՝ աւելի օտարախօս է քան թէ հայախօս։ Երկրորդը, այսինքն արևմտեան լեզուների ազգեցութիւնը (հնութեան դարերում յունականն ու լատինականը և նոր ժամանակներում եւրոպականը), զրականութեան սահմանից դուրս ոտք չէ կոխել կամ գէթ շատ քիչ ազգեցութիւն է ունեցել ժողովրդական լեզուի հոգու վրա։

Կերկայում, ինչպէս երևումէ, մեր զրագէաների աչքը չափազանց վախեցած է օտար բառերի գործածութիւնից, ուրոնցից միշտ խորշումէն, և եթէ նոր լեզուի մէջ յարմար բառ չեն գտնում մի որեիցէ հասկացողութիւն բացատրելու, զիմումնեն հնին, որ այս կողմից անսպառելի աղբիւր համարուած է։ Ի հարկէ մեծ թեթևամտութիւն է օտար լեզուի բառեր գործածել, երբ նոյն նշանակութիւն ունեցող բառեր կարելի է գտնել մայրենի լեզուի մէջ։ Բայց կան շատ հասկացողութիւններ, որոնց բացատրութեան համար բառեր չեն զրոնքում մեր ոչ նոր և ոչ հնին լեզուներում։ այսպիսի գէպչքերում ուրիշ հնար չկայ, բայց եթէ օտար բառը գործ դընել անփոփոխ։ Յայտնի է թէ քանի որ մի առարկայ չկայ ժողովրդի մէջ, և այն առարկան բացատրելու համար բառ չկայ։ Իսկ երբ մի նոր առարկայ մտնումէ կեանքի մէջ, նորա նշանակութեան կամ ձեի յարմար մի նշանական բառ ծնումէ

ժողովրդի մէջ։ և երբ այն նոր առարկան մէկ երկրից միւսն անց է կենում, նորա հետ միասին անցնումէ և այն առարկան բացատրող բառը. որ չէ կարելի կամ զէթ միշտ հնարաւորութիւն չկայ թարդմանել, այլ հարկ է գործ զնել այն պէս՝ ինչպէս որ կայ, մինչեւ որ ինքը ժողովուրդը մի սեպհական յարմար բառ գտնէ։ Ուուսը, օրինակի համար, առանց խղճահարուելու գործ է զնում բաֆտան, կսակ, բալակ, կазна, խարչ, այլանքան արեւելեան բառերը, Ֆրանսիացին — the, café, pilau (փլաւ՝ կիրակուր), chibouk, kalian ևայլն. իսկ չայ դրագէտը, աշխատումէ այդպիսի բառերը ինչպէս և իցէ թարդմանել, կամ երեւակայութեան անձնատուր լինելով՝ ծիծաղելի բառեր ստեղծել։ Այս անտեղի մաքրասիրութիւնն է, որ ստել տուեց մէկին լինառեա (самоваръ), միւսին՝ իւղով հաց ռւրուծ (блинъ) ևայլն ուրիշ ծիծաղելի բառեր, այն ինչ շատ օտար բառեր, որոնք երկարատեւ գործածութեամբ բոլորովին հայացրած են, ինչպէս՝ աշկարայ, զընդան, քուրակ, անգուման, զրատել ևայլն խորթ են հնչում շատերի ականջին։ Օտար են հնչում իրաւամբ շատ խրթին բառեր, որ ոմանք առանց մի չափ ու սահման ձանաչելու փոխ են առնում զրաբարից։ Սորա հակառակ կան շատ առաջին կարգի ընտիր բառեր, որ ժողովրդի բերնումը լսվում են, բայց զրբերում մուտք չեն գտել։ Այսպէս են վարապ, ճահակ, գէն և գինուր, բօլ և բօլաբէլ, չաղել, առչրբել և ուրիշ շատ բառեր։

Հայոց լեզուն շատ աղքատ է զիսնական բառերի կողմից որովհետեւ մինչեւ այժմ զիստութիւն էլ չկար մեր մէջ. թարդմանել այդ բառերը կամ աշխատել նոցա յարմար բառեր զըտնել հայերէնի մէջ, ինչպէս վերել նկատեցինք, միշտ հնարաւոր չէ։ Այսպէս օրինակի համար Քիւրուգ բառի տեղ ասել լեզուտունը կամ լեզուտունը հաւասարապէս անընդունելի է, ուրովհետեւ լեզուտունը բառական թարդմանութիւնը ֆիլոգից

տարբեր հասկացողութիւն է զարթեցնում՝ մեր մաքումը, այս սինըն լըլը սիրող և ոչ ժամանակ. իսկ Աղջուտգէտ նշանակում է շատ շնորհներ խօսող, և յայտնի է որ Փիլոլոգը շատ անգամ չէ խօսում այն լեզուներով, որոնց վրայ քննութիւններ է գրում։ Կայ մի ուրիշ բառ էլ Քելուգէ մտքով վարուող — բանակը, որ գուցէ ամենից յարմարը կը լինէր. բայց այդ բառը վաղուց արդէն ուրիշ մաքովէ բանում. բանակը մեզանում ֆրանսիացոց hommē de lettres զուրցուածքինշանակութեամբ է վարվում և զրեթէ գլուխէտ բառի հաւասարագոր է։

Օտար բառերի համար հայերէնում՝ առանձին վերջաւորութիւններ կան յատկացրած. գոյականների համար ու Քիուկան, Քիման, աշգեբըն (հանրահաշիւ). իսկ եթէ մի որեիցէ վարդապետութիւն կամ աղանդ են նշանակում, Ական. ոռիւսուալիսն, Հալմին կոնուալիսն. ածականների համար սեպհականած է կոն վերջաւորութիւնը. առիւսուական, Քիմական։ Այս աեսակ բառները շատ անգամ լատ. icas և ֆրանս. ique վերջաւորութիւնը ունին. հայերէնում լատ. ic և ֆրանս. iqu վանկերը միանալով կան մասնիկի հետ կազմով են իկանոն կրկնածանցը (ֆիզիկական — physiscus, physique), որ երբեմն շատ անախորժ է հնչում։ Այս անախորժութեան առաջն առնելու համար, ոմանք զործ են դնում ետք վերջաւորութիւնը. ուշուագութեան փոխանակ պէտագուգիտիոն։

Այս ընդհանուր զիսողութիւններից յետոյ, զանք աւելի մասնաւոր խնդիրների վրայ խօսելու։

## Բ. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՌԻՆ

§ 3. ՀՈԼՈՎ և ՀՈԼՈՎՈՒՄՆ. — Բնութիւնն մէջ բոլոր առաջ կաները միմեանյ հետ կապակցութիւն և յարաբերութիւն ունին. այսպէս մենք աեսնում ենք որ մի առարկայ կամ միւսին է պատկանում, կամ միւսի վրայ է ներգործում, կամ մէկը

միւսովէ կատարում գործողութիւնը ևայլն : Աեզուն երկու միջոց ունի այդ յարաբերութիւնները բացատրելու . 1) բառերի վերջաւորութիւնները փոփոխելով և 2) բառերի սկիզբը այլ ևայլ մասնիկներ գործ գներով, որոնք կոչվումեն նախորեն : Բայց բոլոր լեզուները այդ երկու միջոցները չունին . կայ լեզու, ինչպէս են օրինակի համար Փրանսերէնը և անգլիերէնը, որ բառերի վերջաւորութիւնը չէ փոփոխում, այլ առարկաների մէջ եղած յարաբերութիւնը ցոյց տալու համար միայն նախադիրներ է գործ ածում : Ուրիշները, ինչպէս են հին հայերէնը և զերմաններէնը, երկու միջոցներն էլ գործ են գնում : Աերշ ջապէս կայ լեզու, որ միայն բառերի վերջաւորութիւննէ փառ փոփոխում առանց նախդիրներ գործ գնելու : Այս կարգիցն է և մեր նոր հայերէնը, որ հին լեզուի հոլովակերա նախդիրները չունի, այլ միայն շատ մակրայներ և գոյականներ նախագրութեան մոքով բանում և գոյականի հետ միասին փոփոխվում են :

**Առ** հայերէն լեզուն ունի եօթը հոլով, որ են . Ուզգաւ կան, Հայցական, Սեռական, Տրական, Բացառական, Գործիական և Ներգոյական, որոնք զանազաննվումեն միմեանցից առանձին նշանակութեամբ և վերջաւորութեամբ . միայն սովորական հոլովման մէջ հայցականը ուղղականի նման է, և որպարական սեռականի նման :

**Ք**ննելով մեր լեզուի բառերը պարզ տեսնումենք, որ բոլոր անունները ընդհանրապէս երեք տեսակ կարող են փախուիլ, ուրիշ խօսքով, մենք ունինք միայն երեք հոլովում : Հոլովումների մէջ եղած զանազանութիւնը երեսումէ եզակի սեռականից : Առաջին հոլովման սեռականի վերջաւորութիւնննէ . ինչպէս՝ բաժակ — բաժակի . երկրորդինը՝ ու . մատանի — մատան-ու . երրորդինը՝ առ կամ էան . ձուկ — ձկ-ան ընկերութիւն — ընկերութ-էան :

**Յ**ոգնականի համար յատկացած կան երկու մասնիկ . Եր,

և ՚եր։ Եթէ բառը միավանկ է, յոգնակի ու զղականը կաղմը վումէ եզականի վրայ եր մասնիկը աւելացնելով, իսկ եթէ բազմավանկ՝ ՚եր մասնիկը. ինչպէս. ժամ— ժամ-եր, քար— քար-եր, տուն— տն-եր։ Աթոռ— աթոռ-ներ, պատկեր— պատկեր-ներ, անուն— անուն-ներ։ Ներ մասնիկ տռնում են գարձեալ այն միավանկ բառերը, որոնց արտաքերութեան մէջ, բաղաձայնների խստութիւնը մեղմացնելու համար, ը ձայնաւորը մանում ու մէկ վանկից իրեւ երկու վանկ է կազմում։ Ճրագ— ճրագ-ներ, բլուր— բլուր-ներ, կայր— կայր-ներ, անդղ— անդղ-ներ։ (Խոտորում են. աստղ-եր, սանտր-եր)։ Այս կարգից են դարձեալ այն միավանկները, որոնց վերջին արմատական և անյայտացել կամ ը է փոխուել. գուռ. (գուռը) — գոռ-ներ, լեռ — լեռ-ներ, մուկ — մլ-ներ, եղ — եղ-ներ։ Սորտ հակառակ կան մի քանի միավանկներ, որոնք բարդ բառերի կազմութեան մէջ մանելով յոդ. եր մասնիկ են առնում։ Այսպէս են կարգ, տուն, հայր, մայր, քոյր, տէր. զասակարգ-եր, կեքահայր-եր, հօրաքոյր-եր, հողատէր-եր ևայն։ Բայց առում են տէրտէր-ներ։

Եր, ՚եր յոգնականակերտ մասնիկները ու զղականից տարածվում են և միւս հոլովների վրայ, որոնք հոլովվում են առաջին հոլովման եղականի պէս. որով և յոգնականում հոլովվումների զանազանութիւն չկայ։ Այսպէս, հաց ողբրմէլի, պուն և ՚եղութեան այլ և հոլովվումների բառերը յոգնականում միակերպ են հոլովվում։ ուզ. և հայց. հացեր, սեռ. և տր. ողբրմէլներների, բաց. ՚երից, ՚եղութեաններից, գործ. հացերով, ողբրմէլներով, ՚երգ. ՚երբում, ՚եղութեաններում։

Սորանից երկումէ, որ ՚որ լեզուի հոլովները, համեմատելով ՚նի ՚ետ, շատ աւելի պարզ են ու ձեւերը տարբեր ՚նից և ըստ մասին արևմտեան զրաւոր լեզուից։ Այս տար-

քերութիւնը երեսւմէ մանաւանդ ներգ. բաց. և յողնականակերա մասնիկների մէջ :

1. ում վերջաւորութիւնը (որի ուրիշ երկու ձեերն էլ երեսւմեն երկու դաւառական բարբառներում — չմ Ղարաբաղում և ամ Ազուլիսում — Տարբահը, Տարբամ, Տարբամ) իր ծառ զումն առնումէ ամենախոր հնութիւնից և գուցե նոյն իսկ անպիր Ժամանակներից, որ յետոյ մնացել է իրրե տրականակերա մասնիկ գերանուններում (Պատմ., որւամ, գումամ, մերտամ, ուս բայրամ) և կրծնատուած՝ ամ, այդին, ամին), թուականներում (միում, առաջնում, երկրորդում ևայլն) և մի քանի զյական և ածական անուններում (զիսում, սրբում, մարմնում, հնում, վերնում) : Եւ որովհետեւ հին հայերէնը — գէթ մլզ ծառնօթ զրոց լեզուն — ներգոյականի համար առանձին ձե չունի, այլ տրականից է կազմվում 'ի (յ) նախդրով, այս կարգի բառ ու երր ում վերջաւորութիւնը պահել են ներգոյականում. 'ի Թուամ, յաստաշնուամ, 'ի Գլխուամ : Ահա այս միենոյն ում ձեն է, որ պահպանուել է արեւելան բարբառներում ներգոյական կազմելու համար. Գլխուամ, գուշափուամ, Տարբահուամ, հնուամ : Ասումնը սարեւելան, որովհետեւ արեւմտեան բարբառները ներգոյականի համար առանձին ձե չունին, այլ սովորաբար կազմվումէ սեռ. Հովովից մէջ նախապրութեամբ. Գլխուամ մէջ, գուշին մէջ, Տարբահուամ մէջ : Այս ձեը արեւելան դրաւոր լեզուի մէջ զործ է ածվում միայն այն ժամանակ, երբ խօսքը աւելի օրոշ տեղի կամ սարածութեան վրայ է : Այս տարբերութիւնը երեսում է հետեւեալ երկու զուրցուածքների մէջ . Սէեպէցուամը մլծ բազմութիւն կար և Դագաղը եւեղեցու մէջն էր զրած : (Թիվլիսեցին ասումէ. մէջ գուշուամն իմ կենում, այսինքն քաղաքի կենտրոնում : )

2. Է՞, Կ՞ յողնականակերա մասնիկները նոյն հնութիւնը

ունին : Չորրորդ և հինգերորդ դարու ընտանի զրուածներում  
բաւական յաճախ են երեսում այս մասնիկները զլսաւորապէս  
այն բառերի վրայ, որոնց յոդնակին ուով դժուար էին արտաշ-  
բերվում, կամ անեղականից որոշակի յոդնակի կազմելու հա-  
մար : Այսպէս՝ նաւկնետր, զբարձկնետրդ, 'ի վերայ բարձկներոյդ,  
'ի քաղաքնետրդ, վաճետր, վաճերով : Իսկ զ. Փարագեցին միշտ  
ամփոփելով ասում է . զշարկեր, զբաներ, զձեռներն, զշայերն :  
Միջին դարերում, մանաւանդ ԺԲ դարուց յետոյ այս ձեւը ա-  
ռելի սովորական դարձաւ, մինչև որ վերջապէս բոլորովին ընդ-  
հանրացաւ :

3. Եց, ուստի հին լեզուի յոդն. բացառ. վերջաւորութիւններ  
են, որ այսուել եղականի համար սեպհականած և յետոյ ա-  
ռաջներ ընդհանուր կանոնի համաձայն յոդնակի էլ զործ զը-  
րուած է 'ի վարդից — վարդից և վարդերից . այն ինչ արեւմտեան  
բարբառներում է վերջաւորութիւնը յատուկ եղած է թէ եղ.  
և թէ յոդն. բացառ. համար: — Մեր գրագէտներից սմանք ա-  
րեւմտեան զբաւոր լեզուին հետեւելով՝ եղ և յոդ. բայցառ. է  
են վերջաւորում. ծառէ և ծառերէ փոխանակ ծառից և ծա-  
ռերից . այսպէս և յոդն. սեռ. և ար. ու են վերջաւորում փոխա-  
նուկ է, այսինքն ընդհանրապէս Բ հոլովման վրայ . տներու,  
քաղաքներու, փոխանակ տների, քաղաքների : Բայց այս ձեւերը  
ընդհանրացած չեն :

Երեք հոլովումների մէջ եղած նմանութիւններն ու զա-  
նազանութիւնները պարզ կերեան հետեւալ պատկերի մէջ :

Եղանձնիք:	Յուգհնանիք:
Ա. ՀՈՒ. Բ. ՀՈՒ. Գ. ՀՈՒ.	ԲՈԼՈՐ ՀՈՒ.
Ա. ՕՐ. Բ. Օ.	

Ուղ. Հայց.	—	ի	—	իւն	երներ
Սեռ. Տր.	ի	ու	ան	հան	երի
Բացառակ.	ից	ուց	ից	ից	երից
Գործիակ.	ով	ով	ով	եամբ, ով	երով
Ներդոյակ.	ում	ում	ում	ում	երում

Այս պատկերից երեսումէ, որ եզականում ուղ. Հայց. գործ. և ներդ. ամէն հոլովումների մէջ իրարու նման են, բաց. Ա. և Գ. հոլովման մէջ ից է լինում, Բ-ի մէջ ուց. իսկ սեռականը, որի նման է միշտ և տրականը, երեք հոլովումների համար էլ առանձին վերջաւորութիւն ունի : Յոդնակին բոլոր հոլովումների համար միակերպ է :

Դնենք այստեղ երեք հոլովումների կանոնաւոր ու սուփորական ձևերը, մասնաւոր գիտելիքների ու անկանոնութիւնների վրայ թողնելով առանձին խօսել :

#### § 4. ԱՌԱՋԻՆ ՀՈՒՊՈՒՄ

Եղանձնիք:	Յուգհնանիք:
Ուղ. Հայց.	բաժակ
Սեռ. Տրակ.	բաժակ-ի
Բացառակ.	բաժակ-ից
Գործիակ.	բաժակ-ով
Ներդոյակ.	բաժակ-ում

Այս հոլովման պէս հոլովումնեն

1) Ամէն տեսակ վերջաւորութիւն ունեցող գյականների մեջ մասը :

Ծառ, ծառի, ծառեր.  
Քար, քարի, քարեր.  
Փայտ, փայտի, փայտեր.  
Բանդ, բանդի, բանդեր.  
Լուծ, լծի, լծեր.  
Վարդ, վարդի, վարդեր.  
Բանակ, նակի, նակներ  
Գերան, բանի բաններ.

Բարեկամ, կամի, կամներ.  
Որսորդ, սորդի, սորդներ.  
Բազուկ, բազկի, բազուկներ.  
Աղախին, աղախնի, խիններ.  
Հաշիւ, հաշուի, հաշիւներ.  
Պարտք, պարտքի, քեր.  
Աղաչանք, չանքի, աղաչանքներ.  
Աղօթք, աղօթքի, աղօթքներ.

2) Ընտանեկան յարաբերութիւններ ցոյց տուող բառերը,  
որոնց սեռականը անկանոն է — օֆ և ռջ. երկուսից էլ մէկ մէկ  
օրինակ :

Ուղ. Հայց	Հայր	Քոյր
Սեռ. Տրակ.	Հօր	Քրոջ
Բացառակ.	Հօրից	Քրոջից
Գործիսկ.	Հօրով	Քրոջով:

Հայք բառի պէս հոլովկումեն. մայր, մօր. եղբայր, եղբօր  
և նոցանից բարդուած բառերը. կնքահայր, կնքամայր, հօրհղ-  
բայր, մօրեղբայր, նախահայր ևայն :

Քոյր բառի պէս հոլովկումեն. տէր, տիրոջ. կին, կնոջ.  
աներ, աներոջ. տալ, տալոջ (տալի), երբեմն նաև ընկեր,  
ընկերոջ: Նոյնպէս և սոցանից բարդուածները. տանուտէր,  
տիկին, տանտիկին. հօրաքոյր, մօրաքոյր: — Յողնակին եր-  
կուսինն էլ կանոնաւոր է. հայրեր, մայրեր, եղբայրներից, քոյ-  
րեր, վեցայն :

Այս ներդոյականը չէ լինում հօրում, մօրում ևայն:  
այլ հէլ նախագրութեամբ սեռական. հօր մէջ, եղբօր մէջ,  
կնոջ մէջ: Խոկ գործիսկանը սովորաբար հէտ նախագրութեամբ.  
հօր հետ, մօր հետ, քոյրերի հետ: — Առհասարակ շնչաւոր  
առարկաների գործիսկանի համար հետեւալը նկատելու է: Եւ

Ըէ զործողութիւնը շնչառոր առարկայի ձեռքով կամ միջանորդութեամբ է կատարվում, բուն զործիական է զրվում. իսկ եթէ առարկան զործողութեան մասնակից է, այն ժամանակ հետ նախաղը թեամբ սեռական է վարվում: Հետեւ ալ օրինակի մշջ երկու ձեռն էլ երեսում են. Յովուշի իր եռ բայց նորդ մասնակի լուսում, այսինքն թարգմանի միջնորդութեամբ: Այսպէս զարձեալ՝ չիր վաղ ապա և չիր հետ վաղ ապա: — Բայց բնտանեկան լիզուի մշջ զործածական է. հօրով, հօքով ապարիս, վորսանակ հօրու հետ, հօրու հետ ապրիս:

### § 5. ԵՐԿՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

#### ԵՊԱՌԵ

Առջ.

Սեռ.

Բացառակ.

Զործիակ.

Ներգոյակ.

#### ՊԵՐԵ

Պինի

Պինու

Պինուց

Պինով

Պինում

#### ՅԱԳԻԱՌԵ

Պինիաներ, պինիք

Պինիաների

Պինիաներից

Պինիաներով

Պինիաներում:

### ԱՅՍՊԵ

1) Բոլոր է վերջացած բառերը, որոնց յողնակի ու զզականը սովորաբար չ-ով է վարվում ժողովրդական բարբառներում, իսկ զբառոր լիզուն խառն զործ է զնում երկու ձեռերն էլ. մատանիներ, թշնամիներ, թշնամիներ:

Կենդանի, գանու-

Աղաւնի, զաւնու.

Զիթենի, թենու.

Եկեղեցի, զեցու.

Հողի, գու.

Քաղաքացի, քացու.

Ոսկի, ոսկու.

Խորենացի, նացու.

Փոշի, փոշու.

Բազրաստոնի, տունու.

4. **Սասացական զերանունները** յօդ առնելով՝ զոյականի զօռութիւն ունին. իմ կամ իմը, քոնչ, իրանչ, մերչ, ձերչ, իրանցը (ինչպէս աեսնում ենք, ձայնաւորով վերջացածները յօդից առաջ առանց առան են առնում): Սոքա արեմական հայերէնի հակառակ՝ ոչ հոլովվում են և ոչ յոդնակի ունին. միայն Ֆէր, Ֆէր առանձին ձեռով լինում են յոդնակի մերոնք, Ֆէրոնք (գրբր. մերայինք, ձերայինք), որ նշանակում է մեր, ձեր ընսանիքը, մերձաւորները:

5. **Սասացական զերանունները**, ինչպէս յայսնի է, էական զերանունների սեռականից էլ սասացականներ են կաղմվում: Այս ձեռով երբեմն ցուցական զերանունների սեռականից էլ սասացականներ են կաղմվում, որ զոյականի հետ են վարփում ածականաբար. Այս կամ որպա եղայրը, որպա եղբօր, որպա եղբօրից. Կրտ եղայրները, Կրտ եղայրներից ևայլն: Իսկ եթէ մենակ մնան, յօդ են առնում և զոյականի զօրութիւն ունին. սրանչ (սորանչ), դրանչ, նրանչ. սրանցը (սոցանչ), դրանցը, նրանցը:

§ 16. ՀԱՐՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԴՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ.— Հարցական զերանունների հոլովումը և գործածութիւնը շատ պարզ է. բայց կան մի քանի գիտելիքներ, որոնց վրայ հարցաւոր է ուշագրութիւն դարձնել:

1. **Ո՞ւ հարցականը շնչաւոր առարկաների համար գործ է դրվում և միշտ զոյական է:** Հոլովվում է այսպէս. Եղ. Ուղ. Ո՞ւ. Ուղ. Ո՞ւ. Տր. և Հայց. Ո՞ւմ. Բայց. Ումի՞ց. Իսկ գործ. և Ներդ. Աետ և. Ֆէջ նախադրութիւններով տրական—Ո՞ւմ հետ Ո՞ւմ Ֆէջ: Յոդականում միայն ուղղականը վարփում է երբեմն՝ Ովեէր: Իսկ միւս հոլովները, երբեմն և ուղղականը, լրանում են՝ ո՞ւ հար-

ցականով : Ովչե՞ր կամ որո՞նք եկան : Ուր՞նց համար են այս ընծաները :

Այսպէս երբեմն եղակի տրականն ու հայցականն էլ առանում են ո՞վ հարցականից . Այլի՞ համար զարդարուիմ , որի՞ աչքը հրապուրեմ . փոխանակ սովորական ո՞ւ համար , ո՞ւ աչքը : — Կան և զրաբար ձեռվ զրողներ որո՞յ համար ևայլն , որ բոլորովին անտեղի է :

2. Ի՞նչ անշունչ առարկաների համար գործ է ածվում և գոյական է , եթէ մենակ է , որ երբեմն բան բառով է վարվում . Ի՞նչ ես կամենում : Ի՞նչ բանն է պէտք այս ծառը , որ պառուղ չէ տալի : Ածական է , եթէ եթէ գոյականի հետ է . Ի՞նչ գործ , ի՞նչ կարծիք : Հողովումը կանոնաւոր է . Ուղ . և Հայց . Ի՞նչ . Սեռ . և Տր . Ի՞նչի . Բաց . Ի՞նչի՞ց . Գործ . Ի՞նչո՞ւ . Ներգ . Ի՞նչո՞ւմ : Յողնակի ուղղականը լինում է Ի՞նչի՞ւ . Խոկ միւս հողմները անզործածելի են : — Գաւառական բարբառներում սկզբնական ին փոխվում է և սնչի՞ց . սնչով , սնչո՞ւմ :

3. Ո՞ր թէ շնչաւոր և թէ անշունչ առարկաների հետ վարվում է իրեւ ածական . իսկ եթէ մենակ մնաց , ո՞ր գոյական է և յօդ է առնում :

Ի՞նչըս մնաց այն օրից ,

Ո՞ր ջրամօտ գեղերըս ,

Ո՞րը իմ շեն քաղաքից ,

Ո՞ր բերկրայի տեղերըս :

§ 17. ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒԱՆ՝ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆՔ . — Ու յարաբերական դերանունը գոյական է , և հողմնում է այսպէս .

Եղ.	Ուղ .	որ	Օ՞գն.	որսնք
Սեռ .	որի		որոնց	
Տ .	որին		որսնց	
Բաց .	որից		որոնցից	
Գործ .	որով		որոնցով	

«Աերգոյականները լինում են մէջ նախադ. որի մէջ, որոնց մէջ  
(որոնցում): Յարաբերական գերանուան գործածութեան վրայ  
կան մի քանի հարկաւոր զիտելեքներ:

1. Յայտնի է թէ որ յարաբերականը յարաբերում կամ  
առաջ է բերում մի գոյական անուն կամ դերանուն, որ կոչ.  
վում է յարաբերեալ և սովորաբար յարաբերականից առաջ է  
դասվում: Այս որ յարաբերականը թուով համաձայնում է  
իր յարաբերեալի հետ, իսկ հոլովով համաձայնում է երկրոր-  
դական նախադասութեան մտքին նայելով. Սոկրատ, որին դա-  
տաւորները դատապարտել էին մոլախինդ խմելու, առաքինի  
քաղաքայի էր:

2. Միայն ուղղական հոլովում յարաբերական դերանունը  
(որի հետ նոյնանում է երբեմն և հայցականը) կարող է յոդ-  
նականի տեղ եզակի վարուիլ, եթէ միայն յարաբերեալից բա-  
ժանուած չէ միջանկեալ բառերով. ինչպէս. Այն մարդիկը,  
որ մեր դէմ ու դէմը նստած են, և որոնք միմեանց հետ խօ-  
սում են, մեր բարեկամներն են: — Փոխանակ՝ Այն մարդիկը,  
որոնք նստած են:

3. Եթէ յարաբերեալը զօրութեամբ է իմացվում, յարա-  
բերականի հետ կարող է գործ դրուիլ որ շաղկապը, աւելի  
բացայայտութեան համար. և այն ժամանակ յարաբերականը  
եղականում և յօդն է առնում, իսկ յոդնականում առանց  
յօդի է մնում. Ո՞ն որ \*, որին որ. որոնք որ, որոնց որ: Ահա օգ-  
տակար գըքեր. ընտրէ ո՞ն որ կամենում ես: — Փոխանակ ասե-  
լու՝ ընտրէ այն գիրքը, որ կամենում ես, կամ պարզապէս յարա-  
բերականի վրայ յօդ դնելով. ընտրէ որը կամենում ես: — Բայց  
այս ձեւը յաճախելու չէ, մանաւանդ վերջահովում:

\* Որովհետեւ ուղղական յարաբերականի հետ ու շաղկապը ար-  
տաբերվում է իբրև որ, այս պատճառով ոմանք կից են զրում ո՞նք:

4. **ԱՅ**, այս գերանուների տեղ իրեւ յարաբերեալ գործ են ածվում ով և ինչ: Այսպէս ասում ենք. ինչ որ կը ցանես, այն էլ կը հնձես: Ով որ կամենում է երջանիկ լինել, քչով պիտի բաւականանայ: Անսովոր երոպական ձև կը լինէր, եթէ առելինք. Նա որ կամենում է երջանիկ լինել.— celui qui désire être heureux, կամ տօտ ետք խանդի լինել.

5. **ՈՐ** գերանուան եղակի ուղղականը յօդով կը կնուած՝ գործ է ածվում մէլլ . . . . մէլլ, կամ ամանք . . . . ամանք բաւաերի տեղ . ինչպէս. Ո՞ր ծիծաղում է, ո՞ր լաց լինում: Հաւաքուած բազմութիւնից ո՞ր գիրք էր կարդում, ո՞ր խօսում, ո՞ր էլ խաղում էր: Իսկ վերջահողովարում աւելի մէն բառն է վարվում. Մէլլ շատ տուեց, մէլլ քիչ:

6. **ԵՐԲ** որ մի զիսաւոր նախադասութեան հետ գտնվում են հետզետէ երկու կամ աւելի երկրորդական նախադասութիւններ, որ յարաբերականով կապուած, յարաբերական դերանունը միանգամ յիշուելով՝ երկրորդ անգամ զեղչվում է, եթէ միայն նոյնահողով է. ինչպէս. Արաբացիք, որոնց ձիանիքը յարգի և աղջերը օգտակար են, մինչեւ այսօր թափառական կեանք են վարում: Փոխանակ և որոնց աղջերը, որ եւրոպական լեզուների ձև կը լինէր:

§ 18. ՈՐՈՇԵԱԼ ԵՒ ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ. — Որոշեալ և անորոշ գերանունները, ինչպէս ասացինք, ածական են եթէ գոյականի հետ են և գոյական՝ եթէ մենակ են, և այն ժամանակ յօդ են առնում: Այսպէս ասում ենք անխատիր. Խարսխաչիտր մարդ իւր գործին գնաց և լուրջառնչեալը իւր գործին գնաց:

**ԱՅ** գերանունների գործածութեան վրայ մի քտնի գիտելիքներ կան:

1. Ոմանք եղակի չունի և անկանոն է հողովարում. Ուղ. Ոմանք. Հայց. Սեռ. Տիր. Ոմանց. Բաց. Ոմանցից. Իսկ գործ և Ներգ

Հետ և մեջ նախողիրներով սեռական ըմանց հետ. ըմանց թշ:

2. Ու և ինչ մենակ չեն վարվում, այլ միայն բացասաբար՝ ոչ ոք, ոչ ենչ, և գոյականաբար վարուելիս՝ հոլովվում են այս պէս. ոչ ոք, ոչ ենչ. ոչ ոքից, ոչնչից. (ոչ ոքի հետ). ոչնչով. (ոչ ոքի թշ) ոչնչում: Եւ ոքից չէ քաշվում: Ոչնչով մեղաւոր չէ: — Ոմանք գրում են առանց սղելու. ոչ ինչից, ոչ ինչով:

**Ժաղովրդական բարբառներում հաստատականի մոքով զործ են զրվում ոչ թի (կարդա օֆֆի) և եթի բարդ գերասունները, որոնց ծագումը շատ հին է: Արդէն Պ. Փարավեցին ասում է. Զհայ այր պոք Թ մոգ ոչ առնէք: Եւ փոքր ինչ ներքեւ. Ամենայն ելք Արեաց աշխարհիս աջող լինի և անսխալ: — Բայց այս ոչ թի, իբ թի ձեւերը նոր զրաւոր լեզուն չէ ընդունում:**

3. Հայերենում ո՛վ անորոշ գերանուանն, մոքով զործ է ածագում մարդ բառը առանց յօդի, \* որ համապատասխանում է ֆրանս. on անորոշ գերանուանն, որ ինչպէս յայտնի է, հօմաք բառի կրթատութիւնն է: Մարդ չէ իմանում թէ ինչ պատասխան տայ այսպիսի անտեղի խօսքերին:

4. Ամէն ամենայն. — Սոքա եղակի գոյականի հետ իտրադառն չեւրի միաք ունին, յոգնականի հետ՝ բոլոր: Ամէն կամ ամենայն մարդ նշանակում է իւրաքանչիւր մարդ. ամէն կամ ամենայն մարդիկ — բոլոր մարդիկ. Ամէն մենակ էլ է վարվում իրեւ գոյական, և այն ժամանակ կարող է յօդից առաջ + տառն առանել ու հոլովուիլ. Ամէնահը, ամէնափին, ամէնափից, կամ ամէնը, ամէնն, ամէննից: Իսկ ամենայն մենակ չէ վարվում և միշտ ածական է:

5. Արա գերանուան ժողովրդական ձեւն է մէկ էլ, որի առելի հին ձեւն է մէկ տալ: Իսկ տալ (ուրիշ) գերանունից սր-

\* Ուրիշ է ամառ + ցուցական յօդով, ու զործ է ածագում առանձին ձեւով, վոխանակել յարուիլ: Կամ մարդացին բնութիւնը, ինչպէս. Մարդականացու է:

դուելով՝ կազմվել է էլ: Այսպէս ասում են. Արէկ չէ Տէէլօր. Էգուց չէ էլօր:

### Ե. ԲԱՅ

§ 19. ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ. — Ամենայն  
բայ կաղմըում է երկու որոշ մասներից, մինը անփոփոխ, որ կոչ  
վումէ արմատ, և միւսը փոփոխական, որ կոչվումէ վերջաւորու-  
թիւն, ինչպէս Փէռլբայի մէջ առմատ է և և վերջաւորութիւն:

Բոլոր կանոնաւոր բայերը չորս կերպ կարող են փոփոխուիլ  
կամ խոնարհուիլ, ուրեմն և մենք ունինք չորս լծորդութիւն,  
որոնք որոշվում են միմեանցից անորոշ գերբայի (աներեսոյթի)  
վերջաւորութեամբ: Առաջին լծորդութեան վերջաւորու-  
թիւնն է Ել. ինչպէս զիր—ԳՅԵԼ. երկրորդինը Ել. աշխատանք—  
Պշկատառ—Ել երրորդինը՝ ալ. Հաւատ—հաւատ—ալ. իսկ չորրոր-  
դինը (Կ եկամուտ տառով) հալ. իմանալ:

Բայի կրած այլ և այլ փոփոխութիւնները ցոյց են տալի  
գործողի ու նորա գործողութեան մէջ եղած յարաբերու-  
թիւնները: Այս յարաբերութիւնները չորս տեսակ են. ԳԵՆՔ,  
ԱԿ, Եղանակ և Ճամփառ: Երկու առաջինների յատկութիւն-  
ները յայտնի են. Ֆուռմ է բայի եղանակների ու ժամանակ-  
ների վրայ մի քանի խօսք ասել:

Առ Հայերէնի եղանակները չորս են, սահմանական, ստո-  
րադասական, հրամայական և զերբայ, որոնք ունին այլ և այլ  
գլխաւոր և երկրորդական ժամանակներ: Գլխաւոր ժամանակ-  
ները, բայի սահմանական ներկայից և անցեալ անկատարից  
պարզ են, իսկ երկրորդականները բաղադրեալ: Տեսնենք նախ  
գլխաւոր ժամանակների կազմութիւնն և ապա երկրորդական-  
ներինը:

Ա. ԳԼԽԱԿՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ. — Չորս եղանակների գլխաւոր  
ժամանակները սոքա են.

**Սահմանական եղանակն ունի հինգ ժամանակ.** Ներկայ,  
Անցեալ անկատար, Անցեալ կատարեալ, Ապառնի և Ապառնի  
պայմանական :

**Ստորագասականն ունի երկու ժամանակ,** Ներկայ և Անց  
յեալ անկատար :

**Հրամայականն ունի մէկ ժամանակ,** որ թէ Ներկայի և  
թէ Ապառնիի մոքով է վարվում:

**Դերբայն ունի չորս ժամանակ.** Անորոշ, Ներկայ, Անցեալ  
և Ապառնի; — Վերջին երեքը կոչվում են նաև չորսութիւն:

### **Սահմանական եղանակ.**

1. **Ներկայ ժամանակը կազմվում է անորոշ գերբայի եւ, իւ**  
**և աւ վերջաւորութիւնների աեղ դնելով ուս մասնիկը և էս**  
**օժանդակ բայի ներկայ ժամանակի ձևերը. Գրեւ, աշխատեւ, հաս-**  
**տափուլ, իմանալ բայերի ներկան լինումէ. Գրում եմ, աշխատում եմ,**  
**հաստափում եմ, իմանում եմ \***:

2. **Անցեալ անկատարը կազմվում է ներկայի վերջաւորութեան**  
**վրայ աւելացնելով եմ օժանդակ բայի անցեալ անկատարի**  
**ձևերը. Գրում են, աշխատում են, հաստափում են, իմանում են:**

**Այս ուս մասնիկը ջուղայեցոց ճան մասնիկի հետ մեծ**  
**խտիր են դնում արեկելեան և արեմուեան բարբառների հո-**  
**լովման և խննարհման մէջ; Արեմուեան իւ մասնիկով ձևացած**  
**սահման. Ներկան ու անց. անկատարը արեկելեան բարբառների**  
**մէջ ապառնի նշանակութիւն ստանալուց յետոյ, հարկ էր**  
**ուրիշ միջոցի դիմել պակաս ժամանակները լրացնելու համար;**  
**Ուս (ա մ, ը մ,) և ճան նոյն բարբառների ներգոյականակերտ**

\* Ումանք սովորութիւնն են արեկ էական բայի հետ կից գրել եւ-  
ուումէ, պէսնումէն և հարկ եղած ժամանակը բաժանել նոյն հիման վրայ.  
Խօսում — մէմ, պէսնում — մէն ևայլն, բայց հայերէն լիզուի շեշտապրութիւնն  
կանոնը պահանջում է առանձին գրել. Խօսում եմ, պէսնում են:

մասնիկներ են \* , որոնք այս տեղ զործ են զրվաւմ սահմ. ներկայի և անց. անկատարի ժամանակները կազմվու. այնու պէս որ մեր գրամ էմ, խօսում էի և Զուղայեցոց Գլուխ ամ, Գնաման և նշանսակում են խսկապէս Գրեւու մէջ էմ, խօսելու մէջ էի, Գնաման մէջ էի: Ճիշդ այս մաքով վարում էին հները (Ե, ԺԱ, ԺԲ, Պար) անորոշ զերբայի ներդոյականը էմ օժանե զակ բայի ներկայ և անց, անկատար ժամանակներով, 'ի խօս ու էմ, 'ի ծառնել էր: Յոյնք են 'ի Գու ՚ի վերայ մեր: Նոր լեզուներից անգլերէնը, բաց ի սովորական ներկայից, ունի և մի բաղադրեալ ներկայ, որ կազմվում է ոց վերջացած դերբայով (ընդունելութիւն ներկայ) և ու Յ (լինել) օժանդակ բայով և զործ է ածվում այն ժամանակ, երբ հարկ է ցոյց տալ թէ զործողութիւնը զեռ ևս շարունակվում է. they open նշանակում է ils ouvrent; they are opening — ils sont en train d'ouvrir, նոքա բաց են անում: Արևմտեան հայերէնը զործողութեան շարունակութիւնը բացատրելու համար սահմ. ներկայի և անց. անկատարի վրայ աւելացնում է իր մասնիկը, որ սեպհականած է տաճկերենից — յօթ: Այսպէս կ'երթայ իր, կը խօսէր իր — նշանակում է երթալու վրայ է, խօսելու մէջ էր:

ՅԱնցեալ էտարեալ կազմվում է անորոշ զերբայի վերջաշառութեանների տեղ գնելով եցի, եցաւ, ացի, ացայ մասնիկները. զրել — զրեցի, աշխատիլ — աշխատեցայ, հաւատալ — հաւատեցայ, իմանալ — իմացայ:

4. Ապահնին կազմվում է անորոշ զերբայի վերջաւորութիւնների տեղ գնելով էմ բայի ներկայ ժամանակի ձևերը և սկիզբ

\* Այն զանազանութեամբ միայն, որ Զուղայեցոց մասն իրեւ ներգոյականակերտ մասնիկ միայն բայի արմատի վրայ է դրվում. Գլուխ, Գնաման, Ճիշդ, Խակ գոյականների և զերբանունների հոլովման մէջ պահուած է ուշ ընդհանրական մասնիկը. Խովան, Խոփուամ, Թողուամ:

դասելով իւ (է) մասնիկը . իւ գրեմ , է'աշխատէմ , իւ հաւատամ , է' իմաստ :

5. **Երկրորդ կամ պայմանական տպառնին** , որ զրեթէ միշտ վրանս . պայմանական եղանակի ներկայ ժամանակի (Conditionnel présent) միտքն ունի , կազմվում է անորոշ գերբայի վերջաւուրութիւնների տեղ գնելով էմ բայի անց . անկատարի ձևերը և սկիզբը դասելով նոյն իւ մասնիկը . է'աշխատէմ , իւ խօսէմ , իւ հաւատապայլ . է' իմաստացն :

**Այս մասնիկը** (որի միւս ձևերն են կու , կի , կ') Պետերաման գերմանացի հայագէտի կարծիքով , իր ծագումն առանում է կամ գոյականից , որի արմատն է կամ — ցանկութիւն , դուցէ այնպէս՝ ինչպէս որ անգլիերէն լեզուի մէջ նոյն կամ Քլ (will) բայց կազմում է առանձին ապառնի և թէական ժամանակները : Բայց Այտընեան վարդապետը ուրիշ աւելի հաւանական ծագում է տալի այդ մասնիկին , որ երեան է գալի այն ժամանակ , երբ հին լեզուի ստորագասականն ու ապառնին անյայտանում և նոցա տեղ սահմ . ներկան է բռնոււմ , ստորադ . անկատարի տեղ էլ — որ հին լեզուն չունէր — սահմ . անկատարը : Արդէն և դարու առաջին կարգի մատենագրների գրուածներում գտնում ենք գործ գրած այս ձևերը դէմ առ դէմ խօսակցութեան մէջ . Թող գրեմ և ցացանէմ մէծ թագաւորին (Եղիշէ) : Աղաչէմ հրամայէս բանալ զդիւանդ (Խորինացի) : Թող ինքն երթայր և աստիզը : Այս կերպով հին սահմանականը ստորագասականի և ապառնիի տեղն անցնելուց յետոյ , լեզուի մէջ երեան եկաւ

\* Ինչպէս յայտնի է , Գ. և Դ. լծորդութեան բիյերում էմ , էլ օժանդակների է , և ներդաշնակութեան համար դուրս են ընկնում . որովհետեւ աէ , ոէ հաջիւնների դուզաւորութիւնը չեն պատահում հայերէ-նում :

ի թիւ մասնիկը (իսկ զրքերումը շատ ուշ — մբ դառը լրումն է երեսում), որ որոշ սահմանն է զնուում մէկ կողմից հին և նոր լեզուների և միւս կողմից արևելեան և արեւմը տեան նոր հայերէնների մէջ։ Այսընեան վարդապետը (եր. 76—78) էւս, էւ, ոչ է՛ մասնիկները կալ բայի սահմ։ ներկայի եղ. Յրդ գէմքից և ու շաղկապի բաղադրութիւնից առաջ եկած է համարում, այսպէս որ է՛ու հնոյ, է՛ու տեսոնէ, է՛ու հոյն ամփոփուած են էայ ու հնոյ, էայ ու տեսոնէ, էայ ու հոյն սկզբնական ձևերից։ Կալ բայի օժանդակ բայի պաշտօն վարելու ապացոյցն ունինք ոչ միայն հին լեզուից \* , այլ և մեր նոր հայերէնի մէջ գտնում ենք մի տեսակ անցեալ ժամանակ, որ այդ բայով է կազմվում և բաւական գործածական է արևելեան բարբառներում։ լսոն էամ, տեսոն էամ, գնացած եմ, գնացած եմ։ Իսկ արևմտեան բարբառներից մինը գեռ մինչև այսօր անարատ պահած է էայ գլխաւոր բայից յետագաս. այսպէս տեսոնէ էայ, հոյն էայ։

### Ստորագասական եղանակ.

Այս եղանակի երկու զլիսաւոր ժամանակները իրանց կազմութեամբը չեն զանազանվում ապառնի ժամանակներից, միայն էւ մասնիկի տեղ առնում են սովորաբար որ (զաւ, շուրջ) պատճառական շաղկապը. այնպէս որ

1. Ստորագասական ներկան իր կազմութեամբը զրոց սահմ։ ներկայի նոյն և նմանն է. (որ) գլուխ, (որ) ոշիտուիչ (որ) հոտապահ, (որ) էմանուլ։

\* Ահաւասիկ մէկ երկու օրինակ. կայ հնոյ մարդկան նշուանէւ, Ահայ քեղ տունչիւ. Ամեննեցուն մինչ յանդի հոյ լինեւ ասաւնէ էայ ատենին Քրիստոսի. Փախանակ ասելու՝ մնուանելոց ենք, տանջելոյն ևս, յանդիման վիներց ենք։

2. Անշատարին էլ զրոց սահման է. (ո՞) Գլէկ, (ո՞) աշխատարի նման է. (ո՞) Գլէկ, (ո՞) աշխատարին, (ո՞) հատադայն, (ո՞) եմանայք :

### Հրամայական եղանակ.

Այս եղանակը կազմվում է միշտ անցեալ կատարեալից: Ա, Բ, Գ լծորդութեան եղակի հրամայականը կազմվում է կատարեալի ցի, պայ վերջաւորութիւնները բաց թողնելով. զրեցի — Գլէկ', աշխատեցայ — աշխատեց' \*, հաւատացի — հաւատաց': Խսկ Դ. լծորդութեան եղ. հրամայականը կազմվում է կատարեալի վերջաւորութեան պանկը փոխելով Եթ. իմացայ — իմաց ցի'ր: — Կեզուի բռնածընթացքին նայելով՝ միւս լծորդութեան բայերն էլ կարող են Եթ լինել հրամայականում. այսպէս Գլէկ' և Գլէց' և աշխատեց' և աշխատեցը, հաւատաց' և հաւատացը՝ հաւատացէս ընդունելի են \*\*:

Յողնակի հրամայականը կազմվում է առ հասարակ կատարեալի վերջաւորութեան է, այ վանկերի աեղ դնելով էտ. զրեցի — Գլէց' \*, Խօսեցայ — Խօսեց' \*, հաւատացի — հաւատաց' \*, իմացայ — իմաց' \*:

### Դերբայ.

1 Անորոշ դերբայը, ինչպէս տեսանք, ունի չորս կամնոնաւոր վերջաւորութիւն, որոնց վրայ հիմնվում են չորս կամնոնաւոր լծորդութիւնները: Բայց կան ուրիշ բայի վերջաւորութիւններ էլ այլ և այլ եկամուտ տառերով. տեսնել, հասնիլ, փախանիլ, թագնել և այլն, որոնց խնարհման մեջ մի քանի դարձառութիւններ կան, ինչպէս որ չորս լծորդութեան ընթացքում կը տեսնենք:

\* Յայտնի է եր և բառի վերջը մենակ չէ միաւմ, այլ վախովումէ է:

\*\* Այս աեղ յայտնի երեսում է Երևանի բարբառի աղբեցաւթիւնը:

2. Աւերէտն կազմվում է անորոշ դերբայից և անցեալ կատարեալից: Եթէ Ա և Բ լծորդութեան բայ է, անորոշ դերբայի Ել և Ել վերջաւորութիւնների տեղ զրվում է ոչ մասնիկը. զրել — Գրու, աշխատիլ աշխատալ իսկ Եթէ Գ և Դ լծորդութեան բայ է, կազմվում է կատարեալ ժամանակի և Ել այ վերջաւորութիւնների տեղ դնելով նոյն ռու մասնիկը. Հաւատացի — հաւատացած, իմացայ — իմացու:

3. Անցեալ գերբայը կազմվում է միշտ անցեալ կատարեալից, Ա և Բ լծորդութեան բայերում կատարեալի պարզ արմատի վրայ աւելացնելով Ել և ած մասնիկները. զրեցի — Գրէլ, Գրած, աշխատեցայ — աշխատէլ, աշխատած. Գ և Դ լծորդութեան բայերում կատարեալի է և այ վանկերի տեղ դնելով Ել և ած. Հաւատացի — հաւատացած, հաւատացած, իմացայ — իմացէլ, իմացած:

4. Ապառնի դերբայը կազմվում է անորոշ դերբայի վրայ աւելացնելով ու. միայն Ել վերջաւորուած բայերի և տառը փոխվում է Ե. Գրէլաւ, աշխատելուա, հաւատափալու, իմանուլու: — Ապառնի դերբայի վերջաւորութիւնը, որ Համապատասխանում է զրոց այ \* վերջաւորութեանը, պիտի զանազանուի անորոշ դերբայի սեռական և տրական հոլովերի վերջաւորութիւնից, որոնց հին ձեն. Էր նոյնպէս այ:

Բ. ԵրկրորդԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ. — Երկրորդական բաղադրեալ ժամանակների մեծ մասը կազմվում են Ել և լինի օժանդակակի բայերով ու անցեալ և ապառնի դերբայներով. մի քանիսն էլ պիտի կամ պէտք է դիմագուկ բայով (որ այստեղ օժանդական է ապառնի ապառնի մի երկու տեղ գործ զրուած երեսում է Գ և Ել դարերի մատենապղներում. Զինչ այն բանք իցին, զոր զու ընդիմական է ապառնի պատճենը, Աս ծերացեալ եմ և չէ լինելու առն: Ճիշդ պատճեն ապառնի մի պատճեն և մինք, իօնէլու ես, չէ լինելու:

\* Սորա եղակի ձեզ մի երկու տեղ գործ զրուած երեսում է Գ և Ել դարերի մատենապղներում. Զինչ այն բանք իցին, զոր զու ընդիմական է ապառնի պատճենը, Աս ծերացեալ եմ և չէ լինելու առն: Ճիշդ պատճեն ապառնի մի պատճեն և մինք, իօնէլու ես, չէ լինելու:

դակ բայի պաշտօն են վարում) և ապառնիի ու ստորագաւսականի ժամանակներով:

### Սահմանական եղանակն ունի

ա) **Զորս բազագրեալ ժամանակներ անցեալի համար.**

1. **Յարտկապար անորոշ. գրել եմ, գրել ես, գրել է, գրել ենք, գրել էք, գրել են: Իմացել եմ, իմացել ես, իմացել է, իմացել ենք, իմացել էք, իմացել են:**

2. **Յարտկապար որոշեալ. գրած եմ, գրած ես, գրած է, գրած ենք, գրած էք, գրած են: Իմացած եմ, իմացած ես, իմացած է, իմացած ենք, իմացած էք, իմացած են:**

3. **Գերակապար անորոշ. գրել էի, գրել էիր, գրել էր, գրել էինք, գրել էիք, գրել էին: Իմացել էի, իմացել էիր, իմացել էր, իմացել էինք, իմացել էիք, իմացել էին:**

4. **Գերակապար որոշեալ. գրած էի, գրած էիր, գրած էր, գրած էինք, գրած էիք, գրած էին: Իմացած էի, իմացած էիր, իմացած էր, իմացած էինք, իմացած էիք, իմացած էին:**

բ) **Զորս բազագրեալ ժամանակներ ապառնիի համար.**

1. **Ապառնի հարվարդական (ներկայ). Պիտի կամ պէտք է գրեմ, պիտի գրես, պիտի գրէ, պիտի գրենք և այլն: Պիտի կամ պէտք է իմանամ, պիտի իմանաս, պիտի իմանայ և այլն:**

2. **Ապառնի հարվարդական (անկատար). Պիտի կամ պէտք է գրէի, պիտի գրէիր, պիտի գրէր, պիտի գրէինք և այլն: Պիտի կամ պէտք է իմանայի, պիտի իմանային:**

3. **Ապառնի ըշչական (ներկայ). Գրելու եմ, գրելու ես, գրելու է, գրելու ենք, գրելու էք, գրելու են: Իմանալու եմ, իմանալու ենք:**

4. **Ապառնի ըշչական (անկատար). Գրելու էի, գրելու էիր, գրելու էր, գրելու էինք և այլն: Իմանալու էի, իմանալու էինք:**

**Ստորագաւսականն ունի երկու բազագրեալ ժամանակներ.**

1. **Յարտկապար. (Որ) գրած, լինիս, գրած լինիս, գրած լինի,**

զրած լինինք, զրած լինիք, զրած լինին: (Որ) իմացած լինիմ, իմացած լինինք:

1 Գրելուտառը. (Որ) զրած լինէի, զրած լինէիք, զրած լինէր, զրած լինէր, զրած լինէինք, զրած լինէիք, զրած լինէին: (Որ) իմացած լինէինք:

**Վ**երջին երկու ժամանակները իւ մասնիկով կամ ողբերյով և ելեւ շաղկապով վարվում են առաջանակների և պայմանական եղանակի մոքով. զրած կը լինիմ. պիտի իմացած լինի. զրած կը լինէի. եթէ իմացած լինէի:

Բաց 'ի սորանից եղանձն բայի անցեալ գերբայը եղել (Երեւանցոց էլեւ և թիֆլիսեցոց էլեւ) այլ և այլ բաղադրեալ ժամանակներ է կազմում, որոնք ցոյց են տալի թէ գործողութիւնը օտարի վկայութեամբ է հաստատվում: Խօսում է եղել. Տեսոծ է եղել. Տրանշանիս է եղել. ևայլն: Կամ լինձն բայի աւպանին ու ստորագասականը սահմ. ներկալի ձեռվ թէական և ստորագ. ժամանակներ. Աւատում իւ լինի, խօսում կամ խօսելիս իւ լինէին, (որ) սոսում լինէին, լինէին ևայլն:

Թաղնում ենք ուրիշ բաղադրեալ ձեերը, որոնք ժողովրդական բարբառներում գործ են զրվում ժամանակների այլ և այլ բարակութիւնները բացատրելու համար: Այս տեղ յիշենք միայն, որ բաղադրեալ ժամանակների օժանդակ բայերը կարող են իրանց բայից բաժանուիլ, յետ ու առաջ դասուիլ, զեղչուիլ, որով խօսքը առանձին ոյժ ու կենդանութիւն է ստանում: Ահա մի քանի օրինակ ժողովրդական բանաստեղծի (Աբովյանցի) գրքից հանած, որովհետեւ մեր զրադէմները դժբաղդաբար շատ քիչ օգուտ են քաղլում լիզուի այս գեղցիկ յատկութիւններից:

Պաշտ ու գետին դմբդմբում են, ոչըդում.

Ամպի դոռոցն աշխար իրար զլսով պալիս:

Անցվորական՝ ինչ են ճամփիդ միջառում,

գնաւ էլայ մէկ քարի տակ, որ պոճնիս:

ԱՌա՞ արեգակ, բարի՞ հրեշտակ, մեր մտի,  
ինչ ես կտնգնել, սիրուն աչքերդ բայ արել  
Հայի՞ համար որ դաւս էլ չգաս գու խկի,  
դարդ չի անիլ, վաղուց է նրա աստղը Առջել:

Տնկած ծառերդ փուշ են դատակնել ինձ սպանում։ պահած ծաղկ կը ներդ կրակ էն դատակնել ինձ էրտամ, նորովամ։ ման էկած տեղերդ՝ աչքիս լսումը մզրախի պէս ցցւամ, սիրոս դուս ճռիւ սում։ — գնանիք նրեւանու բերդը օրը Տլնուամ, խաւարը բառանում, աչքերս սիրովամ, սիրոս արդուամ ու ինչ տեղ որ ծնելեմ, էն հողն էլ աչքիս փուշ դատակնել, սրտիս դանակ։

Օրինակներից երևում է որ օժանդակ բայերի զեղչուելովը խօսքը առանձին ոյժ ու կենդանութիւն է ստանում, և դըժուար է այս մասին որ և իցէ կանոն աւանդել. ընտիր Ճաշակը ամէնից լաւ առաջնորդը պիտի լինի այսպիսի դէպքերում։ Իսկ օժանդակ բայերի դասաւորութիւնը հիմնվում է այս ընդհանուր կանոնի վրայ. եթէ դրոզը կամենում է խօսքի բոլոր ոյժը զործողութեան մէջ կենտրոնացնել, բուն բայը առաջ է դասվում և օժանդակը յետոյ. ինչպէս. Ես տեսել եմքո եղբ բօրը և նրա հետ խօսել (եմ)։ Իսկ եթէ խօսքի զօրութիւնը ուրիշ որեւիցէ բառի մէջ է կենարոնացած, այն բառը օժանդակ բայի հետ նախադասվում են և բուն բայը յետադաս է է մնում. Ես ժամանակուն եմ տեսել տեսել և նորո հետ (եմ) խօսել։ (Այսինքն՝ քո եղբօրն եմ տեսել և ոչ մի ուրիշի, նորա հետ եմ խօսել և ոչ ուրիշ մարդու հետ։) Այս է պատճառը որ հարցական և բացասական խօսքերի մէջ հարցական և բացասական բառերը օժանդակ բայի հետ առաջ են դասվում և բուն բայը յետոյ. ինչպէս. Ո՞ւնի ես տեսել։ Ո՞վ եր եկել։ Ի՞նչ զարմանալի բաներ եմ լսում։ Զի՞մ իմանում թէ ի՞նչ է է մտածում, որ մինչև հիմայ դեռ ոչինչ տեղեկութիւն չէ տուել մեզ բռնած զործերի վրայ։

§ 20. ԱՌԱՋԻՆ ԼՇՈՐԴՈՒԹԻՒՆ — ԳՐԵԼ:

### Սահմանական

**ԱԵՐԴԱՅ.** զրում եմ, զրում ես, զրում է.

զրում ենք, զրում եք զրում են:

**ԱԿԿ.** Ահի զրում էի, զրում էիր, զրում էր.

զրում էինք, զրում էիք զրում էին:

**ԱԿԿ.** Կառ. զրեցի, զրեցիր, զրեց.

զրեցինք, զրեցիք, զրեցին:

**ԱՊԱՀՈՒՆԻ.** Կը զրեմ, կը զրես, կը զրէ.

կը զրենք, կը զրէք, կը զրեն:

**ԱՊԱՀ ՊԱյԺ.** Կը զրէի, կը զրէիր, կը զրէր.

կը զրէնք, կը զրէք, կը զրէն:

### Ստորադասական

**ԱԵՐԴԱՅ.** (որ) զրեմ, զրես, զրէ.

ո զրենք, զրէք զրեն:

**ԱԿԿԱՊԱՅՐ.** (որ) զրէի, զրէիր, զրէր.

ո զրէնք, զրէք, զրէն:

### Հրամայական

զրէ (զրիր). զրեցէք:

**ԱԿԿՐՈՆ.** զրել, Ների. զրող. Ահի. զրել, զրած.

Ապա. զրելու:

**ԱՀԱ ՀԾՈՐԴՈՒԾԵԱՆ պէս խոնարհվում են**

1) Բոլոր եւ վերջացած ներգործական և չեղոք բայերը.

**Աիրել, ըեցի, ըէ (ըիր).** Կարել, ըեցի, ըէ (ըիր).

**Գովվել, վեցի, վէ (վիր).** Մատնել, նեցի, նէ (նիր).

**Ազատել, տեցի, տէ (տիր).** Բաժանել, նեցի, նէ (նիր).

Հանել, նեցի, նէ (նիր) ·

Բժշկել, կեցի, կէ (կիր) ·

Բռնել, նեցի, նէ (նիր) ·

Ժողովել, վեցի, վէ (վիր) ·

Սպասել, օԵցի, օէ (օիր) ·

Վաղել, զեցի, զէ (զիր) ·

Տիրել, բեցի, բէ (բիր) ·

Ամաչել, չեցի, չէ՛ր :

2) Յաել \* վերջացած բայերը, որոնք կազմվում են ա) ներագործական բայերից, և սոքա իսկապէս անցողական ասած բայերի միտքն ունին, այսպէս կարդալ — Էարդացնել = կարդալ տալ :  
 բ) Զեղոք բայերից ել կազմում են պարզ ներգործական բայեր, վերանալ — Վերացնել \*\* :

Մոռացնել, ռացըի, ցրու ·

Կարգացնել, գացըի, ցրու ·

Սովորեցնել, թեցըի, ցրու ·

Ուտեցնել, տեցըի, ցրու ·

Խմեցնել, մեցըի, ցրու ·

Մեծացնել, ծացըի, ցրու ·

Վախեցնել, խեցըի, ցրու ·

Կատեցնել, տեցըի, ցրու ·

Հասցնել, սցըի, ցրու ·

Փախցնել, խցըի, ցրու :

Ինչպէս օրինակներիցս երևում է, յաել վերջացած բայերի խոնարհման մէջ անկանոն են անց. կատարեալը և նորանից կազմուած ժամանակները: Աւելի բացայացութեան համար խոնարհենք հագնել բայի անկանոն ժամանակները :

\* Յաել վերջաւորութիւնը ամփոփուած է սկզբնական աւցնելից, որ ոմանք սիրում են անփոփոխ պահպանել. փոխանակ զրելու և ծացնել, աղբեցնել, արդարացնել, դրում են ճշծացնել, աղբեցացնել, արդարացնել, որով անտարակոյս լիզուն կերպարանափոխ է լինում: Զգիտենք ինչպէս կը վարուէին այդ պարոնները զուտ աշխարհաբար բայերի հետ, ինչպէս են՝ աղբեցնել, լիցնել, վարուէլ ևայլն:

\*\* Յաել վերջաւորութիւնից առաջ, իբրև յօդակապ, կարող են պատահիլ և և ձայնաւորները այնեւ, եցնեւ, էցնել կը լինին Ա. և Բ. լրծորդութիւնից կազմուածները, այնեւ Գից և Դից կազմուածները. միայն և և և եկամուտ տառեր ունեցող բայերից կազմուածները պարզնել են լինում, ինչպէս որ կարելի է տեսնել վերելի օրինակների մէջ:

- Ա. Ա. Կար.** Հազգրի, Հազգրիր, Հազգրեց (Հազբուց)։  
Հազգրինք, Հազգրիք, Հազգրին։
- Հրամ.** Հազգրու. Հազգրէք; Դերբ. Անց. Հազգրել,  
Հազգրած։

Կան զբողներ նոյնպէս՝ հագուցեցի. ու ըիշները արեմաւան  
հայերէնի սովորութեամբ՝ հագուոցի, հագուուր և այլն։ — Իսկ միւս  
ժամանակները կանոնաւոր են. հագուում էմ, հագուում էի, և՛լ  
հագուում, հագուուռ և այլն։

Հայերէն լեզուի յատկութեամբ չէզոք բայերի մեծ մասը  
կարող են յնեւ մասնիկ առնելով ներդործական դառնալ: Ընդ-  
հակառակն քիչ ներդործական բայ կայ, որ կարողանայ այդ  
ձեռվ անցողական դառնալ, այլ սովորաբար նոյն մաքով վար-  
վում է ներդործական բայը տառ բայով, որ ընդունում է զրոց  
տառ և տառնեւ և ֆրանս. faire բայերի նշանակութիւնը. Գրեւ  
տառ, կտնչել տառ, սուտնեւ տառ, և այլն։ Իսկ եթէ հարկ լինի  
յայտնել թէ զործողութիւնը երրորդի ձեռով է կատարվում,  
այն ժամանակ տառ բայը կրկնվում է. Գրեւ տառ տուի, իտրեւ տառ  
տուինք։ — Այս վերջին ձեր զրոց լեզուն չունի։

### § 21. ԵՐԿՐՈՐԴ ԼՇՈՐԴՈՒԹԻՒՆ — ԱՇԽԱՏԻԼ:

#### Աշխատական

- Ա. Ե. Պ. Ա. Վ.** աշխատում եմ, աշխատում ես, աշխատում է.  
աշխատում ենք, աշխատում էք, աշխատում են։
- Ա. Ա. Ա. Վ.** աշխատում էի, աշխատում էիր, աշխատում էր.  
աշխատում էինք, աշխատում էիք, աշխատում էին։
- Ա. Ա. Կ. Ա. Վ.** աշխատեցայ, աշխատեցար, աշխատեցաւ.  
աշխատեցանք, աշխատեցաք, աշխատեցան։
- Ա. Պ. Ա. Վ.** կ'աշխատիմ, կ'աշխատիս, կ'աշխատի.  
կ'աշխատինք, կ'աշխատիք, կ'աշխատին։

**Ապահով. Պատճ.** կ'աշխատէի, կ'աշխատէիր, կ'աշխատէր.  
կ'աշխատէինք, կ'աշխատէիք, կ'աշխատէին:

### Ստորադասական

**Աերակ.** (որ) աշխատիմ, աշխատիս, աշխատի.  
ո աշխատինք, աշխատիք, աշխատին:

**Անդապող.** (որ) աշխատէի, աշխատէիր, աշխատէր.  
ո աշխատէինք, աշխատէիք, աշխատէին:

### Հրամայական

— աշխատէ (աշխատիր). աշխատեցէք :

### Դելրայ

**Ասորու.** աշխատիլ. Ներէ. աշխատող. Ա՞ց. աշխատել,  
աշխատած. Ապահ. աշխատելու:

**Այսպէս խոնարհվում են**

1) **Իւ վերջացած ըստ մեծի մասին չէզոք բայերը,** որոնց  
անորոշ գերբայը յաճախ Ա.Լ.Ծորդութեան պէս եւ է լինում:

**Խօսիլ,** սեցայ, սէ (սիր). **Դադարիլ,** բեցայ, բէ (օիր).

**Բնակիլ,** կեցայ, կէ (կիր). **Պառկիլ,** կեցայ, կէ (կիր).

**Սովորիլ,** բեցայ, բէ (բիր). **Կատիլ,** տեցայ (նստեց) նիստ  
(նստիր):

2) **Աեւ նեւ \*** վերջաւորուած չէզոք ու ներդործական  
բայերը, որոնց անց կատարեալը և տառի կորուսմամբ լինում  
է այ փոխանակ եցայ, և հրամայակունը միշտ ն'ը. այսպէս.

\* Գրոց լեզուում անէւ, որ ումանք լեզուի բունած ընթացքին ներհակ՝ անփոփոխ պահպանում ու դրում են. Տեսանել, տեսանում եմ, տեսանում էի, կը տեսանիմ եայլն:

**Ա՞յց.** Կորը. Հասայ, Հասար, Հասաւ. Հասանք Հասաք,  
Հասան :

**ՀբոմՏ.** Հասիր. Հասէք: Դերէ. անց. Հասել, Հասած:  
Իոկ կանոնաւոր ժամանակների մէջ և պահպանվում է.  
հասնում էմ, հասնում էի, իը հասնիմ, հասնող, հասնելու:

**Հատնիլ,** Հատայ, Հատիր. Պրծնիլ, պրծայ, պրծիր.

**Մեռնիլ,** մեռայ, մեռիր. Տեմնել, տեսայ, տես.

**Ծնանիլ,** ծնայ, ծնիր. Գտնել, գտայ, գտիր.

**Ընկնիլ,** ընկայ, ընկիր. Սանել, մտայ, մտիր:

3) **Մի** քանի չել վերջացած չէզոքներ, չ դուրս թողնելով  
և անց. կատարեալ ժամանակում ընդունելով այ, հրամայա-  
կանում՝ իր:

**Ա՞յց.** Կորը. Թռայ, թռար, թռաւ. թռանք, թռաք, թռան:

**ՀբոմՏ.** Թռիր. թռէք: Դերէ. անց. թռել, թռած:

Կանոնաւոր ժամանակների մէջ չ պահվում է. Առաջում էմ,  
իը Առաջիմ, Առաջող, Առաջելու:

**Փափուել,** փախայ, փախիր: Կպչել, կպայ, կպիր:

**Կորչել,** կորայ, կորիր:

## § 22. ԵՐՐՈՐԴ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ — ՀԱԽԱՏ-ԱԼ:

### ԱՀԱՄԱՆԱԿԱՅԻ

**ԱԵՐՔՄՅ.** Հաւատում եմ, Հաւատում ես, Հաւատում է.

Հաւատում ենք, Հաւատում էք, Հաւատում են:

**Ա՞յց.** Ա՞յդ. Հաւատում էի, Հաւատում էիր, Հաւատում էր.

Հաւատում էինք, Հաւատում էիր, Հաւատում էր  
առաջում էին:

**Ա՞յց.** Կորը. Հաւատայի, Հաւատայիր, Հաւատայ.

Հաւատայինք, Հաւատայիք, Հաւատային:

**ԱՊՐԱԿԻՆԻ.** կը Հաւատամ, կը Հաւատաս, կը Հաւատայ.

կը Հաւատանք, կը Հաւատաք, կը Հաւատան:

**Ապահ.** կը հաւատայի, կը հաւատայիր, կը հաւատար.  
կը հաւատայինք, կը հաւատայիք, կը հաւատային :

### Ստորագասական

- |                 |   |
|-----------------|---|
| <b>Եւրեայ.</b>  | (որ) հաւատամ, հաւատաս հաւատայ,<br>ն հաւատանք, հաւատաք, հաւատան:           |
| <b>Անդատար.</b> | (որ) հաւատայի, հաւատայիր, հաւատար.<br>ն հաւատայինք, հաւատայիք, հաւատային: |

### Հրամայական

— Հաւատամ (հաւատայիր). հաւատայիք :

### Դերբայ

- |  |  |
|--|--|
| <b>Անդրշ.</b>                                      | հաւատալ. Ներէ. հաւատայող. Անց. հաւատացիլ, հաւատացած. Ապա., հաւատալու : |
| <b>Այսպէս խոնարհվում բոլոր ու վերջացած բայերը:</b> |  |
| <b>Աղալ, աղացի, աղա.</b>                           | Կարդալ, դացի, դա.  |
| <b>Ողբալ, ողբացի, ողբա.</b>                        | Խաղալ, զացի, զա.   |
| <b>Մնալ, մնացի, մնա (մնացիր)</b>                   | Խղճալ, ձացի, ձա.   |
| <b>Գնալ, գնացի, գնա.</b>                           | Հաղալ, հացացի, զա :  |

### § 23. ԶՈՐՌՈՐԴ ԼՇՈՐԴՈՒԹԻՒՆ — ԻՄԱ-ՆԱԼ :

### Սահմանական

- |                  |   |
|------------------|---|
| <b>Եւրեայ.</b>   | իմանում եմ, իմանում ես, իմանում ե.<br>իմանում ենք, իմանում եք, իմանում են :     |
| <b>Անց. Անէ.</b> | իմանում էի, իմանում էիր, իմանում էր.<br>իմանում էինք, իմանում էիք, իմանում էին: |
| <b>Անց. Ապա.</b> | իմացայ, իմացար, իմացաւ.<br>իմացանք, իմացաք, իմացան :                            |
| <b>Ապահանի.</b>  | կ'իմանամ, կ'իմանաս, կ'իմանայ.<br>կ'իմանանք, կ'իմանաք, կ'իմանան :                |

**Ապա.** Պայմ. կ'իմանայիք, կ'իմանայիք, կ'իմանար.  
կ'իմանայինք, կ'իմանայիք, կ'իմանային:

### Արորագասական

<b>Աերաց.</b>	(որ) իմանամ, իմանաս, իմանայ. " իմանանք, իմանաք, իմանան:
<b>Անշտառ.</b>	(որ) իմանայի, իմանայիք, իմանար. " իմանայինք, իմանայիք, իմանային:

### Հրամայական

— իմացիր. իմացիք:

### Դեղբայ

<b>Անդրշ.</b>	իմանալ, ներկ. իմացող, Անց, իմացել, իմացած. Ապա. իմանալու:
<b>Այս</b> լծուրդութեան պէս խոնարհվում են նաև (անու, բնաւ) վերջայած ներգործական և չեզոք բայելը:	

<b>Զարմանալ,</b> մացայ, մացիք.	<b>Զօրանալ,</b> բացայ, բացիր.
<b>Խոստանալ,</b> տացայ, տացիք.	<b>Հասկանալ,</b> կացայ, կացիք.
<b>Առանալ,</b> ռացայ, ռացիք.	<b>Թշնամանալ,</b> մացայ, մացիք.
<b>Բարկանալ,</b> կացայ, կացիք.	<b>Վախենալ,</b> խեցայ, խեցիք.
<b>Գողանալ,</b> դացայ, դացիք.	<b>Դառնալ,</b> դարձայ (դառայ), դարձիք:

§ 24. ԿՐԱՒՈՐԱԿԱՆ ԲԱՑԵՐ. — Կրաւորական բայերը կազմված են ներգործականներից ու կ վերջաւորութեամբ, որ դըք վում է 1) եւ, և վերջաւորութիւնների տեղ Ա և Բ լծուրդութեան բայերում. ազատիւ — ազատուել, գտնել — գտնուել, համարիւ — համարուել. և 2) կատարեալի և, այ, վերջաւորու-

թիւնների տեղ գ. և դ. լ. չորդութեան բայերում. կարգալ,  
կարգացի — կարգացուել, խոստանալ, խոստացայ — խոստացուել:

Բոլոր կրաւորական բայերը խոնարհվում են միակերպ թ.  
լ. չորդութեան պէս: Ուստի բաւական ենք չամարում մի օրիւ  
ինակ միայն դնել այսակը:

### Ամանական

**Սէրժ.** ազատվում եմ, ազատվում ես, ազատվում է.

ազատվում ենք, ազատվում եք, ազատվում են:

**Անց Անէ.** ազատվում եի, ազատվում եիր, ազատվում էր.

ազատվում էինք, ազատվում էիք, ազատվում էին:

**Անց Էպը.** ազատուեցայ, ազատուեցար, ազատուեցաւ.

ազատուեցանք, ազատուեցաք, ազատուեցան:

**Ապահնէ.** կ'ազատուիմ, կ'ազատուիս, կ'ազատուի.

կ'ազատուինք, կ'ազատուիք, կ'ազատուին:

**Ապահնէ Պայ.** կ'ազատուէի, կ'ազատուէիր, կ'ազատուէր.

կ'ազատուէինք, կ'ազատուէիք, կ'ազատուէին:

### Ասորադասական

**Սէրժ.** (որ) ազատուիմ, ազատուիս, ազատուի.

ո ազատուինք, ազատուիք ազատուին:

**Անչորդոր.** (որ) ազատուէի, ազատուէիր, ազատուէր.

ո ազատուէինք, ազատուէիք, ազատուէին:

### Հրամայական

ազատուիր (ազատուէ): ազատուիցէք.

### Գերբայ.

**Անրոշ.** ազատուիլ. Ներ. ազատուող. Անց. ազատուել,

ազատուած. Ապահ. ազատուելու:

Բաժմանուիլ, նուեցայ նուիր. Կարդացուիլ, ցուեցայ.  
Շարժուիլ, ժուեցայ, ժուիր. Բացուիլ, ցուեցայ, ցուիր.  
Բոնուիլ, նուեցայ, նուիր. Խոստացուիլ, ցուեցայ.  
Բժշկուիլ, կուեցայ, կուիր. Մոռացուիլ, ցուեցայ, ցուիր.  
Տեսնուիլ, նուեցայ, նուիր. Կմացուիլ, ցուեցայ, ցուիր.  
Համարուիլ, րուեցայ, րուիր. Հասկացուիլ, ցուեցայ, ցուիր:  
Կոյնպէս և երկրորդական ժամանակները. բաժանուել էն.  
առաջարկած էր, պէտք բժշկուել. Տուացուելու և ևայլն:

Հին և նոր հայերէնների որոշիցներից մինն էլ կրաւու  
րական բայերի խոնարհումն է, որ որքան բազմաձեւ ու խառն է  
առաջնի մէջ, այնքան միակերպ ու պարզ է վերջնինի մէջ:  
Գրոց աշ և աւլ վերջաւորութեամբ բայերը կրաւորականի կա-  
նոնաւոր (երբեմն նաև անկանոն) ժամանակների համար առան-  
ձին ձեւեր չըւնին, այլ կազմվում են անցեալ դերբայով և  
լինիմ օժանդակ բայով, այսպէս. աղացաւ լինիլ, սպացէաւ լինիլ,  
բացէաւ լինիլ, Ապէաւ լինիլ, Ենիեցէաւ լինիլ. (Համեմատէ Փրանս.  
être recu, être abandonné ևայլն): Այս պակասութեան առաջն  
առնելու դիտաւորութեամբ՝ հին մատենագրներից ոմանք հնաւ-  
րեցին նոր ձեւ կրաւորականներ. ինչպէս՝ տալ — պանիլ, բաւ-  
նալ — բանիլ, բառնալ — բառնիլ, հեղուլ — հեղտնիլ ևայլն: Իսկ  
երբ միջն դարերում երեան եկաւ ռաիլ մասնիկը, — որի հետ-  
քը երեւում է հին լեզուի սառծ վերջով բայանունների մէջ՝  
հարուստ, հնացուած, ուկուստ, սպասուած, — այնուհետեւ հեշտ  
էր ամէն աւեսակ բայերի կրաւորականը ներգործականից զա-  
նազաննել. որով և լեզուից անհետացան ոչ միայն նորանոր  
կրաւորականների ձեւերը, այլ և հասարակ ասած բայերը,  
որոնց ներգործական և կրաւորական խոնարհումը որոշուեցան  
միմեանցից. իօնիլ — իօնուիլ, համարիլ — համարուիլ ևայլն:

§ 25. ԲԱՑԱՍԱԿԱՆ ԲԱՅԵՐ. — Բայցասական բայերը իրանց  
մի քանի առանձին ձեւերով զանազանվում են ոչ միայն զրա-

բարից, այլ և ըստ մասին արեմական գրաւոր լեզուից; Այդ  
տարբերութիւնները պարզ կ'երևին հետեւալ օրինակից:

### Սահմանական

**ԱԵՐԻՄ.** չեմանանում, չես տեսնում, չէ տեսնում:  
չենք տեսնում, չէք տեսնում, չն տեսնում:  
**ԱԿԱ.** Ա՞ն, չի տեսնում, չիր տեսնում, չը տեսնում:  
չինք տեսնում, չիք տեսնում, չին տեսնում:

**ԱԿՈ.** Կար, չտեսայ, չտեսար, չտեսաւ.  
չտեսանք, չտեսաք, չտեսան:

**Ա.ՊԱՏԻՎ.** չեմ աեսնիլ, չես տեսնիլ, չի տեսնիլ.  
չենք, տեսնիլ, չէք տեսնիլ, չն տեսնիլ:  
**Ա.ՊԱ. ԱԿԱ.** չի աեսնիլ, չիր տեսնիլ, չը տեսնիլ.  
չինք աեսնիլ, չիք տեսնիլ, չին աեսնիլ:

### Սառադասական

**ԱԵՐԻՄ.** (որ) չտեսնեմ, չտեսնես, չտեսնէ.

” չտեսնենք, չտեսնէք, չտեսնեն:

**Ա.ԱԴԱՊԱՐ.** (որ) չտեսնէի, չտեսնէիր, չտեսնէր.  
” չտեսնէինք, չտեսնէիք, չտեսնէին:

### Հրամայական

— մի տեսնիր (մի տեսնիլ). մի տեսնէք:

### Դերբայ

**Ա.ՆՐԵԶ.** չտեսնել. Աերէ. չտեսնող. ԱԿԱ. չտեսած, Ա.ՊԱ.  
չտեսնելու:

**ՕՐԻՆԱԿՆԵՐԻց պարզ հրեռում է որ**

1) **Բացասական բայերի տահմ:** ներկան և անց անկառապը կազմվում են օժանդակ բայի բացասական ձևերով, որ սովորաբար նախադաս են զրվում. չեմ աենառմ. չեմ լսում:

2) **Աւհմ:** անց կատարեալը ստորադ. ներկ. և անկ կազմվում են իւրաքանչիւր ժամանակի սկիզբը և դնելով. չփեռոյ. չլում. չիօնէր:

3) **Ապառնի ժամանակները կազմվում են և մասնիկի տեղ դնելով էմ բայի բացասական ձևերը և բուն բային իր սկզբնական ձևերը տալով. չեմ իսովէլ. չեմ գնալ. չեմ կմանալ: Միայն Ա. լծորդութեան բայերի և ձայնառութ փոխվում է և. չեմ գովէլ. չեմ սիրէլ. չեմ սպասիլ: — Այս ձեւը ժամ դարերի մշջ երեան է գալի, էական բայով և և նախդրով, այսինքն անորոշ դեր բայի ներկոյական հողավով. չեմ ի գնալ. չեմ 'ի հաստիւլ. չդառն չել: և նախդիրը մնացել է միայն պարզ ապառնիկ ել. Յուր զէմքում, ուր չեմ ի առանցքել կրծառուելով դառել է չեմ տեսնէլ, որ իսկապէս պիտի զրուեր չ'ե աթնանիլ: Ժողովրդական բարբառներում այդ չեմ երեւում է և ուրիշ ժամանակներում չեմ զիմանում. չեմ գնաց. չեմ մնացել. թող չեմ նեղանայ:**

**Արևմտեան բարբառներում,** ինչպէս յայսնի է, մեր ապառնին ներկայի տեղն է բռնում և բայի սկզբնական լ փոխվում է ը. չեմ աենառէք, չեմ աենառէց, չեմ աենառէր. չեմ լսեք. չեմ լսեալ իմանար:

4) **Հրամայականը** (արդելական), ինչպէս վերեւ տեսանք, երկու ձեռով էլ է լինում, այսինքն ր վերջաւորութեամբ զրոց և արեմտեան լեզուների պէս և բայի սկզբնական ձևով. մի՛ զնար կամ մի՛ զնալ: Յողնակին սովորաբար հին ձևով մի՛ զընաք, մի՛ զրէս: — Երևամնցիք ասում են նաև՝ մի՛ զնալ, \* բացասական մակրայի հետ միացնելով և բային տալով իր սկզբնական ձեւը:

**Այս մ'**, ինչպէս նաև ոչ, չ բացասականները կարող են աւելի սասակութեան համար բայից յետոյ էլ դասուիլ. ուտիլ

Ք'. ամսավել Ֆ'. մեռնիս ոչ եկաւ ոչ խօսում չէ. դաել չէ ևայն: —Այս ձեւը, որ զրոց լեզուի հնագոյն և գեղեցիկ յառ կութիւններից մինն է, արևելեան հայերենէին սեպհական է:

Բայց նկատելու է որ այլ և այլ բացասական ձեւերը վարպետմ են երբեմն հաստատականի մաքով: Ահա մէկ-երկու օրինակ Աբովիանի գրքից: Էս տխուր մէյդանի շորեջշուրջը՝ աչքդ որ բաց չեն տուած, մէկ էլ էն ես տեսնում՝ որ . . . (այսինքն՝ հազիւթէ աչքիք բաց ես անում՝ որ . . .): Թուրը ձեռն առած որ գոտոաց ոչ, լեզուն որ բոց չէլու, հէնց բռնես՝ պատերը լեզու առան: Այսպէս գարձեալ՝ Այս ասացին Աէ չէ, մէկն այն կողմիցը ձայն տուաւ: Փոքը ինչ հեռացան Աէ չէ . . . (այսինքն՝ հազիւթէ ասացին, հեռացան): Կամ նաև այս ձեռով ինչ կար չէար տակովն արաւ: Ինչ ունիս չռանի՞ տուր, որ քո ազգը քիչ քիչ մէկ լսւ օր քաշի (այսինքն՝ բոլոր ունեցածդ տուր):

§ 26. ԳԻՏԵԼԻՔ ԲԱՅԵՐԻ ՎՐԱՅ. — Գոյական անունների վրայ խօսելիս՝ (§ 3, 7) ցոյց տուինք թէ ինչպէս նոր լեզուի հոլովումները ժամանակ անցնելով պարզուել ու զբեթէ երկուսի են ամփոփուել, և թէ ինչպէս ժողովրդական բարբառների մէջ մի ընդհանրական հոլովում առաջնորդու ձգառում երեւումէ: Նոյն պարզման սկիզբը, նոյն միօրինակութեան ձգառումը երեւում է և բայերի խոնազհման մէջ: Արևելան զիսաւոր գաւառուականներից մինը՝ Նրեւանայ բարբառը միայն երկու զիսաւոր լծորդութիւն է ձանաչում. եւ, եւ, ու՞ ցէ կատարեալով և հուլ (անուլ) ցայ կատարեալով. այսպէս. հանդեցի. ծնեց. խօսեց. մլնեց. հանցնեց. աղբեցնեց. — Համեցայ. ուղեցաւ. հասկացնեց: Հրամայականը սովորաբար եր. միայն մի քանի ու վերջացածներինը ա. ցէ՛ր, հանդէ՛ր, իփէ՛ր, փոշէ՛ր, հոտէ՛ր. — Գնո՞ւ: Խողո՞ւ: Մի օրինակութեան սկիզբը աւելի պարզ կ'երեկի, եթէ համեմատենք ներդործական և կրաւորական բայերի ձեւերը. էնդեցի և ինդուեցի, ծօւդ — օծուեց, հանդէցնեցն — հանդուեցն: Լընե՛ր — իլլուե՛ր, մէ՛ իլլ-

Ավել կամ մէ՛ նըմիւ, մէ՛ իրեռուէք կամ մէ՛տ (մէ՛) իրեռուէ: Գրաւ-  
ւոր լեզուն, որ ինչպէս յայտնի է, մեծաւ մասամբ այս գաւա-  
ռականի վրայ է հիմնվում, այս ձևերը խառն դործ է ա-  
ծում վերեւ յիշուած ձևերի հետ:

**Առանձին** ուշադրութեան արժանի են բայերի բաղա-  
զրեալ ժամանակները, որոց առաջութեամբը նոր լեզուն  
յայտնի ցոյց է տալիս, թէ պարզման սկզբան հետ պիմոդ ըրու-  
նած է և բացայատութեան սկիզբը, այսինքն մի զարմանալի  
ձգտողութիւն ժամանակների ու եղանակների բարակութիւն-  
ները բացարելու: Մենք միայն հարեւանցի ակնարկեցինք նոր  
լեզուի այս յատկութեան վրայ ասպագայ բանասէրին մնում է  
որոշել բաղադրեալ ժամանակների բազմադիմի գործածու-  
թիւնները: Այս տեղ և յաջորդ հատուածի մէջ կը միշտ նք  
միայն մի քանի կարեւոր զիտելիքներ և ընդհանրական դոր-  
ծածութիւններ:

1. **Կրաւորական** բայերը, արևմտեան լեզուի հակառակի,  
սովորաբար գործիական հողովով խնդիր են առնում և քիչ  
անդամ բացառական, ինչպէս. Դաշտերը չենու ծածկուեցան:  
Հռոմ քաղաքը առնուեցաւ և այրուեցաւ Գալլիացց Յետով  
(և ոչ Գալլիացիներից): Պոմպէոս յաղթուեցաւ Կեսարից: Բայց  
աւելի սովորական է ներգործականի փոխելով ասել. Գալլիա-  
ցիք տուին ու այլեցին Հռոմ քաղաքը: Կեսար յազմեց Պոմպէոս-  
սին: — Այս բանիս ուշադրութիւն դարձնելու է օտար լե-  
զուններից թարգմանելու. ժամանակ:

2. **Սորա** հակառակ կրաւ. բայերը յաճախ վարկում են  
չեղոքի մաքով, առանց խնդրի. զորօրինակ. Այս տունը ծան-  
չում է: Գետինը պատառեցաւ: Արմաւիր շնորւեցաւ երասխի վրայ:

Այս կրաւորակերպ չեղոքները ընդունում են երեմն  
ոռուսաց անդրադարձ (возвратный) և փոխառութիչ (взаимный)

բայերի միտքը. Տադրուել, եւ շուռաւել, լուսցուել. — աւենուել, լուսիւել և այլն, այսինքն՝ ինդն երդն լուսնալ, մեծաց տեսնել:

Այսպէս երբեմն բուն չէզօք բայերը կրաւորականի ձեւ են ընդունում. համարչափել և համարչափուել, բնուիլ, և բնութուել, գտնգութել և գտնգութուել. կամ աւելի յաճախ՝ բնորիստել, համարչափուել:

3. Բայերի ընթացքում տեսանք որ նոր հայերէնի մէջ ուշ վերջացած բայեր չկան, այլ կամ գործածութիւնից ընկել են, կամ եւ վերջաւորութեանը փոփոխուել. այսպէս են՝ տառնել, լողնել (թողալ), երդուել (երգում ուտել), զարթել, որգելել և այլն: Միւս վերջաւորութիւններից եւ ամէնից աւելի գործածականն է, այնպէս որ մինչեւ անդամ ուիլ և իւ վերջաւորուած կրաւորական ու չէզօք բայերը, ինչպէս վերել յիշ շեցինք, շատ ժողովսդական բարբառներում եւ վերջացածների պէս են խոնարհվում:

4. Երկու բառից բաղադրուած բայերի մէջ, ինչպէս են՝ անց կենալ, կուլգուլ, ծափ տալ, ճան ածել և այլն, բուն բայն է խոնարհվում և իւ մասնիկ առնում. անց էմ կենառմ. ծափ իւ դամ. ման չ'ածէլ : Միայն պիտի կամ պէտի է դիմազուրկը միշտ առաջին բառի վրայ է դրվում. Պիտի անց կենամ. պիտի ման դայինք: -- Ժողովսդական բարբառներում պիտի դիմազուրկը կարող է և յետադասուիլ, բայց այն ժամանակ դիմաւոր բայի ձեւ է ընդունում. Տեսնիլ պիտի: Ման զալ պիտի:

5. Գառլ, տալ, լու միավանկ բայերի սահմ. ներկան և անց անկատարը լինում են իս վերջաւորութեամբ, որ անորոշ գերբ բայի ներգոյականն է. Գառլիս էմ. տալիս էի, լայիս էին: Խակ հարցական և բացասական նախագալապութիւնների մէջ օժանդակ բայը էմ նախագալապութիւնն է, և այն ժամանակ բուն բայի և տառը երբեմն զեղչվում է: Այսպէս ասում են անխափր. Ո՞վ է գուլիս ո՞վ է գուլի: Ի՞նչ ես պալիս և ի՞նչ ես տալի: Չեմ լուիս և

զեմ լալի: Նոյնպէս և բաղադրեալ բայերի մէջ. Շաղ եմ պաւլիս կամ պալի: Տան էլ գալս կամ գալ: Տան չը գալս կամ գալ:

6. Եմ, էտմ, սանիմ (ժողովլուական՝ ունեմ), Գիտեմ բայերի ներական ու անց. անկատարը զրաբար ձևով է լինում. Էտմ, էտմ, էտյ, էտնի, էտի, էտն: Ունիլի, ունիլի, ունիլի, ունիլի, ունիլի: Գիտեմ (գւռին. Գիտուամ էմ), Գիտենի. Գիտեմ, Գիտենի: (Երբեմն գործ են ածում նաև՝ Ասացէք խնդրեմ: Կարծէմ թէ իրաւունք ունիմ: Յուսում թէ խոստունքդ կը կատարես: — Փոխանակ՝ խնդրում էմ, էտրծուամ էմ, յոյս ունիմ: ) Ապառնիի ուստրագասականի ժամանակները առնում են իրանց նոյնանշանաներից. Եմ և էտմ բայերի համար լինել, ունիմ — ունենալ, Գիտեմ — Գիտենալ կամ իշտուլ: Այսպէս ասում են՝ Կը լինիմ. Եւնենայի. (որ) Գիտենայի կամ իմտնոյի:

7. Վան մի քանի բայեր, որոնց անց. կատարեալը և նորանից կազմուած ժամանակները ոչ միայն զրաբարի պէս անկանոն են, այլ կատարեալը երկու ձևով է գործ զրվում: Ահաւասիկ նոցա ցանկը:

### ԲԵՐԵԼ.

**Ա՞սյ. Կար.**       $\left\{ \begin{array}{l} բերի, բերիր, բերաւ, բերինք, բերիք, բերին: \\ բերեցի, բերեցիր, բերեց, բերեցինք, բերեցիք, բերեցին: \end{array} \right.$

**Հըսմ.**       $\left\{ \begin{array}{l} բեր. բերէք: Դերէ. Ներէ. բերող: Ա՞սյ. բերէ, բերած: \end{array} \right.$

### ԴՆԵԼ.

**Ա՞սյ. Կար.**       $\left\{ \begin{array}{l} դրի, դրիր, դրաւ, դրինք, դրիք, դրին: \\ դրեցի, դրեցիր, դրեց, դրեցինք, դրեցիք, դրեցին: \end{array} \right.$

**Հըսմ.**       $\left\{ \begin{array}{l} դիր. դրէք: Դերէ. Ներէ. դնող: Ա՞սյ. դրէ, դրած: \end{array} \right.$

ԱՆԵԼ, (ՂՂՂՂ. ԹԹԹԿԵԼ)

ԱՆԳ. ՀՊՐ.

մրի, արիր, արաւ. արինք, արիք, արին:  
 արեցի, արեցիր, արեց. արեցինք, արեցիք,  
 արեցին:

ՀՐՄՏ.

արա՛. արէք: Դերէ. Ներէ. անող: Անց. արել,  
 արած:

ԱՍԵԼ

ԱՆԳ. ՀՊՐ.

ասի, ասիր, ասաւ. ասինք, ասիք, ասին:  
 ասացի, ասացիր, ասաց. ասացինք, ասացիք,  
 ասացին: \*

ՀՐՄՏ.

ասա՛. ասէք համՏ ասացէք: Դերէ. Ներէ. ա-

սող: Անց. ասել, ասած:

ԹՈՂՆԵԼ (ԼԱՂՋԱԼ, ԳՐԲԲ. ԼԱՂՋԱԼ)

ԱՆԳ. ՀՊՐ.

թողի, թողիր, —. թողինք, թողիք, թողին:  
 թողեցի, թողեցիր, թողեց. թողեցինք, թո-

ղեցիք, թողեցին:

ՀՐՄՏ.

թող. թողէք: Դերէ. Ներէ. թողնող: Անց.  
 թողել, թողած:

ՏԱԼ

ԱՆԳ. ՀՊՐ.

տուի, տուիր, տուաւ. տուինք, տուիք, տուին:  
 տուեցի, տուեցիր, տուեց. տուեցինք տուե-

ցիք, տուեցին:

ՀՐՄՏ.

տուը. տուէք: Դերէ. Ներէ. տուող: Անց.  
 տուել, տուած:

\* Այս երկրորդ ձեռ գրաբարից իոյխ առած է. խօսակցութեան մէջ

ԱԿԱԲԻԼ.

Ա՞սց. Հարբ.	{	սկսայ, սկսար, սկսաւ. սկսանիք, սկսաք, սկսան:
		սկսեցի, սկսեցիք, սկսեց. սկսեցինիք, սկսեցիք,
Հըմմ. Հըմմ.	{	սկսեցին:
		սկսիք (սկսէ'). սկսէք (սկսեցիք): Դեբէ. Ներէ.

սկսող: Ա՞սց. սկսել, սկսած:

ԱՌԵՆԵԼ. \* (առնուալ)

Ա՞սց. Հարբ.	{	առայ, առար, առաւ. առանիք, առաք, առան:
		առի, առիք, առեց, առինիք, առիք, առին:
Հըմմ. Հըմմ.	{	առ. առէք: Դեբէ. Ներէ. առնող: Ա՞սց. առել, առած:

ՏԱՐԵԼ.

Ա՞սց. Հարբ.	{	տարայ, տարար, տարաւ. տարանիք, տարաք,
		տարան:
Հըմմ. Հըմմ.	{	տարի, տարիք, տարեց, տարինիք, տարիք, տարին:
		տար. տարէք: Դեբէ. Ներէ. տանող: Ա՞սց. տարել, տարած:

Թօէլ անցեալ կատարեալի երկու ձևն էլ անխտիք վարդում են, բայց աւելի սովորական է առաջին ձևը, միայն եզրդ գէմքում եց վերջաւորութեամբ. Էերե, Էերեր, Էերեց. Էերենիք, և այլն: Դրի, Դրեր, Դրեց. Դրենիք, և այլն: Տուի, Մուի, Մուեց.

շատ անդամ լսվում է և ձայնաւորը է ի փոխուած, առեցի, առեցիք, առեցիք և այլն:

\* Այս բայց ժողովրդական բարբառաներում առհասարակ գործ է ածվում գնել բայի մոքով. իսկ առնել (առնուլ, prendre) բայի մոքով վարվում են քըր առնել և քըր իւնիւ բաղադրեալ ձևերը:

պուլիս, և այլն: Այսպէս և հրամայականը սովորաբար է չէ վիրջանում. ուստի սխալ գործածութիւներ են՝ բերեցէ՛տ, ուշը եցէ՛տ, պուլեցէ՛տ, որեցէ՛տ և այլն:

Իսկ կրաւորականները կանոնաւոր են բերուել. բերված է. բերեցաւ. պարուեցանք. պարուեցան. իը գրաւե, իը գրաւեր, և այլն:

Բոլորովին անկանոն խոնարհում ունին աշխարհաբարում գուլ և ռատել բայերը, որոնց կատարեալի արմատը ներկայի արամատի հետ ոչինչ նմանութիւն չունի:

#### Գ.Ա.1.

**Անց.** Հար. եկայ, եկար, եկաւ, եկանք, եկաք, եկան:

**Հրամ.** Եկ համ արի (յասանել բայից). եկեք: Դերք. Ներէ. եկող: Անց. եկել, եկած:

#### ՈՒՏԵԼ.

**Անց.** Հար. կերայ, կերար, կերաւ. կերանք կերաք կերան:

**Հրամ.** կեր. կերեք: Դերք. Ներէ. ուտող: Անց կերել, կերած:

Կայ սխալմամբ գործ գնող հրամայականում էիւցէ՛տ, իերեցէ՛տ:

#### § 27. ԲԱՑԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԲ:

1. **Եերկայ ժամանակը գործ է ածվում.**

1) Երբ հարկ է յայտնել թէ գործողութիւնը մեր խօսսակցութեան ժամանակ է կատարվում. Նա բնակչամ է մեր տան մօտ: Զեր հայրը գույն է:

2) Երբ հարկ է յայտնել մի ընդհանուր ճշմարտութիւն, մի սովոր ական բան. ինչպէս. Աստուած յաւխոնական է: Ծառ ոերը ձմեռ ժամանակ հանգուպտուած էն, զարունքին ծողնուած էն, ամառը պառւդ բերուած և աշունքին հասցնուած էն:

3) **Եերկան գործ է ածվում նոյնպէս ոնցեուշ էապարեալէ**

աեղ պատմական նկարագրութիւնների մշ, երբ զբողը կամենում է անցեալ զործողութիւնը իբր աչքի առաջ բերել, որով խօսքը աւելի կենդանութիւն է ստանում. զորօրինակ Այն միջոցին երբ զաշնակից զօրքերը անհոգ կացած իրանց յաղթութեան վրայ էին ուրախանում, յանկարծ թշնամին վրայ է հոգուած ու անխնայ ջարդուած, հոփորուած է առաւօտեան յաղթողներին. շատին էլ ձեւը ուրը կոպուած, գերի էն գոհուած:

4) Ի՞կ երբ հարկ լինի ապագայ զործողութեան ստուգութիւնը յայտնել, ներկան վարդում է և տղառնի տեղ, միայն եթէ խօսքը մերձաւոր ժամանակի վրայ է. ինչպէս Այսօր ճանապարհ էմ ընդուած: Եզուց մայր եկեղեցում մեծ հանդէս է հոփորիւած: Ե՞րբ էք Գոհուած: — Այսօր երեկոյեան:

## 2. ԱՆՑԵԱԼ ԱՆԿԱՏԱՐԸ զործ է ածվում.

1) Երբ կամենում ենք յայտնել այնպիսի զործողութիւն, որ աւելում էր տակաւին երբ միուրիշ զործողութիւն սկսաւ ու ընդհատեց նորան. զորօրինակ Մենակ նստած զիրք էի հարդուած, երբ բարեկամն ներս մտաւ: Աշակերտները կողուած էին, երբ որ ուսուցիչը եկաւ:

2) Երբ հարկ է երկու կամ աւելի ժամանակակից զործողութիւններ յայտնել, որոնց ոչ սկիզբ յայտնի է և ոչ աւագութիւնը ինչպէս նույնական չաղիկ էր հոգուած և բերեած, բաժանուած էր բոլոր ծանօթներին:

3) Երբ հարկ է նկարագրել բնութեան տեսարանները, մարդկանց և իրերի յատկութիւնները, բարքն ու սովորութիւնները և այլն: Երկիրս այդ միջոցին մի զրաւիչ տեսարան էր ներկայացնուած. լուսնի կապուատակ շողքը Առաջնացնուած էր ծառերի տերենների միջով և ամենաթանձր մթութեան մէջ լոյս էր պուլու: Գետակը որ մեր սաների տակ ստեռած, գլուխուած էր, երբեմն անցոյապատահ էր երբեմն նորից երեսած էր . . . : Վարդան

Մամիկոնեան քաջ զօրսավար էր և առարինի մարդ: Հին Հայերը պաշտառ էին արեգակն և լուսինը:

4) Անցեալ անկատարը վարփում է երբեմն կատարեալի տեղ մերձաւոր անցեալը յայանելու համար. ինչպէս. ի՞նչ էր տառած: Փոքր ինչ առաջ ձեր եղբայրը այստեղ էր:

3. ԱՆՑԵԱԼ ԿԱՏԱՐԵԱԼԻ գործ է գրվում.

1) Պատմական նկարագրութիւնների մէջ, երբ հարկ է հետպհեաէ շարել պատահած անցքերը, որոնց սկիզբն ու վերը որոշվում է. ինչպէս.

Օրն էր տարաժամ. մարդիկ դադարած,

Փողը հընչեցին՝ մարտին կատարած.

Մութը պարսպուեց, աստեղը ցոլացին.

Երկնից ցօղն Խօս արհալից դետնին.

Մթնասէր թռչունը ձայներով խըռպոս,

Գուշակում էին մարդկանց սուդ ու բօթ

Յետ գործոն Պարսիկը իրանց բանակը,

Նորից նոր ողբել սուրն ու դանակը . . .

2) Անցեալ կատարեալը վարփում է յարակատարի տեղ, երբ հարկ է յայտնել մի պատմական իրողութիւն առանձին առած, որի ժամանակը ճիշդ յայանի է. Աւետարանի լոյսը պարսպուեցաւ Հայաստանում չորրորդ դարու սկզբում: Գրիգոր Լուսաւորիչ Ճառա 257 թուին Քրիստոսից յետոյ: Մեծն Սահմակ Թառա 440 ին: (Փոխանակ տարածուել է, ծնել է, մեռել է:)

4. Երկու ՅԱՐԱԿԱՏԱՐ Ժամանակները ինչպէս յայանի է, եմ օժանդակ բայով են կազմվում:

1) Եւանցեալ դերբայով կտղմուած յարակատարը գործ է ածիսում, երբ անցած բանի վրայ օտարի վկայութեամբ է խօսվում կամ թէ անցեալ գործողութեան հետեանքը ներկայումն է:

բեւում՝ այտպէս. կանցի թէ հայրդ եւել է: Գասերդ պատ-  
րաստի եւս: Ասում են թէ իշխանը ճեղանդացէլ է: Այս երեխան  
վատ բաներ է սռվիւլ:

2) **Ած** անցեալը կազմուածը ցոյց է տալիս թէ գոր-  
ծողութիւնը մի ժամանակ անշուշտ կատարուած է կամ չէ  
կատարուած. ինչպէս. Բոլոր գործերս աւորդած էն: Իմ օրում  
այս տեսակ բան ոչ պետած եմ, ոչ լսած:

3) **Ած** անցեալը կոմ բայով մի տեսակ յարակատար է  
կազմում, որ սովորաբար հարցական ձևով է վարվում. Տեսած  
կո՞ս այսպիսի գեղեցիկ գեղձեր: Գոհացած կո՞ս Ա. Քաղաքը: Այս-  
ինքն՝ պատահելէ քեզ տեսնել, դնալ: — Արևմտեան զրաւու-  
րը այսպիսի գէպերում վարումէ ունիմ բայը: Այսպէս ասում  
են՝ Տեսած ունի՞ս այսպիսի գեղեցիկ գեղձեր: Գոհացած ունի՞ս Ա.  
Քաղաքը:

5. **Երկու ԳԵՐԱԿԱՏԱՐ** ժամանակները վարվում են հեռա-  
ւոր անցեալ ժամանակը յայտնելու, առաջինը աւելի անորոշ  
մոքով, իսկ երկրորդը՝ որոշեալ. թէ և երբեմն երկուն էլ  
միմեանց տեղը վարվում են: Նոյն է ասել՝ Տուն էլ գնացել և  
Տուն էլ գնացած: Բարեկամներս եկել են. կամ եկած էն ինձ  
տեսնելու: Կոմ էլ թէ այս երկրումը մեծ անձրեներ են գաւ-  
լես, բայց չել պետած:

**Անորոշ գերակատարը** երբեմն պայմանականի մոքով է:  
վարվում, ԱՅ, որ շաղկապներով կամ առանց այդ շաղկապ-  
ների. ինչպէս. ԵԵԿ ԷԽցցել էլ թէ գու այտեղ կը լինիս, վաղ  
կը գայի: Մէկ էլ հետո իօսել էր, բանը զլուխ կը գար: — Այս  
ձեր յաջակ երկրումէ ընտանեկան լեզուի մէջ:

6. **ԱՊԱՐՆԻ և ՊԱՅՄԱՆԱԿԱՆ** ժամանակների բազմաթիւ ձեւ-  
ւերը մեծ պաշտօն են վարում նոր լեզուի մէջ, որ բոլորը մե-  
կանց կ'աւանդենք այտեղ:

1) Պարու ապառնին գործ է ածվում սովորական ապագայ գործողութիւնը յայտնելու. ինչպէս.

Բայց ախ երբ որ էանցնի ամիս ու տարի,  
Կը ճամատոփի դերեզմանը այն քարի,  
Հետքը անգամ չի մնալու իմ խաչն,  
Իմ անունը, իմ յիշատակ իւ էրէն:

2) Ապառնին գործ է ածվում երբեմն հրամայականի մոքով՝  
երեք գէմքով էլ: Զորօրինակ. Կ'ելլաս արհեստաւորին էառես  
որ գործիքները բերէ, և երկուսդ էլ իւ սոկոնէս մինչեւ որ ես  
գամ:

3) Եթէ ապառնին հարցական նշանակութիւն ունի կամ  
իրանից առաջ ո՞ւր, ո՞վ, ո՞ւ է՞չուն: Է՞չէսն և այլն հարցականները,  
կամ որ շազկապը թէական նշանակութեամբ, այն ժամանակ  
իւ մասնիկը զեղչվումէ: Այսպէս ասում ենք. զ՞ո՞նչ թէ քիչ  
էլ սպառնէս: Որ գնանի լաւ կը լինի: Ի՞նչ խօսնէս: Ասէնչ որ գայ:  
— Ճիշդ այս գործածութիւնը գտնում ենք ու և դարերի մի  
քանի մատենագրներում՝ անշուշտ ընտանեկան լեզուից փոխ  
առած: Ասէնչ զե իջցէ: Զի՞նչ առէմ: Զի՞նչ ինչ առնեմ (փոխա-  
նակ ասասցնէք, զի՞նչ ասացից, զի՞նչ ինչ արարից): Այսպիս-  
ոի գէպքերում ապառնին շատ անգամ անորոշ դերայի նը-  
շանակութիւն է ստանում, ուր զօրութեամբ իմացվումէ պի-  
տի բայր: Ի՞նչ տնեմ նշանակումէ զե faire; զե dois—je faire?  
Ո՞ւ երեսնի — ո՞ւ ալլե? ո՞ւ devons nous aller: Ախալ գործածու-  
թիւն է ի՞նչ տնել և այլն, որ ոմանք եւրոպական լեզուների  
հետեղութեամբ գործ են ածում:

4) Երկրորդ կամ պայմանական ապառնին յայտնումէ մի գոր-  
ծողութիւն, որ մի որեկից պայմանից կախում ունի. և այն  
ժամանակ եւեւ, լւէ, լւէ որ շաղկապներից յետոյ իւ մասնիկը  
զեղչվումէ է. ինչպէս.

Չար մահ իւ սպանար նորա թշնամին,  
Թէ որ եելսիեր զալ նորա առաջ:

Երբեմն երկրորդական նախագասութիւնը զօրութեամբ է իմացվում, և այն ժամանակ պայմանական ժամանակը ցանակաւում է յայտնում. Կը ցանկանայի իմանալ թէ ի՞նչ է ձեր տիրութեան պատճառը (այսինքն՝ կը ցանկանայի, եթէ հնար լինէր): Կ'ուշէի դնալ տեսնել նորան:

5) Պիտի կամ ոկտի է դիմացուրկով կազմուած հարկարութեան ապառնին գործ է ածվում, երբ կամենում են ասել թէ գործողութիւնը անշուշտ պիտի կատարուի: Զորօրինակ.

Ա՛յս, քաջ իմացէք, ես թէեւ թաղած,

Պիտի վէր հեռում հողից կատաղած,

Նորից նոր տանում ձեռքըս թուր ու տէգ,

Ու ձեզ անողորմ խողխողէմ մէկ մէկ.

Անէծք եմ թողնում ես այն վաս Հային,

Ոո ոչ ոիս, այլ սէր ցոյց տայ գոռ Պարսկին,

Այդ անհաշտ ոխը հիմկուց ցեղէ ցեղ

Պիտի պարագն Հայքն ամէն տեղ.

Թաղ կորչն ազգեր երկրի երեսից,

Հայը միշտ անհաշտ պիտի հնայ Պարսից:

6) Լու ապառնի գերբայով կազմուած ըզձական ապառնին վարվում է, երբ կամենում ենք յայտնել թէ ուկտուրութեան կայ գործողութիւնը կատարելու. Երբեմն էլ հարկադրականի մաքով է գործ զրվում, մանաւանդ եթէ բայը բացասական է. ինչպէս. Ամէն ծառ որ պառուզ չէ բերում, իւսպէսութիւն է և կրակը չգունելու: Մարդարէները Քրիստոսի համար գուշակեցին թէ գուլու է և երեք օրից յարութիւն տառնելու: Եղբ և իցէ մշտնելու էնք: Աշխարհս մեղ հնալու չէ \*:

\* Եսոր լեզուներից անգլիերէնը սորանման ապառնի ունի, թէ կադրմութեամբ և թէ նշանակութեամբ. We are to have նշանակում է

7) Յարտիւտով և գերակառար ապառնիները յայսնումեն մի գործողութիւն որ ներկայի վերաբերութեամբ ապառնի են, բայց անցեալ են ուրիշ ապառնի ժամանակի վերաբերութեամբ։ Այս ժամանակները շատ անգամ թէականի կամ պայմանականի միաք ունին. ինչպէս. Սխալ գաղափար սուսծ էլ լինին մեր նախնեաց կեանքի վրայ, եթէ վերացական զատօղութիւններով բաւականանանք և չենք նորոգիլ մեր մէջ անցեալ ժամանակների յիշատակները։ Եթէ երէկ ձանապարհ ընկած լինելիք, այժմ ձեր տեղը կը հասնէիք։ — Նկատելու է որ յարակատարի հետ վարվում է պարզ ապառնին, իսկ զերակատարի հետ պայմանականը։

Յարակատարը երբեմն ենթադրութիւն կամ կարծիք է ցոյց տալիք, ինչպէս. Անշուշտ մեր նամակը սուսցած և կորդուցծ էլ լինիք։

7. ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ եղանակի երկու պարզ ժամանակաները — ներկան ու անկատարը վարվում են երկրորդական նախադասութեան մէջ, և կապվում են գլխաւորի հետ որ, Այդ շաղկապներով, երբ յայտնի չէ թէ գործողութիւնը կատարուելու է թէ չէ։

1) Ստորադասական ներկան համապատասխանում է սահմանադրութեամապատասխանում։ Այս ներկային և սառրադ. անկատարը սահմանադրութեամապատասխան նախանում եմ որ գոյն ինքը ամեն բան քո ձեռովը կարդի ունենալու այնպէս յետ դրանուան։ Մարդ չկայ որ պակասութիւններից աղատ լինի։ Սպասում էի որ գոյն ինձ առնենք։

Բայց առհասարակ նկատելու է որ ստորադ. անկատարի տեղ զրեթէ միշտ ներկան է վարվում, մանաւանդ յոզնականում։ Այսպէս պէտք է ասել՝ Սպասում էինք որ գոյն մեզ առնենքն, և ոչ որ գոյնն, առնենքն։ Այսպէս զարձեալ սահմանականի անցեալ ժամանակների հետ ստորադ. ներկայ է զրվում։ Հատաւ օրը հըամայեց (հըամայել է, հըամայել եր) որ վկաների ասածները լուն, գնան և այնպէս վճիռը դուն։

2) Ատորադասականը զործ է ածվում, երբեմն հրամայական եղանակի նշանակութեամբ. գնո՞մ տեսնե՞մ կամ գնո՞նք աեռնենք թէ ի՞նչե՞ն անում; Ի՞նչ ևս նատել. վեր ի՞նչո՞ւ, ամաները հատակե՞ն:

Բայց շատ անդամ աւ ելի սասակութեան համար լող շաղկապը աւելացնում են, մանաւանդ անկատարի հետ. Թո՞ղ կարդան ու գրեն: Թո՞ղ շատ չխօսեին: Թո՞ղ յանցանք չգործէր:

Գերեզմանիս վրայ բլոնի՛ վարդենին,  
Վարդը բոցուի՛, աչքը գրաւէ՛ ամենին,  
Սոխակին էլ լո՞ղ գրաւէ նա հոգին,  
Քաղցր տաղեր լող ներշնչէ սոխակին,  
Թո՞ղ սոխակը անցքս պատմէ՛ ամենուն,  
Թո՞ղ լողը ողորմիս տոյ իմ հոգուն:

Յայտին է որ ստորադասականից կազմուած արգելական հրամայականը Ֆե մակրայով չէ լինում, որ միայն Զրդ գէմքի համար սեպհականուած է, այլ չ և ոչ—ոչ մակրայներով, զերթաս, չխօսիս նորա հետ: Թող իրանք իրանց բան չըռնէին: Լաւ է ոչ գամ, ոչ խօսիմ, ոչ քեզ տիրած տեսնեմ:

3) Ինչպէս որ Ելեկ, Ակ, Ակ որ շաղկապներից յետոյ իլ մասնիկը զեղչվում է, այսպէս էլ շատ անդամ այս թէական շաղկապների հետ ապառնիի և պայմանականի տեղ գործ է դրվում ստորագ. ներկան և անկատարը. բայց այն ժամանակ բայը ստորադասականի ըղձական զօրութիւնը չունի և որ կամ Ակ որ շաղկապը ներգործութեամբ լինի դրած կամ զօրութեամբ իմացուի, պայմանական կամ ըղձական միոք չունի, այլ պահպանում է իր պարզ թէական նշանակութիւնը, այսինքն չէ նշանակում զու, շոբի, կամ որի երկու օրինակ. Ակ չգոմ ու չփեռնեմ քեզ, ինքը արի՛ ինձ մօտ: Պատմէր իր զիսի անցքը, վախենում էր որ հօր սիրտը չվշտացնէ, Ակ չպառմէր՝ զիտէր որ բանը ծածու կ չի մնալ:

Թե՛ հրեշտակ տռէմ, հրեշտակ չեմ տեսել,  
թէ մարդ անուննէմ, բեղամաղ կ'անեմ:  
Աւանիմ՝ չես տեսնիլ, ի՞րէմ՝ չես ման գալ,  
Սուր ի՞րէմ սիրտս, գու չես իմանալ:

## Զ. ԴԵՐԲԱՑ

§ 28. ԴԵՐԲԱՑՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ. — Դերբայ կոչվում են այն բառերը, որոնք միանգամայն բայի և գոյական ու ածական անունների պաշտօն են վարում: Այսպէս երբ առում ենք՝ Աշխատելը այնքան բնական կարիք է մարդուս համար, որքան ռատել ու ժնէլ, — աշխատել ռատել և ժնէլ բայ են, որովհետեւ գործողութիւն են յայտնում: Բայց միենայն ժամանակ գոյական են և կարող են գոյականի փոխուիլ՝ առանց նշանակութիւնները փոխուելու. Աշխատելը այնքան բնական կարիք է մարդուս համար, որքան ի՞նըուուրն ու ժունը: Դարձեալ եթէ ասենք՝ Յուսամ թէ ի՞րդացն զրքերս աւելի հետաքրքրական լինին քան թէ մինչև այժմ ի՞րդացներն, — ի՞րդացն ածական է, ի՞րդացնելո՞ գոյական, և երկուսն ել կարող են բայի վերածուիլ. Այն զրքերը որ պիտի ի՞րդաց կամ ի՞րդացն եմ . . . . Այն զրքերը որ ի՞րդացի, ի՞րդացնել եմ կամ ի՞րդացնոց եմ:

Սորանից պարզ երեւմ է որ դերբայները վարվում են կրծատուած նախադասութեան մէջ, խօսքը աւելի ազդու ու զօրաւոր անելու համար, փոխանակ որ յարաբերականով կամ որևիցէ շաղկապով ու մակրայով և զիմաւոր բայով առանձին նախադասութիւն կազմելու: Այսպէս

առաւմ չեն:

Քոյսունակ առելու:

Յորեն ցանով գիւղացի. Գիւղացի որ ցորեն է (էր) ցանում:  
Պոուղ պատճ ծառ. Ծառ որ պտուղ պատճ, պատճ է:

Այլիսին բացուելու վարդ. Վարդ որ մայիսին պետք է բացուել:

Տուն դառնալին՝ պատառ Երբ որ տուն էի դառնալում, դարձաց, հեցայ իմ բարեկամին. պատահեցայ իմ բարեկամին:

1. Անորոշ դերբայը թէ իրրև բայ և թէ իրրև գոյական վարուելիս՝ հողովումէ Բ հողովման պէս.

Բռնել, բռնելու, բռնելուց, բռնելով, բռնելում:

Խօսիլ, խօսելու, խօսելուց, խօսելով, խօսելում:

Տալ, տալու, տալուց, տալով, տալում:

Փիչ անդամ պատահումէ այս դերբայը յոզնակի գործ դնել. Այլքան Գնուլ Գովերտ Ի՞նչ օգուտ ունեցաւ:

2. Ուներկան միշտ ածականաբար է վարվում և միայն պատահաբար կարող է գոյական դառնալ, այսինքն յօդ առանելով կամ գոյականից բաժանուելով, ինչպէս հասարակ ածականները. և այն ժամանակ յոզնակի էլ հողովումէ Ա հողովման պէս: Մասնաւու խօսող արարած: Պարտէզի մէջ վաղացող երեխանները: — Անտառի մէջ Առաջանունները բռնուեցան: Գնացողները Ֆայուռներից շատ էին \*:

Ու դերբայը բայի մաքով էլ է վարվում, մանաւանդ բացասական ձեռվ, Երբ հարկ է խօսքին աւելի սաստկութիւն տալ. ինչպէս. Ինչ որ կը տաք, մենք պէտք է վեր առնենք ու ձեզ օքնող լինինք: Ես նրա մօս Գնացողը չեմ, նրա հետ խօսողը չեմ: (Փոխանակ ասելու՝ ձեզօրհնենք, չեմ գնալ, չեմ խօսիլ:)

\* Գրաբար է Էլ դերբայը, որ այժմ միայն մի քանի գոյական և ածական անունների համար սեպհականուած է. Էնո՞ին, Քո՞ին, Տոփո՞ւ, Կոգին: Բայց դիտելու է, որ քիչ բայ կայ, որ կարողանաց Էլ մասնիկ առնել. իսկ բռն աշխարհաբար բայերից և ոչ մինը: Նոյն պէս և վէ վերջացած բայած ականներ կան գրաբարից փոխ առած. ոչու բարեկամ. Գովել վարդ, Կուտանյել վիճակ:

**Առանձին ոճավասվումէ եղ. կամ յոդ. էականով.** Քաշով էր: Տանող տառը էին: (Այսինքն՝ ամենքը շատապելով քաշում, տանումէին:)

3. **Անցեալ գերբայներից ած մասնիկ ունեցողները ածական կամ գոյական անուն են և բայ: Ածական են՝ երբ գոյականի հետ են և այն ժամանակ անփոփոխ են մնում. քաղցած մարդ: Կարդացած զիրքս: Պարտեզումը փնկած ծառերդ: Գոյական են՝ երբ մենակ մնացած են և ստացական կամ որոշեալ յօդ առնելով՝ հոլովվում են Ա. հոլովման պէս եղակի և յոդնակի. Ուղածոր ինչ է: Բոլոր տեսածները ու շտծները մէկ մէկ կը պատմեմ ձեզ: Ամէն օր պատմածները գրի է անցընում: Վերջապէս բայ է, երբ օժանդակ բայերով կազմումէ բաղադրեալ ժամանակներ, ինչպէս և միւս անցեալը՝ եւ:**

4. **Լու ապառնի գերբայը բաց ի բաղադրեալ ժամանակներ կազմելուց, վարվում է և իրրե ածական. ինչպէս. Հեռու է գնալու տեղերդ: — Երկար ու ձանձրալի կրլիներ խօսքը, եթէ ասէինք. Հեռու է այն տեղը՝ ուր գնալու էտ կամ պիտի գնալու:**

**Այս ընդհանուր տեղեկութիւններից յեայ հարկաւոր ենք համարում անորոշ և անցեալ գերբայների մի քանի մասնաւոր գործածութիւնների վրայ առանձին խօսել:**

### § 29 ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՑԻ ԳՈՐԾԱԾՈԹԻՒՆՅ:

1. **Անորոշ գերբայը երրեմն դիմաւոր բայի և մասնաւոր բապէս ստորագասականի տեղ է վարվում, երբ որ զիսաւոր բայի խնդիր չէ: ինչպէս. Հրամայեց բարեկամներին երեալ և մի դարման գննել: — Բայց տեղի սովորական է՝ Հրամայեց որ երեսն և գննեն: Երեանի բարբառի յատկութեամբ այս վերջին ձեւը շատ յածախ է երեւում, մանաւանդ որ շաղկապը զեղչուած. զորօրինակ. Աս չեմ ուզում բանը երկարացնեմ, թէ չէ նրանց արածն ու ասածն լսողի սիրար կ'երեն, կը փոթոթ են (Աբով).**

Ուր որ մենք կ'ասէինք՝ զեմ՝ ուղում՝ բանը երկրացնել, որովհետեւ այստեղ անորոշ դերբայը զլիսաւոր նախադասութեանքայի խնդիր է:

2. Կան բայեթ՝ որոնց մօտ անորոշ դերբայը լոկ ուղղակոն հողովով խնդիր է դրվում. կան էլ՝ որ տրական են պահանջում. ինչպէս բարեկամներդ կամենում են քեզ տեսնել: Ո՞վ կարող է երկնքի աստղերը համարել: Զուր է խօսել այն տեղ՝ ուր լոող չկայ: Քրիստոս աշխարհ եկաւ մարդկութիւնը գերութիւնից աղառելու: Վարժուեցէք, որքան հնար է, ուղիղ խօսելու: — Սովորութիւնը և լեզուի ճաշակը ցոյց են տալիս թէ որ տեղ մէկ հողովն է հարկաւոր գործ զնել, և որ տեղ միւսը: Աիսյն այսքանա կարող ենք իրեւ հաստատ ասել, որ ունաշողական բայի մօտ սովորաբար ուղղական է դրվում անորոշ գերբայը, իսկ շարժում կամ չգործում ցոյց տուող բայերի մօտ տրական:

3. Անորոշ դերբայի տրականը հասարակ ածականի պէս էլ է վարվում, և ցոյց է տալիս թէ մի առարկայ ինչի՝ պէտքական է, ինչ բանի յարմարութիւն ունի: Այսպէս ասում ենք՝ իմելու ջուր. Այսելու փայտ. Տեսնելու կամ տեսնուելու բաներ. Զուկ բռնելու գործիք. Ցորեն ցանելու արտեր: Ուղելու հաց դառն էր, և թոյն՝ իմելու ջուրս \*:

4. Անորոշ դերբայի գործիսկանը վարվում է դիմաւոր բայի տեղ, երբ հարկ է յայտնել զլիսաւոր նախադասութեան բայի գործողութեան մեջցը, պատճառութ, եղանակը և այլն: Մարդկա ճանապարհորդելով շատ բան է սովորում: (Ի՞նչ մի ջոցով էմ ինչ եղանակով մարդս շատ բան է սովորում: —

\* Անդիմերէն լողուն այս ձեզ գործ է գնում ներկայ դերբայով, որ բոլորակին մեր անորոշ դերբայի արականի միաքն ունի. այսպէս dining-room նշանակում է՝ ճաշելու ունեսակ, reading-room — կարդալու սենեսակ:

Ճանապարհորդելով: ) Երեխանց ապականում են՝ նրանց բոլոր ուշ զաձները կտպարելով: Զիտրողնելով հետաքրքրութիւնս զսպել՝ ներս մտայ: (Ինչի՞ համար իամ ինչ պատճառով ներս մտայ: — վասն զի չկարողացայ հետաքրքրութիւնս զսպել:) Մերոնց կողմից անօգնական հաւաքն ստիպուեցանք անձնատուր լինել: Աղեք սանդր Եփրատի այս կողմբ գանուած երկրներին տէր պատճառ գնաց Դարեհի վրայ:

5. Դիմաւոր բայի մօտ երբեմն դրվում է նոյն բայի անուրոշ դերբայը գործիական հովովով, խօսքին հաստատութիւն և սաստկութիւն տալու համար, Ակտէտ—բայց, Ակեւ—սակայն շաղկապներով պարզ դիմաւոր բայի տեղ. ինչպէս. Ռատելով ամէն բան ուտում է, բայց չէ կարող մարսել: (Այսինքն՝ թէ պէտ ուտում է, . . . .) Ցաւելով շատ եմ ցաւում, բայց հընար չունիմ օգնելու: Գնաւան կը գնաս, բայց տեղդ չես հանիլ:

Երբեմն նոյն մտքով ուղղական է մնում անորոշ դերբայը, յօդով կամ առանց յօդի. Տաւը տուի, բայց առնող չեղաւ: Խոսքանուշ շատերը խոստանում են, բայց ոչ ամէնքը կատարում են:

Թէ այս և թէ վերեի ձեր գործ են դրվում նաև անկախ նախադասութեան մէջ, այսինքն ուր Ակեւ—բայց շաղկապները չկան. Հիստարելով հրաժարում եմ այսպիսի անվայել գործողութիւնից: Մեռնիւ ամէնքս պիտի մեռնինք:

6. Անորոշ գերբայի ներգոյականը, բաց ի սովորական ուժ վերջաւորութիւնից, ունի և մի ուրիշ ձեւ լիս կամ աւելի ճիշդ իս, որ Երեանայ բարբառից սեպհականուած է և գործ է ածվում զլխաւորապէս երկրորդական ժամանակական նախադասութեան մէջ, երբ կամ ելք որ մակրայով դիմաւոր բայի տեղ: Զորօրինակ. Գիրք կորպալին՝ քունը տարաւ: (Այսինքն՝ երբ որ գիրք էր կարդում, քունը տարաւ. զրբը. յընթեռնուլն: ) Մի չնչին բան պատճենին՝ յուսահատվում եւ: Տուն դատանունին՝ անձրեւ սկսաւ:

Քընից զարթուելիս, կամ՝ քուն մտելիս՝  
Միշտ ձեզ կը յիշենք մենք աղօթելիս:

**Այս** նոր ձև ներգոյականի դիւրին է ծագումը որոշել։  
Տեսանք որ հին ոյ երկրարբառը, արմատական բառերի մէջ  
լինի թէ հոլովական վերջաւորութիւն, ընդհանրապէս ու է  
փոխվում։ միայն Երեանայ բարբառի մէջ սովորաբար է փոխա-  
վում, եթէ բառերի մէջն է. այնպէս որ գրոց (տեսանե) ըստ,  
չոր, չին անորոշ դերբայի հոլովական վերջաւորութիւնը ըս-  
տացական յօդերով՝ — որ ընդհանրապէս լուս, լուսն է դառ-  
նում —, այստեղ լիս միակերպ ձևով է երեսում, այսինքն թէ «  
յօդը դերբայից անբաժին եղած է և ամէն դէմքի տեղ վար-  
վում է անփոփոխ, եղակի և յոդնակի, ինչպէս որ վերևի օ-  
րինակներից էլ երեսում է»։

**Իսկ** անորոշ դերբայը ստացական յօդերով կանոնաւոր  
հոլոված՝ գործ է դրվում իբրև խնդիր բայերի մօտ։ Ամէնքս  
անհամբերութեամբ նորա Գուրուն էինք սպասում։ Խօնելուոր վը-  
րայ նեղացաւ։ Կամ նաև պէս նախազրութեամբ՝ զիմաւոր  
բայի տեղ, և նշանակում է անհիշտութեամբ։ Տեսնելուս պէս (հազեւ  
թէ տեսայ կամ տեսայ թէ չէ) ճանաչեցի նորան։ Գործդ ա-  
ռարկելուոր պէս ճանապարհ ընկիր։ Ներս հանելուն պէս մեծ պա-  
տուով ընդունուեցաւ։

### § 30. ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՑԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ։

1. **Անցեալ** դերբայը օժանդակ բայերով՝ այլ և այլ բառ  
զադրեալ ժամանակներ է կազմում։ Բայց երբեմն մենակ էլ  
բայի պաշտօն է վարում, անորոշ դերբայի գործիակաւ  
նի տեղ. ինչպէս. Ծերունու ձեռիցը բանած՝ փողոցներու մը ման  
էր գալիս։ Մայրը որդիքը հետն տառծ՝ եկեղեցի է գնում։ Գըլ-  
խաւոր խնդիրը Առաջած՝ ընչին բաների ետեւից էք ընկնում։ (Փո-  
խանակ՝ բանելով, տանելով, Առաջնելով։) Այս խօսքերն տառծ շատուծ՝

Հոգին աւանդեց: — Միտ դնելու է որ անցեաւ և ներկայ անունները, որ տալիս են ած և ու գերբայներին, միշտ Ճիշդ չեն: Անցեաւ գերբայը կարող է ներկայի և ապառնիի մոքով էլ վարուիլ, նոյնպէս և ներկան անցեալի ու ապառնիի մոքով: որ որոշվում է զլխաւոր նախադասութեան բայից, որին վերաբերում է գերբայը: Այսպէս վերեւի օրինակի մէջ՝ Մայրը որդիքը հետոն առաջ՝ եկեղեցի է զնում, — առաջ անցեալ գերբայը ներկայի միաք ունի, ինչպէս որ պարզ երեւում է զմիաւ որ նախադասութեան գոտում է բայից: Այսպէս դարձեալ՝ Ես նրան լոռջը չէմ տեղին նայելով՝ կարող է նշանակել չէմ լուս կամ չէմ լով, այսինքն թէ ներկայ և թէ ապառնի:

2. Յատուկ ձեռով անորոշ գերբայի տեղ անցեալն է վարչում երբեմն պէտք է զիմազուրկ բայով, խօսքին աւելի որոշութիւն և սաստկութիւն տալու համար զորօրինակ: Ի՞նչպէտք է արտօն: (=Ի՞նչ պէտք է անել): Մեղաւորը պէտք է պատժած: Միս չպէտք է կերտօն: Էսպէս բանի վրայ խօսողի ատամները պէտք է չորտած, որ խելքը զլուխը զայ: (Արով):

3. Անցեալ գերբայը ածականաբար վարուելիս կրաւուրականի մոքով՝ սովորաբար ներդորձականի ձեռով է դործ ածավում, այսինքն առանց ու մասնիկի, Գոյնզգոյն նէրիտծ տարբասներ: Նոր ժամանք զինի: Մի գեղեցիկ պարակղ տեսայ՝ տեսսակ տեսակ ծաղիներով զարդարած (վիտսանակ՝ քամուած, զարդարուած):

Տեսնում են քաջին զեանին պարածած,

Զըլոտ ձեռները ցամաք կարկամած:

4. Երբեմն անցեալ գերբայը անորոշի պէս վարվում է պէտ նախադրութեամբ: Այսպէս զրեթէ նոյն է ասել՝ Տուն հասնելը պէտ և Տուն հասածիս պէտ: Տեսնելը պէտ կը ճանաչես նրան և Տեսածիտ պէտ կը ճանաչես նրան: Միայն վերջին ձեռ զուցէ աւելի որոշեալ է: — Անորոշ և անցեալ գերբայի այս

զործածութիւնը մասնաւորապէս արևմահան զբաւորին յաւտուի է. թէ և արեկելեան բարբառներին էլ բոլորովին օտար չէ:

5. Ել անցեալ գերբայը օժանդակ բայի հետ կից է վարդում, ու երբէք մենակ չէ մնում և ոչ հողովում է: Խսկ սորահին ձեւը երբեմն ածականաբար վարդում է զբարարի հետեւողութեամբ. Անցէալ տարի: Հաստափացէալ ժողովու րդ: Նոյնողէս և հողոված՝ գոյականի մոքով. Նացեցէալն եկեղեցի տարան: Հանգուցէալի տունը զնացին:

## Է. ԱՆՓՈՓՈԽ ՄԱՍՈՒՆՔ-ԲԱՆԻ \*:

§ 31. ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ. — Մակբայը, ինչպէս անունից էլ երեւում է, զրվում է զըլշաւորապէս բայի վրայ և ցոյց է տալի դործողութեան այլ և այլ հանդամանքները. բայց և ածականի և նոյն խսկ մակբայի վրայ կարող է զրուիլ մակբայը. ինչպէս. Շուպով կը գամ: Այս մարդը շատ առատաձեռն է: Նա գլեթէ միշտ հիւանդ է:

Պատ կազմութեան մակբայները լինում են. բուն մակբայներ, գոյական մակբայներ, ածական մակբայներ, հողովական մակբայներ, գերանուանական մակբայներ և կրկնաւոր մակբայներ:

1. Բուն մակբայների մեջ պէտք է զանազանել արմատականները ածանցեալներից: Առաջինները շատ սակաւ են. այս, ոչ, ո՞ւ, ե՞րբ: Երկրորդները կազմում են այլ և այլ մասնիկներով. Երբեք, վաղաց, հայրաբար և այլն: Այս վերջինների կարգումը դասելու է այն մակբայները, որոնք զրոց լեզուից փոխառած են, հետեւաբար և նոյա ածանցմունքը միայն զբարա-

\* Անփոփոխ մասունք-բանի կոչում են, ինչպէս յայտնի է, Տաճառական բարերութեամբ, շաբաթակ ու Յաշուրբարեամբ: Բայց երկու առաջինների վերաբերութեամբ այս անունը ճիշդ չէ, որովհետև նոր լիզուում մակբայն ու նախազրութիւնը կարող են փոխակալ, ինչպէս որ չուտով կը տեսնք:

ըից յայտնի են. Դիւրաս, հաղիւ, հարիւս, ամենելն և այլն: Ահա  
մի քանի ուրիշ օրինակներ: Ո՞ւր դնացիք (Հայց. զրոց. նախղր.  
տր. մոքով): Ո՞ւր էք բնակվում (ներգ.): Ե՞րբ եկաք: Վառ թէ  
ուշ պէտք է սկսիք: Կանուխ հասան: Արդէն լոյս է: Եսի կամ  
նոյն և առաջ լսէ՛, յետոյ խօսէ՛: Երբէ՛տ ականջ չէ դնում: Երբէ՛ն  
դալիս է: — Ի՞նչպէ՞ս համաձայնեցաք: Զի՞ տունիք: Բանի պսաւ  
կեցին: Ակամոյ հնազանդեցաւ: Կամոյ ակամոյ մեր պահանջմունա  
քը կատարելու է: (Ե) Սիստին հասան: Կամաց դնացէք: Եղբայրները  
խօսիլ: Հարթակներ տեսնել:

2. Գոյականից առնուած մակրայները կարող են յօդ առանել և հոլովուիլ, եղակի և յոգնակի:

Տեղականները հոլովվում են Ա. հոլովման վրայ. Դուրս  
փախան: Ներս մտան, ներսը նստած էին: Բոցը ներսից երեկցաւ:  
Ա. երես դնաց: Վ. երեսից ջուր ածեցին: Ներքեակար ձգեցին: Ասու-  
ջնուանց կացան. և այլն:

Բաց ի սորանից շատ տեղական մակրայներ կազմվում են  
այլ և այլ դերանուններով և տեղ ու իտէ դոյականներով, այս  
պէս. ո՞ր տեղ, այս տեղ, այդ տեղ, այն տեղ, շատ տեղ, ո՞ւշտեղ, ամեն տեղ,  
մէջ տեղը: Եւ հոլոված՝ ո՞ր տեղից, կամ ո՞ր տեղաց, այս տեղից կամ  
այս տեղաց, մէջ տեղից: Նոյնպէս՝ ո՞ր հողմը. այս հողմը. այն հողմը, ամեն-  
չողմը և այլն:

Ժամանակականները հոլովվում են Գ. հոլովման պէս՝ մի  
այն եղակի բացառական: Երեկ եկաւ հասաւ: Երեկուանից սկը-  
սանք աշխատիլ: Այտօք կը տեսնեմ նորան: Եկուց զիւղ է գը-  
նալու: Հերու այս ժամանակ միրդ չկար: Ասուածառանից (առա-  
ւոտեանից) սպասում է քեզ: Ասուածառանից ամէն բան իմա-  
նում էին:

3. Ա. ծականները բայի վրայ ընկնելով՝ առանց որեիցէ  
փոփոխութիւն կրելու մակրայ են դառնում. Պարզ ասել. Ու-  
ղէջ դնալ. Խոր ընել. Կրանք լսել. Բարձր խօսիլ. Պարզերեն դուրս

դալ. կամ էերո գոյականի գործիական հոլովով. Խելացի էերո դործ կատարել: Գեղցին էերով պատմել: — Եթէ՞ սպասելու ենք: Անդորրակ պատճառներ է բերում: Շաբանակ խօսում էր:

4. Գոյական և ածական անունների հոլովներից կազմուած մակրայները վարվում են զլսաւորապէս գործիական և բացառական հոլովներով. վերջինս հին և միջին դարերի ձեւերով. Բարով եկաք: Սկրով կը կատարեմ ձեր խնդիրքը: Շատ յետ գարձիր: Շատ յետ եկաւ ու գնաց: Խրատամբ պատժուեցաւ: Վաղօրօտ կը հասնի: Օրով կամ յերեկով, գիշերով գնալ դալ: Արքանց աղօթումէ: Երեսանց իրան բարեկամմէ ցոյց տալիս: Հընուց սովորութիւն եղած էր: 'Ի ծնէ կոյր էր:

5. Գրաւոր լեզուի մէջ գործ գրուած գերանուանական մակրայները շատ սակաւեն: Այսպէս են այս, այդ, այն գերանուաներից՝ այսպէս (Էսպէս), այդպէս, այնպէս, որոնք և գործիական հոլովով են վարվում. այսպէսով, այդպէսով, այնպէսով: Խսկ առյն առյն գերանուաներից՝ այսպէս, այսպէս:

Բայց ժողովը գական բարբառներում կան բազմաթիւ գերանուանական մակրայներ, որոնք գրաւոր լեզուի մէջ մուտք չեն գտել: Այսպէս են՝ հօրէո, հօրէու, հօրէն կամ կրծատուած հըէն, հըէո, հըէու, որ համապատասխանում են գրոց տատիկ, տատիկ, տատիկ մակրայներին. Էստի, էստի (այսր, այդր կամ աստ, անդ, այս տեղ, այն տեղ): Էստէնց, էստէնց (միջին դարերի ուշն բառն է, որ արեմտեան հայերէնի մէջ երեսումէ ուն (Կողմ) ձեռով —ասդիէն անդիէն): Դէս օրից ուն (Dès ce jour là): Նոյնպէս և միասին ուն ուն ուն, ուն ուն ուն ուն (այսինքն՝ նոր էր մինել): Խայլ:

6. Ա եջապէս կան մակրայներ և մանաւ անդ գոյական և

ածական անուններ, որոնք կրկնութեամբ գործ են ածվում  
իրրե մտկայ, անփոփոխ կամ հոլոված զրաբարի ձևով։ Այս  
պէս են՝ և ամաց իտմաց շարժիլ. Շուտ շուտ առաջ դնալ. Յեպ  
յետ քաշու իլ. Քիչ տէլ խմել. Խումբ խումբ նստիլ. Դաս դաս  
բաժանուիլ. Կտոր կտոր անել. Մասր մասր կոտորել. Մեծ մեծ խօ-  
սիլ. — Վառ ՚ի վառ. Ծայրէ ՚ի ծայր. Դասնէ դասնը. Ծիկցօր վայր ՚ի  
վերոյ. Հոյրուհոյրաց. Հետպնետէ. Պէճ առ պէճ և այլն։

§ 32. ՆԱԽՍ.ԳՐՈՒԹԻՒԻՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ. — Ուրիշ  
տեղ տեսանք որ հին հոլովակերտ և հոլովառու նախադրու-  
թիւններից այսօր միայն վերջններն է ճանաչում լեզուն, և  
եթէ մէկ-երկու մակրայական և ուրիշ զուրցուածների մէջ  
մնացել են տակաւին մի քանի հոլովակերտ նախդիրներ, այդ շատ  
աննշան ու պատահական երկոյթներ են, որոնք այս խողիս  
մէջ ոչինչ կշիռ չունին \*։ Բայց հոլովակերտ նախդիրները որ  
հին լեզուին առանձին ոյժ ու գեղեցկութիւն են տալի, չե-  
ին կարող յանկարծ առանց մէկ սախպողական հարկի անյայտա-  
նալ այն հիման վրայ, որ լեզուի մէջ ամեն փոփոխութիւն ան-  
զգալի եղանակով ու որեիցէ հարկից սախպուած է լինում։  
Աղջէն մեր հին զրականութեան առաջին (Դ. և Ե) դարերում  
նախդիրները շատ անգամ երկրորդական պաշտօն էին վարում  
և աւելի լեզուի զարդն ու խաղն էին դառել քան թէ անհրա-

\* Նոյն խոկ այդպիսի տեղերում նախդիրն ոչ եթէ հոլով է կաղ-  
մում, այլ իրեւ մի աննշան մասնիկ է հանդիսանում բառից անբաժան,  
որ շատ անդամ դիբը և նոյն խոկ արտաքիրութիւնը փոխած է ժո-  
ղովրդի լազուի մէջ։ Այսպէս են օրինակի համար դարկվէր, դարեդուս  
քչել, օրէց օր, աարէց տարի (փոխանակ՝ օրէց յօր, տարէց ցարի).  
ուրիշ ասածն ականջվէր անիլ (ականջ ի վայր), փորբող ըլիլ (փոր  
և սող), մէկամէկ (մէկկմէկ), առնց (քան դ) և այլն, Ուրիշ են բառ ու-  
բառ, հետահետէ և այլ ձեերը, որոնք ուղղակի զրաբարից փոխ ա-  
ռած են։

Ժեշտ կարիք, և այս շատ լաւ երեսումէ այն դիբըից, որ նախողիքուները սկսել էին բռնել լեզուի մէջ, անդադար տեղափոխուելով, երբեմն վերանալով, երբեմն էլ տարագէտ կրկնուելով, որոնց օրինակները անսպակաս են: Այնուհետեւ բնական էր որ նախողիքները տեղի տային նախաղրութիւնների հեշտ գործածութեանը, իբրև շատ աւելի պարզ ու դիւրին միջոց բառերի մէջ եղած յարաբերութիւնները յայտնելու, այնպէս որ այն հինգ ժամանակներումն արգէն պատահումէ կարդալ 'ի մէջ սենեկին 'ի քջնորա, 'ի հրոյ մեջ ('ի սենեկին 'ի նմա, 'ի հուր): Գնէր զանձն իւր 'ի ներդրոյ տկարութեան. 'ի ներդրոյ արեգական (ըստ տկարութեամբ, ըստ արեգակամբ): Ծիծաղի 'ի վերայ նորա (վնովաւ) և այլն: Զգօն զիրք: Զզջացաւ 'ի վերայ մեզաց իւրոց ('ի մեզս իւր). Բուզանդ: Հեծուցեալ 'ի վերայ նժուզի ('ի նժուզի). Փարագեցի: Նոյնպէս պատահումնեն այլ և այլ հոլով պահանջող նախաղրութիւնը ներ պարզ յատկացուցչի և յատկացեալի պէս դործ դրած, ինչ պէս մենք անում ենք այսօր. Գետոյ պէս սահի (սրբէն պիետ. Յունին պէս. 'ի համար ժետ կարոյ. Դ. Անյաղթ: 'ի հարդոյ պէսն խօսելոյ (իբրև զմարդ). Բուզանդ: Մեք 'իսեղիա նոյն պատուաստեցաք (փրկուատէ կամ ըստ): Զգօն զիրք:

Բայց աւելի ուշագրութեան արժանի է հոլովակերտ նախողիքների գեղջուիլը այնտեղ ուր խօսքի խմաստը պահանջումէ նախողիքը գործ գնել, ինչպէս որ յաճախ փոխանակ չըլ, չորտացնուածել ածել փոխանակ զառաջեաւ ածել: Մի ինչ խնդրեր յինէն պատուապէլոյս ('ի տառապէլոյս): 'ի խաչ ել երեք ծամաս (զերեք ժամաւն): Զարմանալի է մանաւ անդ որոշեալ հայցականը աննախողիք թողած. Ասոն փորձ քաջութեան և զու առեր (փոխանակ զառնն): Զարբէ ընդդիմացեալ՝ գուադն գեռ կազմէր. Փարագեցի: Նոյն արիւնն լափեցին շունք. Զգօն: Բաղնաշ գտնչո ընչից նոյն յաւարի տանեին (որ կարող է այսպէս էլ մեկնուիլ՝ բազում գանձս յընչեց նոցա). Բուզանդ:

Այս բոլորը բաւական պարզ ցոյց է տալիս որ նախղիրա ների վերանալը լեզուից նոր երևոյթ չէ, այլ նոյն իսկ հինգրաւոր լեզուի կազմուելու դարերու մն է սկսում, ինչպէս որ բերումէր անշուշտ նոյն ժամանակի կենդանի լեզուն։ Եւ թէ պէտ ոսկի գարու ընտիր մատենագրները ամէն ջանք ու ծիգ թափեցին լեզուի այս գեղեցիկ զարդը հաստատ պահելու, բայց յաջորդ (Ը—ՃԳ) գարերի գրողները իրանց սխալ գործածութիւններովը \* ակն յայտնի ցոյց են տալիս, թէ անհընարին է հաստատուն պահել այն՝ որ կենդանի լեզուն իրեւաւելորդ բեռն դուրս ձգած էր։

Այս հայերէնին գալով՝ տեսնում ենք որ նախադրութիւնները երեք զլսաւոր տեսակի են բաժանվում. բուն նախադրութիւններ և գոյականից ու մակրայից առնուած նախադրութիւններ։

1. Բուն նախադրութիւնները տրական հոլովով խնդիր են պահանջում. և գասվում են ոմանք յետադաս, ոմանք էլ նախադաս. ինչպէս. Այս գրերը ձեզ համտը են; Ում հետ տեսնուեցաք: Եղբայրդ մեզ Տօֆ է: Թող ուզածիդ Պէտ լինի: Ինձ չո՞չ չզիւտեն: (Կան գրողներ սեռականով՝ Ֆեր համար Յեր մօտ, Յեր պէս:) Զեր գործին համեմտիք: Բազմութեան պահանջմունքին հոկտոսակ: — Առանց ինձ չգնաք: Փոխանո՞նէ օտարին տալու: Դէռի մեզ են դալիս:

Եթէ մնան, ունուե նախադրութիւնների խնդիրը գոյական է կամ անորոշ դերբայ, հայցական է զրվում (զրոց նախադրիւ տրականի մաքով). Մինչեւ ձեր Գուլը, մինչեւ Գիշեր սպասեցինք: Գնացին դէպ ՚ի առան:

Բայց ՚ի պահանջում է բացառական հոլով. Ամէնքը

\* Օրինակներ պակաս չեն. Երթալ է Հեկ (այսինքն՝ զջրոյ). Ծոփի հարկանել (ծափ ոծափի). Յանձնի հարկանիլ (զամօթի). Բուռն հար հար (զնամանէ), և այլն։

թողին զնացին բաց 'ի նէչանից ու գեղանից: — Սորա տեղ ժողով վրդական բարբառներում՝ գործ է ածվում զարդն 'ի, որ համապատասխանում է արևմտեան բարբառների զար նախաղըռութեանը. զարդն 'ի էս, զարդն 'ի էն. — ասկէ զար, անկէ զար:

Իսկ ելլու ամէն հոլովերով խնդիր կարող է առնել խօսքի իմաստին նայելով. ելլու բարեկամ, բարեկամի, բարեկամից, բարեկամով:

2. **Գոյականից** առնուած նախաղըռութիւնները իրանցից առաջ սեռական հոլով են պահանջում, և կարող են յօդ առնել ու հոլովուիլ. այսպէս. Տան մէջ, տան մէջէ, տան մէջն, տան մէջնը, տան մէջով, տան մէջուն. Տան մէջէնը, տան մէջնը, տան մէջն լից այլն: — Քաղաքի մէջ բնակել. Ծառի տունի տունից ջուր է բջնում: Պարսպի վրայից ցած եկան: Կամքջի վրայովն անցկացանք. և այլն: Կամ լոկ ստացական յօդով փոխանակ իմ, ո՞ւ և այլն ստացական գերանունների՝ Տակն, առաջդր, դէմք, առաջներս, առաջներին, մէջներդ, մէջներիցդ, վերեւներովը և այլն:

3. **Մակրայից** առնուած նախաղըռութիւնները իրանց առաջ բացառական հոլովով խնդիր են պահանջում. Խօսելուց տառաջ պէտք է մտածել: Ճաշից յեպ սովորութիւննունի հանգստանալու: Ձեզնից յեպ մնաց: Օգուտից տեւելի ոչ ինչ վնաս չկրեց: Ամէն բանից հետու է փախչում: Այն օրից դէռև անձրև չեկաւ (զրբը. յայնմ օրէ հետէ). և այլն:

§ 33. ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ. — Մինչև այժմ խօսեցանք բառերի կաղմութեան, փոփոխութեան և համաձայնութեան վրայ ամբողջ նախաղասութեան մէջ: Մնաց մէկ—երկու խօսք ասելու շաղկապների վրայ, որոնց պաշտօնն է միաւորել կամ կապել նախաղասութիւնները միմեանց հետ:

Հայ բարբառների ամենասովորական շաղկապները ըստ

մեծի մասին օտար (արևելեան) լեզուներից սեպհականուած են, իսկ բուն հայերէն շաղկապները կամ մոռացութեան տուած և կամ օտարների հետ միասին գործ գրուած գանում ենք: Այսպէս են օրինակի համար՝ ամա (բայց), շունչի (վանդլի), համ (լեռ' . . . լեռ'), եռ' . . . եռ' . . . ո՞ն . . . ո՞ն (խմ' . . . խմ') և այլն, որոնց տեղ երկու կողմի գրագէտները միաբանում են գուտ հայերէն ձևերը գործ գնելու, շատը հին լեզուից փոխ առնելով: Գրուածքիս նպատակից գուրս համարելով շաղկապների ամբողջ ցանկը մէջ բերել, բաւականանանք միայն միքանի կարենոր դիտողութիւններ անելով ամենագործ ծածական շաղկապների վրայ:

1. Եւ, ու. — Այս շաղկապները լնդհանրապէս նոյնաշնչան են. բայց տեղկայ որ աւելի մէկն է գործ ածվում, և տեղ կայ որ միւսը:

1) Եւ շակապը սովորաբար նախադասութիւն նախագասութեան հետ կապում է, իսկ ու շաղկապը բառ բառի հետ, ինչպէս. Բազմութիւնը դիմեց քաղաքից գուրս, և այր ու իին, մեծ ու փոքր անհամբերութեամբ սպասում էին դիմաւորելու իշխանին:

2) Ու շաղկապը գործ է ածվում մանաւանդ և յօդով բառերի հետ. Մարդն ու կենդանին. Զեռն ու ոտք. Օգտակարըն ու զուարձալին:

3) Մի ևնոյն բայը կրկնուելով՝ ու շաղկապով կապվում է, գործողութեան կրկնութիւնը կամ շարունակ աւելողութիւնը յայտնելու համար, այսպէս. Պարապ նստած՝ խօսում է ու խօսում: Խեղճերը չելո՞ն ու չերտո՞ն մինչև լաւ կշատացան: Գնոց ու գնոց: Փախտո՞ն ու փախտո՞ն. և այլն:

2. Թա՛կ և ով շաղկապները շատ անգամ միմեանց տեղ կարող են վարուիլ. բայց

1) Առհասարակ սահմ. եղանակի հետ լէ է վարվում,

ստորադասականի հետ ով ինչպէս, խոստացաւ Աէ կը գայ, կը տեսնէ մեզ: — Խոստացաւ ով գայ, տեսնէ մեզ:

2) Եւ, այլ շաղկապներից յետոյ, ուր զիսաւոր նախագասութեան բայը զօրութեամբ է իմացվում, Աէ շաղկապ է զրվում, թէ և խօսքը ով շաղկապով սկսած լինի. ինչպէս. Ճըշմարիտ է ով ամենակատաղի դադամներն անդամ՝ կերակրում են իրանց ձագերը, և Աէ մօր պէս հոգում են նոցա բոլոր պիտոյըը: (Այսինքն՝ Ճշմարիտ է ով մօր պէս . . . . :)

3) ՈՒ շաղկապը շատ անդամ էր թ, ԵԱԷ, ուր, որպէս ուն, ծանութիւնութեամբ բառերի տեղ է զրվում. զորօրինակ, Այժմ ով բուքը դործերգ աւարտել ես, կարող ես ճանապարհ ընկնիլ: Մարդ ով հաստատամութեամբ աշխատի, միշտ իր նպատակին կը հասնի: Զգոյշ կաց ով չխարուիս: Սպասում եմ ով լուսանայ:

4) Անունից և էական բայից կազմուած անդէմ նախագասութեան մէջ էական բայը շատ անդամ զեղչվում է ով շաղկապից առաջ, ինչպէս. Զարմանկը ով մինչեւ այժմ ոչինչ լուր չունինք նորանից: Լաւ ով դու ել եկար: Ճշմարիտ ով այդպէսէ:

ՈՒ շաղկապի աւելագրութեամբ կազմվում են նոր ձեւ զերանուններ. Ուստի, ինչ ով, որո՞ն ով, — մակրայներ. Երբ ով, ուստի ով, մինչեւ ով, չտնի ով, ոյսպէս ով, և այլն. — շաղկապներ. Զե՞ս, Աէ ով, ԵԱԷ ով, բառական ով, ճանապահով ով, և այլն:

6) Այսպէս և Աէ շաղկապը երբեմն աւելորդ զրվում է իրեւ զարդ. Հառլեւ Աէ, Գուցէ Աէ, Հոմ Աէ, այսինքն Աէ, և այլն: Բայց երբեմն բայերի և ուրիշ բառերի հետ առանձին շաղկապների ձեւեր է կազմում և այնժամ Աէ չէ կարող գուրս ձգուիլ. Կարծես Աէ, իտքեւն է Աէ, Առող Աէ, իբր Աէ, որպէս Աէ, և այլն:

3. Զորս շաղկապ կայ, որոնք կրկնութեամբ վարվում են հետպհետէ յաջորդող բառերի վրայ. Ո՛չ—ո՛չ, Աէ—Աէ, իո՞մ—իո՞մ, Եւ—Եւ. միայն վերջին երկուոր կարող են և

չկրկնուիլ։ Զորօրինակ։ Տեսէք երկնքի թռչունները։ Նոքա ոչ  
ցանումեն և ոչ հնձում (կամ ոչ եւ հնձում)։ Աշխարհիս ԱՌ  
հարստութիւնը ԱՌ մեծութիւնը, ԱՌ պատիւը և ԱՌ վայելչու-  
թիւնները անցաւոր են։ Կամ պարտքը կը հատուցանէ, և իամ  
բանդ կ'երթայ։ Կը տեսնեմ հօրդ իամ մօրդ։ — Որինակների-  
ցըս երևումէ որ վերջին շաղկապի հետ և շաղկապ դործ է  
դրվում։

4. **Մի** և նոյն շաղկապը դասաւորութեանը նայելով՝ այլ  
և այլ նշանակութիւն կարողէ ունենալ։ Այսպէս և, եւ շաղ-  
կապները, եթէ կրկնուած վարուին, ԱՌ . . . ԱՌ շաղկապ-  
ների զօրութիւն ունին։ Անօգնական մնացինք և ես, և դու,  
կամ ես եւ, դու եւ։ Նոյն եւ (որի հին ձեւն է այլ) շաղկապ է, եթէ  
յետադաս վարուի, և մակրայ՝ եթէ նախադաս։ Տեսայ եւ, ճա-  
նաչեցի եւ։ — Եւ չտեսայ ձեր տասած մարդուն։ Այսպէս և հե-  
տեւեալ օրինակի մէջ։ Գնանք քանի որ դեռ լոյս է։ — Քանի բան  
որ սկսեց, ոչինչ յաջողութիւն չդտաւ։ — Նոյնը պէտք է հաս-  
կանալ միւս շաղկապների համար։

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

§ §

ԵՐԵՄ.

Յառաջարան . . . . . 1—7

## Ա. ՀԱՅԻՒՄՆԵՐ և բառեր:

1 ՀԱՅԻՒՄՆԵՐԻ յատկութիւնները . . . . .	8
2 Բառերի յատկութիւնները . . . . .	12

## Բ. Գոյական Անուն:

3 Հոլով և հոլովումն . . . . .	22
4 Առաջին հոլովում . . . . .	27
5 Երկրորդ հոլովում . . . . .	29
6 Երրորդ հոլովում . . . . .	30
7 Գիտելիք հոլովելիք վրայ . . . . .	33
8 Որոշեալ և անորոշ յօդ . . . . .	38
9 Գոյական անուան գործածութիւնը նախաղասութեան մէջ . . . . .	44

## Գ. Ածական և թուական անուններ:

10 Ածական անունների գործածութիւնը . . . . .	50
11 Թուականների գործածութիւնը . . . . .	52

## Դ. Դերանուն:

12 Դերանունների տեսակները . . . . .	54
13 Էական դերանունների հոլովումն ու զործածութիւնը . .	55
14 Ցուցական դերանունների հոլովումը և զործածութիւնը .	58
15 Ստացական դերանունների հոլովումը և զործածութիւնը .	60
16 Հարցական դերանունների գործածութիւնը . . . . .	62
17 Յարաբերական դերանուան գործածութիւնը . . . . .	63
18 Որոշեալ և անորոշ դերանունների գործածութիւնը . . . . .	65

19 Բայի եղանակներն ու ժամանակները . . . . .	67
20 Առաջին լծորդութիւն . . . . .	77
21 Երկրորդ լծորդութիւն . . . . .	79
22 Երրորդ լծորդութիւն . . . . .	87
23 Չորրորդ լծորդութիւն . . . . .	82
24 Կրաւորական բայեր . . . . .	83
25 Բացասական բայեր . . . . .	85
26 Գիտելիք բայերի վրայ . . . . .	88
27 Բայի ժամանակների գործածութիւնը . . . . .	94

## Զ. Դերբայ:

28 Գերբայների նշանակութիւնը . . . . .	102
29 Անորոշ գերբայի գործածութիւնը . . . . .	104
30 Անցեալ գերբայի գործածութիւնը . . . . .	107

## Է. Անփոփխ մասունք - բանի:

31 Մակրայների կազմութիւնն ու գործածութիւնը . . . . .	109
32 Նախաղրութիւնների գործածութիւնը . . . . .	112
33 Շաղկատների գործածութիւնը . . . . .	115

Եղանակների համար պահանջմանը՝ 21  
 Եղանակների և նախաղրութիւնների մասին՝ 22  
 Եղանակների և նախաղրութիւնների մասին՝ 23  
 Եղանակների և նախաղրութիւնների մասին՝ 24  
 Եղանակների և նախաղրութիւնների մասին՝ 25  
 Եղանակների և նախաղրութիւնների մասին՝ 26



1188

ՀՀ Ազգային գրադարան



NL0348143

